



« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբագրան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՛մ, հոգին չճարգմանէր , չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցումս մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

Բ Ա Յ Ո Ւ Ա Մ Է



Ա Ն Ա Ն Ի Տ Ի



ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻԻՆԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ՊԷՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼ

1907

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

1907

ՎԱԹՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Բազմալիկ, հանդէս Հայկական Ճեմարանի, նուիրուած ազգային գիտութեանց, գեղեցիկ դպրութեանց, հայկական այժմէութիւններու, կը ներկայացնէ Բանաստեղծութիւններ եւ Թղթակցութիւններ՝ Հայոց պատմութեան, մատենագրութեան, գեղարուեստներու մասին. գրական բաժնին մէջ՝ Քնարերգութիւններ, Թատրերգութիւններ, Վեպեր. նորութեանց բաժնին մէջ՝ տեղեկութիւններ նորագոյն գրքերու, հանդէսներու, ղէպքերու մասին: Իր նպատակն է բարձրացնել հայ ժողովուրդը՝ Գիտութեամբ, Գեղարուեստով, լրակատար գիտակցութեամբ իր Անցելուն եւ իր Դարուն: Գինն է ֆր. 10, տուար՝ 2, րուպի՛ 4: Գիմել ուսումնական թղթակցութեանց համար. Rédaction de la Revue Bazmavep. բաժանորդագրութեան համար.

Imprimerie Arménienne — St. Lazar Venise (Italie)

ԼՂՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅ ՔՆԱՐ

LES TROUVÈRES ARMÉNIENS

Traduction française

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

AVEC UNE INTRODUCTION

Չայնագրեց եւ դաշնակեց



ԿՈՐԵՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

par

ARCHAG TCHOBANIAN

Գին 10 ֆրանկ

Գինն է 3 ֆր. 50

Գինել ուղղոյները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին .

Գինել ուղղոյները պէտք է դիմեն՝

Monsieur E. Demetz

Librairie du Mercure de France

2, Rue de Levois, Paris

26, Rue de Condé, Paris

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Թ. ՏԱՐԻ 1907

ՅՆՍ. - ՅԼՍ. - ՕԳՈՍ. ՍԵՊՏ.

Թիւ 6-7-8-9

Նահապետ Քուչակի շուրջ

(Արփիւրեանի յօդուածին առթիւ)

Գիրակի յօդուածին շարունակութեանը մէջ, իմ հատորէս անցնելով նոյն ինքն Քուչակին, Արփիւրեան կը յայտնէ անոր մասին քանի մը կարծիքներ, որոնք սխալ են կամ սխալախառն: « Կը փափաքինք, կ'ըսէ, (Նորայրի) հատորին մէջ ամփոփուած տեսել նաեւ Ակնայ այն բանաստեղծութիւնները որոնք ընդհանուր կոչմամբ « Անտունի » կը յորջորջուին: . . . Անկարելի է « Քուչակեան » մը « Անտունականէ » մը զատել. ու թերեւս Անտունն ու Քուչակը միեւնոյն անձնաւորութիւնները (անձնաւորութիւնը՝ ըսել կ'ուզէ) ըլլան. մէկը՝ իսկական անունը, միւսը՝ գրական ծածկանուն »: Եւ Արփիւրեան կը կարծէ թէ « Անտունի »ն կը նշանակէ ոչ թէ « անտուն »ի, « զարիւր »ի երգ, այլ Անտուն անունով աշուղի մը երգ. եւ Նահապետ Քուչակը կ'ըլլայ իսկոյն՝ իր մատնորուն տակ՝ Անտուն Քուչակ . . . :

Նախ, « Անտունի »ին մէջ Անտուն մը տեսնելը « կանթեղ »ը « կայ անդ եղ »ով բացատրելուն կը նմանի. շատ աւելի հաւանական է

« անտունի »ն « պանդուխտի երգ »ով մեկնելը, որովհետեւ ամենամեծ մասամբ զարիւրի երգեր են անտունի ըսուածները. ու կարելի է ենթադրել թէ նախ եւ առջ՝ « անտունի »ն միմիայն պանդուխտի զգացումները կը թարգմանէր, եւ յետոյ՝ իբր քերթողական ու երաժշտական շատ սիրուած ձև մը, գործածուած է նաեւ ուրիշ զգացումներու ալ — սիրային, եւն. — արտայայտութեան: Ըսեմ՝ անցողակի՝ որ այդ « անտունի »ն « Անտուն »ով բացատրելը — ինչպէս եւ զարիւրի երգ մեկնութիւնը — շատ հին է. Ճանիկեան յիշած է երկու մեկնութիւններն ալ, երրորդի մը հետ՝ որ է « բանաստեղծութիւն մը որ տուններու չէ բաժնուած »: Ճանիկեան երեք մեկնութիւնները յիշած է, առանց իր կողմէ նախասիրութիւն մը ցոյց տալու անոնցմէ մէկին:

Իսկ Քուչակի վերագրուած երգերուն ու Ակնայ « անտունիներուն » նոյն հեղինակի գործ ըլլալու ենթադրութիւնը զոր Արփիւրեան մէջտեղ կը նետէ՝ աներկբայ ապահովութեամբ մը, իր կարծածէն շատ աւելի կնճռոտ, փափուկ, զժուարալուծելի հարց մըն է եւ մեզ ուղղակի կ'առաջնորդէ Քուչակի անձին, սպրած տեղին ու թուականին ճշգրտան ամենաշահեկան ու դեռ շատ մութ մնացած խնդրոյն:

Մէկ բան մը պայծառ է այդ խաւարին մէջ. Քուչակի վերագրուած այդ բանաստեղծութիւնները Ակնայ Հայութեան ծնունդ են. լեզուն, զարձուածքները, պատկերները, զգայնութեան

որակն ու շեշտը, միայն Ակնայ ժողովրդական երգերուն մէջ կը վերագտնենք. մինչեւ իսկ կը գտնենք Քուչակի վերագրուած տաղիկներէն ոմանք գրեթէ ամբողջութեամբ, ու անոնցմէ բազմաթիւ տողեր մերթ նոյնութեամբ, մերթ շատ մօտիկ ձեւով՝ Ակնայ ժողովրդական երգերուն մէջ զոր հաւաքած է Ճանիկեան. ասիկա լիովին կ'ապացուցանէ Քուչակի վերագրուած տաղերուն Ակնայ ծնունդ ըլլալը, բայց չ'ապացուցանեն որ այդ որոշ շարքը եւ Ճանիկեանի հատորին մէջ կամ այլ հատորներու մէջ ամփոփուած բոլոր անտունիները միեւնոյն հեղինակին պործն ըլլան: Հոր, արդէն ամէն բան անորոշ է. վարկածներու մշուշին մէջ ենք, ու ամենամեծ զգուշութիւն պէտք է՝ ճշմարտութեան քիչ շատ մօտենալու համար:

Մինչեւ իսկ ոչ մէկ « վճռական » ապացոյց ունինք թէ Քուչակի վերագրուած տաղիկներուն հեղինակը իրօք Նահապետ Քուչակ կը կոչուէր: Ուրիշ յենակէտ չունինք ատոր համար՝ բայց եթէ Արիստակէս Վ. Տէվկանցի Հայերգին յառաջաբանին սա տողը. « Այս « Ծովական գիշերն ի բուն » երգը, Նահապետ վարպետ Քուչակինն է, որ օրինակուած է Ռ.Ա. (1583) ի Սերաստիա եւ նոյն օրինակէն հանած է կրկին ՌճՂԷ (1746) թուին Պետրոս երէցն: » Ինչի՞ վրայ հիմնուելով Տէվկանց այդ տաղաշարքը վերագրած է Նահապետ Քուչակին. եթէ ձեռագիրը որմէ քաղած է այդ տաղաշարքը, այդ անունը պարունակէր որոշապէս յիշուած իբր հեղինակ, Տէվկանց այդ կարեւոր մանրամասնութիւնը անշուշտ կը նշանակէր: Դիտելի է որ Քուչակի վերագրուած տաղիկները պարունակող ցարդ մեղի ծանօթ « բոլոր » ձեռագիրները ոչ մէկ հեղինակի անուն չեն տար այդ տաղիկներուն. անանուն ժողովրդական երգերու պէս արձանագրուած են անոնք:

Աւետարանի մը յիշատակարանը, զոր մէջ կը բերէ Տէվկանց, կը պարունակէ Նահապետ Քուչակի անունը բայց ոչ մէկ որոշ լոյս կը սփռէ այս հարցին վրայ. « . . . Քուչակ անուն բարի մտական որ ստացող եղև սորան. Յիշեցէք զՔուչակ եւ միւս կենակից Թանգխաթունըն: Դարձեալ յիշեցէք զՔուչակ եւ զմեծ պապն իւր Նահապետ վարպետն, որ մականունն աչըղ Քուչակ ասի: Դարձեալ յիշեցէք որ ստացաւ

զսա եւ ետ ի դուռն Սուրբ Թէոդորոս զօրավարին, ի ձեռն տէր Մելքիսեթին . . . յիշեցէք զվերջին ստացող սորա, որ ստացաւ ի հալալ ընչից իւրոց Քուչակն, ի թուին Հայոց 1637. Եւ ես Ստեփանոս Զուղայեցի Նախաշ երէցս հանդիպեցայ Խարակոնիս: » Եթէ այս յիշատակարանը ամբողջապէս՝ բաց ի « Եւ ես Ստեփանոս, եւն. » վերջին տողէն՝ գրուած է միեւնոյն անձին ձեռքով, կարելի է հետեւեցնել — ինչպէս կ'ընէ Պ. Կոստանեան, — թէ զայն գրողն է Քուչակ մը, որ գներ է այդ աւետարանը եւ նուիրեր է Ս. Թէոդորոս եկեղեցւոյն եւ որ կը խնդրէ ընթերցողներէն որ յիշին իր մեծ պապը Նահապետ վարպետը որ աչըղ Քուչակ անունով ծանօթ է. իսկ Զուղայեցի Ստեփանոս անուն երէց մը, 1637էն յետոյ, Խարակոնիսի մէջ — Թերեւս Ս. Թէոդորոս եկեղեցին Խարակոնիսի մէջ ըլլայ — հանդիպեր է այդ աւետարանին եւ աւելցուցեր է իր տողը: Այդ հաշուով, ինչպէս կ'ընէ Կոստանեան, եթէ Նահապետ Քուչակը այս յիշատակարանը 1637ին գրող Քուչակին « մեծ պապն է », այսինքն պապին պապը, կամ գէթ պապին հայրը, ուրեմն այդ Նահապետ Քուչակը Ժ.Զ. դարուն սկիզբները ապրած ըլլալու է:

Յայտնի է որ Վանայ մէջ ապրած է Քուչակ անուն աշուղ մը, որուն գերեզմանն իսկ ցարդ կայ Խարակոնիս, ինչպէս կը հաստատէ Տէվկանց. ասիկա իրողութիւն մըն է: Թերեւս Տէվկանց այդ Խարակոնիսի մէջ հանգչող Քուչակին վերագրած է այդ տաղիկները, նկատելով անոնց մէջ մէկ քանի կտորներ որոնց նման լաներ զեռ կ'երգուին Վանայ շրջակայքը:

Ահա քանի մը կտորներ, զոր գտած եմ Շէրենցի « Վանայ սագ »-ին առաջին հատորին մէջ.

Մեր իյգիյն դիմաց ձեր իյգիւն,
Քիւն կամագ մարդու գլխուն.

Ես՝ զիս ա՛ն քեօ ծոցիկ, անեմ անուշ քուն,
Ես՝ տաստուր տուր, երթամ իմ խօր տուն:

Ոչ քէյ կ'աննեմ իմ ծոց՝ անես անուշ քիւն,
Ոչ տաստուր կուտամ էրթաս քեօ խօր տուն.
Քէյ անչափ կը պախեմ սոխում էրէրում,
Զիւմ կեայ լեոս առաւրտուն:

Առաւտուն քեյ պախչէն տանիմ ,
Վարդ քաղեմ շաղերն ի վերէն ,
Անչամ էն վարդով քեո երես զանեմ ,
Չիւմ վարդաջրով երեսդ լուանամ :

Էս վո՛վ ի , էս մըթան , էս գիշերին ,
Որ եկան նըստան վեր էրտսին .
էրտիս բացին , ճիկ-վիկ արին ,
Իմ սիրտս ու միտըս խըլցին .

— Թէ վարդ ես , հոտըդ ո՛ւր է ,
Թէ շուշան ծաղիկ , բունըդ ո՛ւր է .
Վարդ բիւլբիւլովն է շէն ու շէնիկ ,
Շուշան ծաղիկ ուր հոտովն անուշիկ :

— Ոչ վարդ եմ որ վեր գամ ,
Ոչ շուշան ծաղիկ որ հոտ տամ .
Ձիկ ծիծեռնիկ էնիւ պիտէր ,
Ձեր էրտիսն ի վեր որ բուն դընէր :

Առաւտըման ժամ որ կը զարնէր՝
Ճըլվըլ անի , քընուց վեր հանի .
Ձէնդ անուշ էր , քունդ անուշ ,
Սիրտդ անմեղ , Թըշերդ նըման նուշ(1) :

Ասոնք կը վերագտնենք Քուչակի վերագրուած տաղերուն մէջ՝ սա ձեւով :

Իմ եա՛ր , դու յերգիկն ի քուն , ծոցըդ լոյս
տայր աստըղներուն .
Կամ ա՛ն զիս ծոցըդ ի քուն , կամ տէսթուր
տուր երթամ ի տուն .

— Ոչ կ՛անունում ի ծոցս ի քուն , ոչ տէսթուր
տամ երթաս ի տուն .
Հանցեղ երերուն պահեմ՝ մինչեւ գայ լոյսն
առաւօտուն :

(1) Այս տաղերուն մէջ Շէրենց բառերը գրած է ըստ Չանեցեոց արտասանութեան (խօր=հօր , պախեմ=պահեմ , սոխում=սահուն , քիւն=քուն , ևն.) : — Երկրորդ տաղը կը պարունակէ երկու ժողովրդական երգ , կամ գէթ երկու ուրոյն մոթիֆ՝ իրար միացած : Վերջին մոթիֆը Շէրենցի հատորին մէջ ուրիշ տեղ մըն ալ կ'երևայ՝ սա ձեւով .

Ձի խաւք ծիծեռնակ պիտէր , գիյ (գայի) քեո
էրտիս պէոն (բուն) դնի ,
Ցերեկ ելումուտ անի , գիշերը քեո ծոց ծվարի :

Այդ ո՛վ է որ երգիքս եկել որ օտար հողըն
կու սորայ ,
Թէ իմն ես նէ վար արի , Թէ օտար ծաղիկ՝ նա
գընա՛ :
— Ոչ քուկըն եմ ի վար գալ , ոչ լերան ծաղիկ
գընալու ,
Եկեր եմ սիրուդ առեր , ոչ գալու եմ ոչ գը-
նալու(1) :

Ես ձագ ծիծեռնիկ պիտէի , զօրն ըզքո տուն
մըտնուի ,
Ոն բարձրը մօյտան չարտախդ ես ի հոն բուն
շինէի .
Ոնց որ մուծըն մըթանայր , ցածնայի ծոցըդ
մըտնուի .
Ոնց որ լուսըն լուսանայր , բարձրանայի բունս
մըտնուի .
Եւս ապըշըմէ խուշախ , զօրն զքո միջաց գիրկ
ածէի ,
Կամ քաղցը նըռան գինի , զօրն ըզքո փար-
ջըդ պիտէի ,
Առնիր ու բերնիդ դընիր , ցածնայի դունչըդ
պագնէի ,
Կամ ապըշըմէ կոճակ , որ շընիցըդ գիրկ
ածէի(2) :

(1) Այս բառեակը Ս. Ղազարու Թ. Ղազարու Թ. 1671 ձեռագրէն է բաղուած . « Հայերգ »-ին մէջ կայ վարխանն մը՝ սա ձեւով .
Դու ո՛վ ես որ յերգիկդ ես ելեր , զայդ օտար
հողըդ կու կոխես .
Թէ վարդ ես նէ՛ վար եկո՛ , Թէ օտար ծաղիկ՝
նա գընա՛ :
Ոչ վարդ եմ ի վար գալու , 'ւ ոչ օտար ծա-
ղիկ՝ գընալու .
Եկեր եմ սիրուդ առեր , ոչ գալու եմ ոչ գը-
նալու :

(2) Այս վերջին չորս տողերը Ս. Ղազարու 1761 ձեռագրին մէկ ուրիշ մասին մէջ կը գտնուին նաև սա ձեւով , որ լուսագոյն է և զոր պէտք էր նախընտրած ըլլայի հատորիս մէջ , ինչպէս նախընտրեցի ֆրանսերէն Թարգմանութեան մէջ .

Ես շարէ շապիկ պիտէի , զօրն ի բուն անձրդ
կենայի ,
Կամ ապըշըմէ կոճկիկ որ շընիցըդ գիրկ
ածէի .
Կամ ջուր կամ նըռան գինի , զօրն ի բուն
կըթխադ կենայի ,
Առնիր ու բերնիդ դընիր , ցածնայի դունչըդ
պագնէի :

Նկատելի է նախ որ եթէ գաղափարները նոյն են, ձեւն ու լեզուն արդէն շատ տարբեր են Վանայ երգերուն ու Քուչակեան սաղերուն մէջ: Ու այդ երեք «գաղափարներ»ուն թէ՛ Քուչակի եւ թէ՛ Վանայ երգերուն մէջ գտնուիլը շատ դիւրաւ կը բացատրուի ըստ իս այն հանգամանքով որ այդ երեքն ալ հայ ժողովրդական բանաստեղծութեան ամենատարածուած — եւ հաւանօրէն ամենահին — մոթիֆներէն են. ուրիշ տաղ մը, զոր հրատարակած եմ արդէն Անուհիսի մէջ(1), աւելի ընդլայնուած ձեւով կը պարունակէ Եւ ձագ ծիծեռնիկին գաղափարը. դեռ շատ ձեռագիրներու մէջ, եւ շատ գաւառներու ժողովրդական երգերուն մէջ՝ հաւաքական է որ պիտի գտնուին այդ հին երգին վարիանքները: Իսկ միւս երկուքը տասը քսան տեղ գտած եմ այն ժողովրդական անանուն երգերուն մէջ՝ արեւելեան Հայութեան այլեւայլ գաւառներու, զոր Պ. Լալայիանց հրատարակած է իր «Ազգագրական Հանդէս»ին մէջ: Ատոնց մին կը գտնուի նաեւ՝ արդէն՝ Ակնայ երգերուն մէջ՝ սա ձեւով.

Ատ ո՞վ է ատ երգիքդ եկեր ատ օտար հողդդ կը կոխէ.
 Թէ մարդ էս նը՝ վար եկու, Թը (Թէ) շուշան ծաղիկ՝ գընալու.
 — Ուչ (ոչ) մարդ եմ ի վար գալու, ուչ (ոչ) շուշան ծաղիկ՝ գընալու:
 Պիւպիւ եմ ի ժուռ գալու, շատ երամ ունիմ գընալու.
 Երթամ շատ երկիր անցնիմ՝ շատ խարիպ տեսնեմ մէն ի քուն.
 Ամենուն խարիպն է քուն, իմ ու քու խարիպն է արթուն:

Նահապետ Քուչակի վերագրուած սաղերուն եւ Ակնայ ժողովրդական երգերուն մէջ ինամութիւնը շատ աւելի սերտ է եւ ընդարձակ. մեծ է նմանութիւնը լեզուի, ոճի, դարձուածքներու, տաղաչափութեան. եւ մեծ քանակութեամբ կը գտնուին տուներ, տողեր որ կը տեսնուին երկուքին ալ մէջ, եւ միայն այդ երկու շարքերուն մէջ: Պ. Արփիար-

(1) Անահիսի այս Թիւին մէջ վերստին կը հրատարակեմ այդ տաղը:

եան, որ Քուչակի բանաստեղծութեան Ակնայ երգերուն հետ ունեցած արեւակցութիւնը իբր նորութիւն մը մէջտեղ կը նետէ, պէտք էր չըմտնար որ իմ հատորիս յառաջարանին մէջ էս արդէն գրած եմ. «Տէվկանց չի բացատրեր թէ ինչո՞ւ Խարակոնիսցի կը համարի Նահապետ Քուչակը. անտեղ թաղուած ըլլալը պատճառ մը չէ որ այնտեղ ծնած ըլլայ հարկաւորաբար. (եւ Քուչակի լեզուն, երգերուն մեծամասնութեանը մէջ, աւելի Ակնայ բարբառին կը մօտենայ քան Վանայ բարբառին, եւ երգերն իսկ իրենց խել մը ձեւերովն ու պատկերներովը Ակնայ ժողովրդական երգերուն շատ կը նմանին, այնպէս որ անկարելի չէ ենթադրել որ Քուչակ Ակնցի էր թերեւս ու Հայաստանի այլեւայլ կողմերը պտրտելէ յետոյ իր կեանքին վերջին մասը Խարակոնիս անցուցած ըլլայ»): Այսքանը միայն նկատած եմ ուսումնասիրութեանս մէջ, եւ այդ հարցը աւելի մանրամասնօրէն չեմ քննած՝ երկու պատճառով. նախ՝ որովհետեւ իմ միակ նպատակս ըլլալով այդ հրաշալի բանաստեղծութիւնը «երեւան հանել» եւ անցեալին մէջ սիրոյ «մեծ երգիչ» մը ունեցած ըլլալին շեշտել, չէի ուզեր՝ այդ պահուն՝ երգչին անձին առեղծուածով չափազանց զբաղիլ. անհրաժեշտը, ստիպողականը՝ «մարդ» մը, Քուչակ մը, մեծ աղուոր դէմք մը ցոյց տայն էր ազգին. — ետքի գործ էր քննել ու ճշգեղ թէ ո՞ր դարուն է ապրած, ո՞ր գաւառին մէջ, եւնա երկրորդ, եթէ այդ հարցով ամենայն մանրամասնութեամբ զբաղէի, Քուչակի երգերուն եւ Ակնայ երգերուն բաղդատական ուսումնասիրութիւնն ընէի, եւ հրատարակէի միայնգամայն քանի մը ուրիշ անտիպ տողիւմաններ ալ՝ զոր ունէի Քուչակի երգերուն հետ կապ ունեցող, 25-30 էջ պիտի աւելնար հատորիս վրայ, եւ ես անագին նեղութեամբ հազիւ թէ կարողացայ միջոցներ գտնել հրատարակելու այդ հատորը՝ ինչպէս որ էր: Պէտք է ըսեմ նաեւ որ եթէ նոյն իսկ զբաղէի այդ հարցով, քիչ կէտի վրայ կարելի պիտի ըլլար վերջնական եզրակացութեան մը յանգիլ. եւ այսօր իսկ, ուր առիթը կը ներկայանայ այդ հարցը մանրամասնօրէն քննելու, շատ քիչ բան աւելցած է՝ առեղծուածը լուսաւորող: Այդ «քիչ բան»ը կը վերածուի տաղի մը մէջ զոր գտայ երկու տարի առաջ Փարիզի «Ազգ. Մա-

անհաղարանին» մէջ, տաղ մը որ որոշապէս կը կրէ «Վանցի Քուչակ»ի մը, կամ աւելի ճիշդը «Քօչէկ»ի մը անունը:

Այդ տաղը, զոր կը հրատարակեմ այս թիւ շին մէջ, ոչ լեզուի, ոչ ներշնչման, ոչ տաղանդի տեսակէտով՝ նմանութիւն ունի մեր Քուչակին տաղերուն հետ. միջակէ վեր դասուելու արժանի բանաստեղծութիւն մըն է՝ ուր կան շատ մը կրկնութիւններու, բանագրօտութիւններու եւ տափակութիւններու հետ քանի մը շատ գեղեցիկ տողեր. զրուած է գրաբար՝ աշուղերէնի բազմաթիւ տարրերու խառնուրդով: Հեղինակն է (տաղին մէջ իսկ անունը կայ) «Աշղ Քօչէկ» կամ «Քէօչէկ» որ կ'ասեն ի Վան՝ (այսինքն՝ որ Վանայ մէջ հանրածանօթ է): Այդ անունով — կամ կեղծանունով — աշուղ մը ուրեմն անտարակուսելի կերպով գոյութիւն ունեցած է Վանայ մէջ, եւ ան է որ թաղուած է Խարակոնիս. այս տաղը զոր հրմէ ունինք, կրօնական ներշնչումով տողորուած է, եւ հաւանական է որ այդ Վանցի աշուղին գործերն ընդհանրապէս միատիքական նկարագիր ունէին. եւ ատով կը բացատրուի որ այդ աշուղին գերեզմանը ուխտատեղի մը դարձած ըլլայ, ինչպէս կը հաւաստէ Տէվկանց: Բայց այդ Վանցի Քօչէկը ինքզինքը կը կոչէ միմիայն «Քօչէկ» կամ «Քէօչէկ» եւ ոչ թէ «Նահապետ Քուչակ». արդ, ըստ Տէվկանցի Խարակոնիսի մէջ հանգչող բանաստեղծը կը կոչուի Նահապետ Քուչակ, եւ հոն կը հանգչի իր թողան հետ՝ որ նոյնպէս աշուղ եղած է՝ Քուչակ անունով: Միւս կողմէ Ալիշան իր Յուշիկներուն մէջ կը յիշէ Քուչակ անունով աշուղի մը անուն. «Այս ԺԶ. դարուն մէջ ծաղկած են նաեւ երգիչք կամ տաղասացք, Մկրտիչ Տարօնցի . . . Քուչաք Հառկուանցի»: Հայերը տպուած է 1883ին, Յուշիկները տպուած են Տէվկանցի Հայերգէն 14 տարի պուշ: Ուրեմն Ալիշան այդ անունը քաղած է ոչ թէ Տէվկանցէն այլ ուրիշ աղբիւրէ մը: Գիտելի է որ Ալիշանի մօտ բանաստեղծին Նահապետ անունը չէ յիշուած, այլ միայն Քուչաք, կոչուած իր ծննդավայրին անունով՝ Հառկուանցի. Նորայր (մասնաւոր նամակ) կը կարծէ թէ Հառկուան եւ Խարակոնիս նոյն բանն են. հաւանական է բայց այն ատեն Ալիշանի

Քուչակը Վանցի Քուչակը միայն կրնայ ըլլալ որ Խարակոնիս կը հանգչի, եւ ոչ մեր փնտած Քուչակը: Գիտնալու է թէ ո՞ւր գտած է Ալիշան այդ Քուչաք Հառկուանցի անունը. ձեռագիրներու մէջ՝ հաւանականաբար: Յաւայի է որ չգուշակելով թէ այդ անունը օր մը ո՞րքան հետաքրքրական պիտի դառնար՝ ոչ մէկ մանրամասնութիւն նշանակած է այդ մասին: Եւ Նորայր կ'ըսէ եղեր՝ ըստ Արփիարեանի՝ թէ Խարակոնիս անունով գիւղ մըն ալ կայ Ակնայ մօտ: Այ՛ բոլորը գեո ուրիշ բան չէ բայց եթէ տարտամութեան մէջ տարտամութիւն:

Կայ նաեւ «Քուչակ» կամ «Քօչէկ» ձեւերուն տարբերութեան հարցը. Տեվկանցի մօտ անունը կ'երեւայ «Քուչակ». իսկ Ասատուածածնայ ուղղուած տաղին մէջ զոր կը հրատարակեմ այս թիւով, շանաստեղծը ինքզինքը կ'անուանէ Քէօչէկ: Բայց ասիկա դիւրաւուծելի կնճիռ մը կը թուի ինձի. Ակնցիներուն Հընդկաստանէն եկած ըլլալը ապացուցանելու համար. Արփիարեան Ակնը Ակնիով բացատրելէ յետոյ, «Քուչակ»ն ալ սանսքրիթ բառէ մը ծագած կը նկատէր որ կը նշանակէ «մաքրամաքուր»(1). ուսումնասիրութեանս մէջ ես ենթադրած էի որ «քուչակ» բառը թրքերէն «քէօչէկ»ին հայացումն ըլլայ. այս ձեռագիրը կը հաստատէ ենթադրութիւնս. ժողովուրդը այդ բառը մերթ հայացած ձեւովը գործածեր է՝ քուչակ, մերթ բուն թրքերէն ձեւովը՝ քէօչէկ. հոս՝ օրինակիչը «աշղի Քէօչէկ» գրեր է փոխանակ «աշուղ Քուչակ»ի, եւ նոյն ատեն կէս հայացած ձեւ մը՝ Քօչէկ:

Կայ վերջապէս «թող Քուչակ»ի հարց մը: Տէվկանց կ'ըսէ թէ Նահապետ վարպետը Խարակոնիսի մէջ կը հանգչի իր թողան հետ՝ որ նմանապէս աշուղ էր: Կայ տաղ մը «Գուզալ մ'ես յերէկ տեսայ» որուն վերջին տան մէջ բանաստեղծը ինքզինքը կ'անուանէ «Քուչաք

(1) Ակնօր ու Քուչակօր սանսքրիթով բացատրելէ յետոյ, Արփիարեան կը շարունակէ. «Եւ ուրիշ անուններ ալ ինչպէս Կարուշլա, Չարազ, Լիճք, Կամրկապ, են, որոնց իմաստը անիմանալի է, պիտի մեկնուին սանսքրիթով: «Լիճք», Կամրկապ (Կամարակապ) հայերէն բառեր են շատ «իմանալի» և հանրածանօթ, ինչ հարկ սանսքրիթը անհանգիստ ընել:

Վանեցի» . « Հայերգ »ին մէջ Տէվկանց գայն հրատարակած է՝ իբր գործ « Թոռ Քուչակ »ին . բայց Քամառ-Քաթիպայի « Ազգային երգարան »ին մէջ , որ « Հայերգ »էն առաջ (1836ին) ըոյս տեսած է , այդ նոյն տաղը հրատարակուած է մանրամասնութեանց մէջ բաւական մեծ տարբերութիւններով ու մանաւանդ բոլորովին տարբեր վերջաբանով մը ուր հեղինակն ինքզինքը կը կոչէ ոչ թէ Քուչակ այլ Սարկաւազ : Իր « Միջնադարեան Հայոց տաղերու ժողովածու »ին Բ. պրակին մէջ , Պ. Կոստանեանց « Թոռ Քուչակ »ին կը վերագրէ այդ տաղը . « Նահապետի Թոռը Քուչակ Վանեցին , որ՝ ինչպէս տեսանք՝ ապրել է ժէ . դարում , երգել է « Գուզալ մ'ես յերէկ տեսայ » երգը » : Ես կը կարծեմ թէ այդ տաղը աւելի հաւանականութեամբ կարելի է վերագրել Բերդակեցի Սարկաւազին քան Վանեցի Քուչակին . այդ Սարկաւազէն ունինք սիրուն գովք մը խաղողի :

Խաղող , ըզբեզ գովել պիտի ,
 Բոլոր պտղովդ ես հաւասար .
 Զի դու միայն ես գեղեցիկ ,
 Ամէն պտղոց Թագ ու ըղվար :

Այդ տաղին մէջ Սարկաւազը , եկեղեցւոյ մարդ ըլլալով հանդերձ , ինքզինքը չի կրնար բռնել եւ հիացական պաշտումի տողերով կը դրուատէ գինին պարգեւող բարերար պտուղը . էն վերջը՝ յիշելով իր կրօնաւորի հանգամանքը՝ կ'ուզէ սքօղել իր գինեսիրութիւնը՝ միստիքական — յայտնապէս կարկատուն — երեւոյթ մը տալով անոր .

Ո՛վ Սարկաւազ Բերդակացի ,
 Գու ի գինւոյն ի՞նչ շահեցար .
 Այնչափ ունիս սէր հետ գինւոյ ,
 Որ գովեցիր սրտովդ յօժար .

Գէմ ես չունիմ գինւոյ կարիք ,
 Ես բաժակին եմ խզմաթքեար .
 Ես ըզբաժակըն գովեցի
 Որ մեր հոգուն է լուսարար :

Այս միեւնոյն հոգեբանութիւնը , ու նոյն ոստոստուն , սիրուն , կէս-կատակաբան կէս-

քնարերգական ոճը , նոյն լեզուն՝ կը գտնենք նաեւ այս « Գուզալ մ'ես երէկ տեսայ »ին մէջ (1) : Յետոյ , վերջաբանի երկու վարիանթներէն՝ Սարկաւազ անունը կրողը շատ աւելի կը նոյնանայ ու կը ձուլուի տաղին հետ՝ իբր նոյն հեղինակի գրչէն ելած՝ քան « Քուչակ » անունը կրողը : Ահա՛ այս վերջինը .

Ես Քուչաքս եմ Վանեցի , ի գեղէն Խառակօնիսայ ,
 Լըցեր եմ հարիւր տարին , էլ չի գար մտքիկս ի վերայ .
 Ով ինձ ողորմի ասի , ողջ կենայ ուր կենայ ի վերայ : (2)

Տաղը , կրակուրոց սիրոյ երգ մը , հարիւր տարեկան մարդու գործ չի կրնար ըլլալ . Վանցի Քուչակը պէտք է գրի առած ըլլայ ուրիշ մը այդ տաղը գոր հաւանօրէն բիրնուց երգած էր շատ անգամ , եւ քանի մը տուն ալ աւելցուցած է , — անհամ , կրօնական — տուներ , ուր կը յիշուին Ս. Յակոբայ ուխտատեղին , Տրդատ , Ս. Գրիգոր , Երուսաղէմ եւ Էջմիածին , ամբողջ 18 տողով կտոր մը որ նախորդ մասին հետ շատ չի կապուիր եւ որուն տեղ՝ Քամառ-Քաթիպայի հրատարակութեան մէջ՝ կը գտնուի 6 տողով կտոր մը՝ մասամբ նման՝ եւ ամբողջութեան հետ աւելի ներդաշնակ : Ինքն իսկ Վանցի Քուչակը

(1) Այդ տաղը , որուն համար շատ անարդար եղած եմ Քուչակի հատորիս յառաջաբանին մէջ , ուր արդէն ես ալ՝ հետեւելով Պ. Կոստանեանցին՝ գայն ընդունած եմ իբր գործ Թոռ Քուչակի , առանց հասնելու մեր Ակնցի Քուչակին նրբանուրբ ու փափկաճաշակ բանաստեղծութեան , ինքնուրոյն հրապոյրով ու Թեժե շնորհով լեցուն շահեկան էջ մըն է : Այն պահուն ուր այդ խիստ տողերը կը գրէի , չափազանց շլացած ու գինովցած էի (և շատ հասկանալի է) մեր Քուչակին անզուգական գեղեցկութեամբը , որ սքօղեց աչքէս այս տաղին յատուկ արժանիքը , ինչպէս և նոյն իսկ Յրիկի « Գանգատ »ին մեծ արժանիքը : Յրիկի բեր-
 Թուածին նկատմամբ գործած անարդարութիւնս արդէն դարմանած եմ լիովին , այսօր կը դարմանեմ անարդարութիւնս հանդէպ Բերդակեցի Սարկաւազին :

(2) Կոստանեանց հրատարակած է իւրաքանչիւր տողը երկու տողի վերածուած . այդ տաղը գրուած է 7—8 կամ 7—3—5 ասղաչափութեամբ . վերջին տողին վերջին մասը՝ ուր կենայ ի վերայ՝ աղաւաղում մը պէտք է պարունակէ :

կ'ըսէ արդէն՝ « Էլ չի գար մոքիկս ի վերայ », ինչ որ ցոյց կուտայ թէ այդ երգը բերնուց գիտցուած բան մըն է զոր կ'ուզէ գրի առնել, — եւ՝ կտորին վերջերը, երբ՝ ծերութենէն՝ ալ յիշողութիւնը տկարացած կը զգայ՝ փոխելով ու աւելցնելով կը փոխարինէ ինչ որ չի յիշեր: Իսկ ահա Սարկաւազի վերջաբանը .

Սարկաւազ՝ ստղ բանիս, յինքնէս խիստ աւատացայ .
 Զայս քաղաքներս ամէն կիւզէի մի տըւի ճապա .
 Երբոր սէրըն գայ մարդուն, ոչ մանուկ ասէ ոչ տըղայ,
 Ոչ աշխարհական կ'ասէ, ոչ երէց (ու) ոչ հաբեղայ :

Մանկունք, մի՛ մեղադրէք, սէ՛րըն արաւ զիս տիվանայ .
 Զայսչափ քաղաքներս ամէն կիւզէի մի ճորտ ու ծառայ :
 Աժէ ինչ որ տուաք, եղբարք, կիւզէի իսկի գին չըկայ .
 Նա կիւզէն որ զքեզ սիրէ, գիտգիտ տուր՝ աչերդ ի վերայ :

Այստեղ՝ հեղինակն արդէն որոշ կ'անուանէ ինքզինքը « ստղ բանիս » . եւ վերջաբանին բոլոր խօսքերը կը կապուին տաղին մէջ յայտնուած զգացումներուն ու պատկերներուն հետ, եւ կ'ամփոփեն զանոնք . արդարեւ՝ ամբողջ տաղը ծայրայեղ գովք մըն է « կիւզէլ » ի մը, զոր բանաստեղծը՝ կը բաղդատէ աշխարհիս ամենագեղեցիկ քաղաքներուն հետ եւ աւելի գեղեցիկ, աւելի թանկագին, աւելի հզօր կը գտնէ զէնիկա՝ ի վերջոյ կը յիշէ իր կրօնականի հանգամանքը՝ ճիշդ ինչպէս « խաղողի գովք » ին մէջ, բայց հոս համարձակօրէն կ'արդարացնէ ինքզինքը՝ « մանկունք, մի՛ մեղադրէք, սէրն արաւ զիս տիվանայ » : Ինծի համար ուրեմն ստոյգ կը թուի որ այս տաղը Սարկաւազ Բերդակեցիինն է եւ կապ չունի ո եւ է Քուչակի հետ, ոչ վանեցիին, ոչ Ակնցիին, ոչ թոռան եւ ոչ պապուն:

Այս բոլորը հետո է վերջնական ու լիակատար տեղեկութիւն մը տալ կարենալէ մեզ զբազնցնող տաղերու հեղինակին վրայ : Առ այժմ, ուրիշ բան կարելի չէ ընել՝ ծանօթ տարբերով՝ բայց եթէ ներկայացող այլեւալ վար-

կածներուն մէջէն նշանակել հաւանականագոյնները: Քանք Ակնայ ժողովրդական երգերուն ու Քուչակեան տաղաչարքին բաղդատեկան քրննութեան, եւ տեսնենք թէ ատկից ի՞նչ լոյս կրնանք ստանալ :

Այդ երկու շարքերուն արենակցութիւնը անժխտելի, ակներեւ բան մըն է, ինչպէս ըսիլիզուի այնպիսի մասնայատկութիւններ կան Քուչակեան տաղերուն մէջ որ միմիայն Ակնայ ժողովրդական բարբառին մէջ կը գտնուին. օրինակներ շատ կարելի էր տալ. կը շատանամ յիշելով շատ յատկանշական « լուկ » ը կամ « լօք » ը որ միմիայն Քուչակի տաղերուն մէջ կայ գործածուած, ո՛չ « լուկ » (միմիայն) իմաստով, այլ իբր շեշտող աւելորդ վանկ (ոուսահայոց «խօ» ին նման) կամ իբր հոմանիշ «եւ» շաղկապին .

Արեկ լուկ առջեւս նցիր, լօֆ քալե՛ քալըդ համբոյլ (Քուչակ)

Նոյնը Ակնայ կանանց լիզուին մէջ .

Հիծիլի երբամ նը՝ ուեր կը մնամ յիւկ (Ճանիկեան, Հնուքիւնի Ակնայ) :

Տաղաչարքութիւնն ալ նոյնն է, թէ՛ Ակնայ անտունիներուն, եւ թէ՛ Քուչակի տաղերուն մէջ : Իրաւ է թէ այդ տաղաչարքութիւնը կը գտնուի նաեւ Նարեկացւոյ « վերագրուած » « Քոհար վարդըն վառ առեալ » տաղին, Պուզի « երկունս ի մէկտեղ բերած » խրատական տաղաչարքին եւ այլ քանի մը կտորներու մէջ որ Ակնայ ծնունդ չեն . բայց վերջապէս այն պարագան որ այդ տաղաչարքութիւնը տարամերժօրէն կը տիրէ թէ Ակնայ բոլոր անտունիներուն եւ թէ՛ Քուչակի բոլոր տաղերուն մէջ, նշանակելի կէտ մըն է՝ արենակցութիւնը շեշտող :

Նոյնն է այդ տաղաչարքութիւնը Քուչակի եւ անտունիներուն մէջ, բայց թէ ի՞նչ են իր որոշ կանոնները, գծուարայուծելի հարց մըն է: Նորայր կը բաժնէ Քուչակեան սողերը 7—Յ—Տ, եւ արդարեւ այդպէս կրնան բաժնուիլ . բայց կրնան նաեւ բաժնուիլ երկու մեծ հատուածի, 7—Տ, եւ աւելի քաղցրալուր է, լայն ու ծիւռն ներդաշնակութիւն մը յառաջ կը բերէ տաղերուն ընթերցումն այդպէսով, քան 7—Յ—Տով, որ կաղ

եւ անախորժ կշռութիւն մը կուտայ : Վերջին պահուն, այս ուսումնասիրութիւնս ըրած միջոցիս, կը նկատեմ որ այդ տողերը — բաց ի սակաւաթիւ բացառութիւններէ՝ թերեւս օրինակիչներու խաթարմանց արդիւնք, — կրնան նաեւ բաժնուիլ 5—5—5, եւ՝ այսպէս բաժնուած՝ շիշտերը շատ լաւ կ'իյնան իւրաքանչիւր հատածի վերջին վանկին վրայ : Ահա՛ օրինակ մը .

Ո՛ր էիր, ո՛րսկից — եկար, անծանօթ,— ըզիս սիրեցիր,
 Կըրակն ի թեզնի՛քդ — ունիր, ի ծոցի՛դ (ի ծոցիս պիտի ըլլայ) — ի վար թափեցիր .
 Քո սէրդ ալ ոսկի՛ — արիբ, իմ սրտիս — քուրան հալեցիր,
 Գարծար զան հալխայ՝ — արիբ ՚ւիմ սրտիս — ականջն անցուցիր :

Ոճի, դարձուածքներու, պատկերներու, տողաշինութեան հանգիստութիւնը շատ մեծ է, ու մանաւանդ հանգիստութիւնը զգայնութեան տեսակի ֆան Ակնայ երգերուն մէջ կտորներ որոնց գաղափարը՝ աւելի կամ նուազ մօտիկ ձեւով կը գտնուի նաեւ Բուշակի մէջ, իսկ շատ կան երկտողեր, տողեր, կիսատողեր, պատկերներ, դարձուածքներ, բացատրութիւններ որոնք երկու շարքին մէջ ալ կը գտնուին. ահա՛ օրինակներ .

Խմեր եմ ու չեմ գինով, ես կ'երիմ ու չեմ կրակով.
 Հագեր եմ սիրու շապիկ՝ աղւորին դուռը կայնելու .
 Աղւոր մ'ալ ներսէն ի դուրս, ծոցն ի լի կարմիր խնձորով .
 Բսի թը՛ Հատ մի առնեմ, թունտ ելաւ՝ թուխ աչքն ի լալու .
 Լացաւ ու լալով ըսաւ . « Եա՛ր, զիս խաղք ըրիբ ցորեկով .
 Բռնեցիր զորով ճորով, պագ մ'առիբ հազար նազերով .
 Ան մէկ ցորեկուան պագը ուր (որ) կ'արժէ հազար գիշերուան :
 (Ակնայ երգ)

Փողոցովդ ի վար կուգի՛ ծուռումուռ հազար սօխախով,
 Իմ եարս ինձ դէմքս ելաւ՝ լօք բարով երեստ հէճապով .

Գիրկ ածի ու պինդ պագի զիր աչքերն ի խիստ կարօտով,
 Կ'երթար ու կ'ասէր լալով, թէ « ի խաղք եղաք ցորեկով : »
 (Բուշակ)

Աս գիշեր մինչի լուսացաւ, ես երկու խանդալ մանեցի,
 Իմ եարն ալ ուր (որ) միտքս ինկաւ, թէզ մ'ելայ ջահլս կործեցի,
 Գցի (գացի) իմ եարին դուռը, ձիւն եկեր՝ ոտուիս կու մըսի . »
 Իմ եարն ալ ի դուրս եկաւ թը՛ « Բարի՛ եկիր, իմ հոգին,
 Եկու գիրկուծոց անենք, ուր (որ) ոտքուդ մաղկատը անցնի : »
 (Ակնայ երգ)

Այս ծովական գիշերս ի բուն՝ ես երկու շրջան մանեցի,
 Խօշ եարս ալ ի միտս ընկաւ՝ թէզ մ'ելայ զջահրաս վերուցի .
 Փարջիկ մ'ալ անուշ գինի առի խօշ եարիս դուռն գնացի .
 « Խօշ եար, ա՛մ, ըզդուռն բաց, ձիւն եկեր ոտուիս կու մըսի : »
 (Բուշակ)

Էուսընկայ, քեզ չեմ սիրեր, խոռեր ես ու խոռ կունայիս .
 Ես արեգակ սիրեմ, կու ցածէ ալէմս արունատ :
 (Ակնայ երգ)

Ես երկու եար կու սիրեմ, չեմ գիտեր թէ հաւնիմ որո՛ւն,
 Մէկն է ի լուսին նըման, մէկ նըման է բարկ արեւուն .
 Էուսի՛ն, ես քեզ չեմ սիրել, դու սովոր ես խոռ կենալու,
 Արե՛ւ, ըզքեզ կու սիրեմ, որ ծագիս հետ լուսանալուն :
 (Բուշակ)

Ան առաւօտուն յուսուն, մէլիւեր մարիկդ ու կուլայ . . .
 (Ակնայ երգ)

Ան առաւօտուն յուսուն՝ ձայնըն գայ գարնան ծագերուն . . .
 (Բուշակ)

Այ իմ աննըման նըման, չէր բերեր Վնըրը քու
նըման .

Ուչ մարն է բերեր նըման, ուչ արեւ ու ոչ
լուսընկան .
(Ակնայ երգ)

Այ իմ աննըման, մարըն չէ բերեր քեզ նըման...
(Քուչակ)

Իմ սէր ու առջի բարի, իմ հազար տարուան
սիրելի . . .
(Ակնայ երգ)

Իմ սէր և իմ առջի բարի, իմ սիրած և իմ
սրտին ուզած . . .
(Քուչակ)

Ծոցիկ (պէտք է ըլլայ «ծոցիկը») Աղամայ
պախճան, մէջէն պաղ աղբիւր կու բղխայ.
(Ակնայ երգ)

Քու ծոցը Աղամայ դըրախտ, մտնուի խընծոր
քաղէի .
(Քուչակ)

Կարմիր ու ճերմակ երես, մազդ երեսդ ի վար
կուբերես ,
(Ակնայ երգ)

Կարմիր ու ճերմակ երես, քանի՛ մի զիմ սիրտս
արունես . . .
(Քուչակ)

Եկին ու բերին խապար, թուռնա ելեր քու եարն
ու կուգայ .

Ամէն բան ի դան դըրի, ջուր դըրի մազըս լը-
լացի ,
(Ակնայ երգ)

Եկին ու բերին խապար թէ ելեր քո եարն ու
կուգայ .

Եկէք մեք ի դէմ երթանք, եւն .
(Քուչակ)

Այվան ու ծառին ճըղին, սիրտն է սեւ երեսն
դեղին .

Էրնէկ խնձորին ծառին, իր ծառին եւ իր տե-
րեւին .

Գիտեմ դուն զոր դեղ ունիս, բեր տուր որ ես
լաւանամ ,

Թը տաս՝ երթամ լաւանամ, թը չը տաս՝ եր-
թամ մեռանիմ .

Թը չը տաս՝ երթամ մեռանիմ, քեզ ալ կան-
չեմ մարդասպան ,
(Ակնայ երգ)

Խնձորն ի ծառին ճըղին, ի ճըղին ներքեւ
տերեւին . . .

Ասցին թէ դուն դեղ ունիս, տուր ինձի որ
կենդանանամ .

Թէ չէ կն՞՞ մեռնիմ գընամ, գան ասե՛ն քեզ
մարդասպան :
(Քուչակ)

Կարմիր վարդ կանանչ թուփով, կանանչ
թուփ կարմիր խնձորով .
Քանի՛ մնամ քեզ ապով քանի՞ մ'երիմ կրակով .
Տի սիրե՛ս, սիրէ՛ սրտով . կշտացեր եմ սուտ
խաբելով :
(Ակնայ երգ)

Կարմիր վարդ կանանչ թուփով, կանանչ թուփ
կարմիր խնձորով ,
Քանի՛ լամ ու գքեզ ուզեմ զարթըցնեմ ոգոց
հանելով .

Թէ դու կը սիրես սրտովդ, ինձ ասա՛, ես եմ
կարօտով ,
Թէ չես ի սիրել սրտով, սուրբ Սարգիս և Աստ-
ուած քեզ խըռով :
(Քուչակ)

Կարմիր ու ճերմակ հարսնուկ, չորանաս թը
իս մոռանաս ,
Չորանաս փուտ ուռի դառնաս թը ծոցիկըդ
մարդու բանաս ,
Ծոցիկդ ուր մարդու բանաս, տ'անիծեմ ուր
քար դառնաս :
(Ակնայ երգ)

Հա՛յ իմ մազդ ուռի մորճիկ, չորանա՛ս թէ իս
մոռանաս .

Փուտ ու ճիճվի կեր դառնաս թէ ծոցիկդ այլ
մարդու բանաս .

Ահա քեզ գիշեր կուգայ, եւն .
(Քուչակ)

Հագեր ես կանանչ կարմիր, նըռան հատը
կու մանիս .

Կայներ ես դըռան վրայ, բարձրը նայիս, բա-
րակ ծիծաղիս .

Աջօք ու յուսօք կ'անես, իմ մանուկ իւելքս
կու տանիս .

Կ'անցնիս Թուխ ամպին ետին, ամպը քով կ'անես ' և իս կ'երես :
(Ակնայ երգ)

Կարմիր ու կանանչ հագնիս, զէտ նըռան հատիղ նըմանիս ,
Այնժամ ինձ աղւոր Թըլիս երբ ի ձեր դուռըն կանգընիս ,
Դուռն ալ կիսաբաց անես , ցած հայիս մանտըր ծիծաղիս ,
Աչօք ունովըդ անես, զիմ տխմար խելքըս կուտանիս :
(Քուչակ)

Իբնամ ու գընամ կ'ըսեմ, ես կ'երթամ, Բարով մընացէք .
Ծաղիկ մ'ամանամ կուտամ, վարդերուն մէջը պահեցէք .
Ամենքդ հաւասար նստէք, իմ տեղըս ալ խոռ պահեցէք .
Ամենուդ խըմածն անուշ, իմը՝ իմ տեղը վաթեցէք :
(Ակնայ երգ)

Զիմ եարն էմանէթ կուտամ, ի վարդին մէջըն պահեցէք .
Թէ երթամ շուտով դառնամ, զամանաթս ի տէրն հասուցէք .
Թ' երթամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ ըզտէրն յիշեցէք :
(Քուչակ)

Արդիարեան ասկից կ'եզրակացնէ թէ Ակնայ բոլոր անտունիները Քուչակի գործն են . Սյա եզրակացութիւնը ինձի ձիշդ չի թուիր : « Անտունի »ն բանաստեղծական-երաժշտական մասնաւոր սեռ մըն է , Ակնայ մէջ նախասիրուածն ու ամենէն տարածուածը . դարերէ ի վեր՝ Ակնցին, որուն քերթողական ճոխ խառնուածքը համընթացօթ է , անհամար անտունիներ է արտադրած . ինչպէս կարելի է որ Ակնայ բոլոր անտունիները , միակ բանաստեղծի մը — ըլլայ իսկ Քուչակ մը — գործն ըլլան . a priori, անընդունելի է այդպիսի ենթադրութիւն մը : ձիշդ է որ Քուչակի տաղերը անտունիներ են, եւ ամենագեղեցիկները անտունիներուն . բայց ճիշդ է որ բոլոր անտունիները Քուչակի գործն ըլլան : Ուշադրութեամբ քննելով, կը նկատենք արդէն որ այդ անտունիներուն՝ զանոնք իրենց ամբողջու-

թեան մէջ նկատելով՝ եւ Քուչակի տաղերուն միջեւ՝ եթէ կայ արհնակցութիւն, չկայ բացարձակ նոյնութիւն . արհնակցութիւնը հասկանալի է, քանի որ թէ՛ անտունիները եւ թէ՛ Քուչակի տաղերը միեւնոյն Ակնայ ցեղին ու հողին ծնունդն են . Այն Ակնայ երգերու կտորները զոր վերը յիշեցի՝ արդարեւ . շատ մօտ կապ ունին Քուչակին հետ, մերթ անոր այս կամ այն ստղին վարիանթը համարուելի կարենալու չափ : մերթ տարբեր գաղափար արտայայտող՝ բայց Քուչակեան սողերով : Սակայն Ակնայ անտունիները, որ հաւաքուած են Ճանիկեանի հատորին՝ ինչպէս եւ ուրիշ գրքերու՝ մէջ, բազմաթիւ են . ինչ որ յիշեցի վերեւ՝ փոքր մէկ մասն է անոնց արդ , մնացեալին մէջ՝ եթէ կայ ընդհանուր հզօր ինամութիւն մը Քուչակեան բանաստեղծութեան հետ , կան եւ տարբերող, ընտրող ուրիշ երանդներ ի յայտ բերող տարրեր :

Ակնայ ժողովրդական երգերուն եւ Քուչակեան տաղերուն միջեւ տարբերութիւնը շատ նուրբ է , բայց իրական : Ակնայ երգերը զոր հաւաքողները ժողովրդին բերնէն առած են , յաճախ այն տեսակ մը տարրամութիւնը , անաւարտութիւնը , միամտութիւնը, մերթ նոյն իսկ մթութիւնը , շփոթութիւնը ունին որ յատուկ է ժողովրդական անանուն բանաստեղծութեան եւ որ արդիւնք է այդ էրգերուն բերնէ բերան անցնելով՝ քմայրոտ յաւելումներով ու յապաւումներով՝ մերթ անկապակից կցումներով՝ ազաւազուելուն :

Ահա օրինակներ .

Կարմիր խնձորի պայոս , աճապ քեզ ո՞վ արաւ ալոց .
Ով որ քեզ ալոց արաւ , ան կենայ ծովուն ' Երեբուն .
Աճապ խարիպին տիրուն սիրտն ինտոր արեւ կու ծագէ .
Ուչ (ոչ) սիրտըս արեւ ցածեր , ուչ երեսս է պարզ ծիծաղցեր :
Ես երկու խարիպ ունիմ, մէկն է հիւսիս, մէկն է հարաւ .
Սիրտունըս(1) փրթէր ու գար , հարաւինս ալ հետը բերէր :
Աճապ տի լընի՞ օրիկ , խարիպ , գաս տունս, առնիմ ի տուն :
(1) « Հրեանիս » պիտի ըլլայ :

Թեւիկս ալ շքլիդ ծրգեմ, մանտրտիկ հետըդ
խօրաթիմ:

Լուսիկ մը փրթաւ քարէն, կէսն է խոռ ու
կէսն է բոլոր .
Քիչ քիչ ալ ի վեր եկաւ, բոլորեր զըննոր
Թագաւոր .
Լուսիկ, դուն կամաց կամաց՝ խառղ եղիր
մեր տանն ի վերայ .
Երկու խօսք գանգատ ունիմ, ան գանգտիմ
դուն ալվա գընա՛:
Գընա խարիպիս ըսէ՛, չի կենայ թող ելլէ ու
գայ :

— Բարեւդ ի գլխուս վրայ, չը գիտեմ դուռը
խարիպիդ :

— Եկուր, նըշանով ցոյց տամ: Բարձրը պատ
ու ծառ շըքերուն .
Նըստեր է ծառին շըքին, խատումատ խա-
տէհն ի յափին :
Խատէհն ուր ափիդ ունիս, կամ խըմէ կամ
տուր խըմողին .
Ան սագղ ուր կէօքսիդ ունիս, կամ չալէ՛ կամ
տուր չալողին :

Քուչակի տաղերը տարօրինապէս յստակ են,
լիալիր, « աւարտած » . կ'ըսեն ամբողջապէս
ու պայծառապէս՝ ամէն ինչ որ կ'ուզեն ըսել .
ու տաղաչափութիւնը, լեզուն իսկ (որս մասին՝
Քուչակի հատորիս ուսումնասիրութեանս մէջ՝
դեռ այդ միջոցին միջնագարեան հայերէնի ինք-
նայատուկ կազմութեան ու հրապոյրին ընտել
չըլլալով՝ անարդար եմ գտնուած) հրաշալի են,
չաս յաճախ անթերի, միշտ գիտակից, որոշ,
ամենանուրբ արուեստով մը յղկուած. արուես-
տագէտի մը, « մարդու » մը մատը կը զգացուի
հոն միշտ :

Տեսէք՝ օրինակի համար՝ (եւ բաղդատու-
թիւնը շատ շահեկան է), վերեւ յիշուած ժողո-
վրդական երգերէն երկրորդը ի՛նչ ձեւով կը վե-
րագանուի Քուչակի մէջ . այդ երգին մէջ իրար
խառնուած եւ կիսկատար արտայայտուած տար-
րերը Քուչակի մէջ զատ զատ առնուած եւ ըզ-
մայլիլի յստակութեամբ, կատարելութեամբ
արտայայտուած են .

Գիշերս ես ի դուրս ելայ, ի յերկինքն ի վեր
նայեցայ,

Լուսինն այլ կամար կապեց ի շրճոմն ի վար
կու գընայ .
« Լուսի՛ն, քո արե՛ւդ ասեմ, պահ մի կ'ոց ինչ
որ լուսանայ .
Երկու բան գանգատ ունիմ, զայն ասեմ լօք
ալվի գընա՛ .
Գընա՛ իմ եարին ասա՛. ելեր քո եարըն ու կու-
գայ ,
Հոգին կըլափին առել ու աչվին գալուդ կու
մընայ : »

Գիշերս ես ի քուն էի իմ հալալ տեղացն ի
վըրայ ,
Լուսինն ալ կամար կապեր յիմ ճոհար անձ-
կանն ի վըրայ .
Ա՛յ բարձր ու բոլոր լուսին, շատ բարեւ տար
իմ խօշ եարին ,
Ջոռուն այլ նըշանով ասեմ, բարձրը պատ ու
ծառն ի միջին .
Նըստեր է ծառին շըքին, կը խըմէ գիւր լուրջ
ապիկին ,
Կը խմէ ու հայրէն կ'ասէ Թ'ի՛նչ անուշ է
սէրն ու գինին :

Գիշերս ես ի դուրս ելայ թէ եար մի գտնեմ
սիրելու .
Գըրօն ալ ի դէմս ելաւ, լուկ նագար արաւ
տանելու ,
Գըրօ՛ղ, անհաւատ գըրօղ, դեռ մանուկ եմ,
չեմ տանելու .
Եկո՛ւ, տանելուն ցուցնեմ, տանելու զըլին
զարնելու ,
Ձարախն ալ ափին ունի, ոչ խըմէ ոչ տայ
խըմելու :

Ի՞նչպէս կարելի է ընդունիլ որ այդ ելեք
գաղափարները վերջնական ձեւով մը սեւեռուէ
յետոյ՝ նոյն Քուչակը գրած ըլլայ վերոյիշեալ
անտունին՝ ուր միեւնոյն գաղափարները խառն
ուրուագծուած են . այդ անտունին կամ հին
նամկական նախատիպարն է Քուչակին, եւ կամ
անոր սաղերուն ցոյքը ժողովրդական յիշողու-
թեան մէջ պահպանուած՝ խառն ու տարտա-
մոտած :

Միեւնոյն անտունին մէկ ուրիշ վարիան-
թըն ալ կայ ճանիկեանի հատորին մէջ. առաջին

մասը (չուսիկ մի փրթաւ, . . . մինչեւ « եկուր նշանով ցոյց տամ », եւն.) գրեթէ նոյն բանն է, վերջը՝ տարբեր.

— Եկուր նըշանով ցոյց տամ որ գտնես դուր խարիպիս. եմ եարն է ճէքեր խանին. նուշ դըրեր շէքեր կու ծախէ. Աջուին Թերազու արեր, ունեքովը վեր կու քաշէ. Էմմէնուն աժան աժան, իս տեսեր նը սուղ կու ծախէ:

Այս վերջին պատկերը — որ Ակնցւոց սիրելի եւ հրգեորուն մէջ շատ կրկնուած « ըսելու ձեւ » մըն է, կը գտնենք դարձեալ Քուչակի մէջ, զատ արտայայտուած, կէս-հեգնական սիրուն հռատողով մը:

Քո եարն ի Հալապ քաղաք ի շուկան շէքեր կու ծախէ, Աջուին է կըշիւք արել, ունեքերովն ի վեր կու քաշէ. ճէքերին գինն ալ հրամէ՛, պագ մը տա՛ւր, ու շուտ խալըսէ՛:

Տեսէք նաեւ հետեւեալ անտունին .

Ա՛յ իմ հարըստի դըստրիկ, ծոցդ եգի, ծառդ արմաւենի, Արմաւը քու ծառըդ կուլնի, պիւպիւլը քու ճիւղդ կու Թառի. Քո ծառն ու ճիւղդ ոսկի, քո տերեւը վարդ կու (ն)մանի. Ես քո ծոցուն տէր պիտէի, ճըղերուդ արմաւ քաղէի: Հարսնո՛ւկ քե խըրատ մի տա՛մ, Թը տեվլէթ ունիս նէ մըռէ՛, Զըդ ականջըդ իս արէ՛, զինչ ըսեմ նը ան ըրէ, Որ գան ու հազար ըսեն՝ հազրէն մէկ խօս կունք մի խօսէ՛. Ան ալ չի գիտեմ ըսէ՛, դուն հազար չարէ խալիսէ՛. Մեր տունն Աստուծոյ շինած, Աստուծոյ շինած եւ օրհնած, Հայր Աբրահամի քարուկը մեր տան Թեմէն է դըրած:

Առաջին չորս տողը՝ զմայլելի կերպով Քու-

չակեան է. վերջին մասը՝ յայտնապէս « աւելցուցուց », սիրուն նորէն, բայց տարբեր, նուազ մաքուր, նուազ բարձր. գալով առաջին մասին, տեսակ մը վարիանք է Քուչակի որ արդէն ունի միեւնոյն քառեակը, աւելի աղւոր, — է՛ն հրաչալիներէն մէկն իր շարքին .

Որդի, հարըստի որդի, ծիւ ոսկի, ծառ արմաւենի. Քո շունչդ է խընկան փոշի, քո մազերն է ճիւղք խաղողի. Կուլակդ է ոլոր ոլոր, քո բերանդ է փոքր ու բոլոր. Քո տիրոջդ այլ ինչ յենեկ (երնէկ), դու հերիք ես, խաղու խնձոր:

Ահա մահերդ մը Ակնայ. միտելն է որ կը խօսի

Ռըժար հիւրնդուկ եմ ես, ա՛ն կամակ եկու զիս ի տես. Իլամակդ ի գլխուս վերեւ, ձեռքըդ տար սըրտիս խոցը տես:

Նոյն գաղափարը Քուչակի մէջ կը գտնենք սիրային քառեակի մը վերածուած .

Հիւանդ եմ ի քո սիրուդ, ա՛ն խնձոր արեկ զիս տես. Արեկ նիստ ի բարձս ի վեր, ձեռքըդ տար ու զիմ սիրտըն զիս. Զիմ ցաւուն դեղն դու գիտես, ինձ օտար հեքիմ չի բերես. Թէ նեղ է նա՛ դեղ արա՛, Թէ չէ լից զնոր սէրդ ալ ի ներս:

Ահա, դարձեալ անտունի մը .

Գետակ, իմ ելման գետակ, ո՛ւր կ'երթաս, իւրտըդ ինձ ասա՛. Գիշեր ու ցորեկ կ'երթաս, քուն չունիս, արթուն կու կենաս. Գընամ ու գընամ կ'ըսես, ոչ կուգաս ո՛չ կու մօտենաս, Որ գաս 'ւ ինձի մօտենաս, չեմ Թողուր իսկի հեռանաս: Իմ եարն է գըրեր ըսեր, « եա՛ր, եկու զիս գողցիր ու տար .

ինտոր գամ գողնամ տանիմ, ադ չէօլին ճամբեկն է դըժար :
 Մի՛ վախեր, եա՛ր, մի՛ վախեր, ես կարմունջ կապեմ քու համար,
 ես կարմունջ կապեմ քու համար, մարգրիտ շարեմ լարէ լար .
 Սփռեմ էպրիշում խալի որ գործած տասերկու տարի,
 Ոտքովդ ի վըրան կոխես, ոտկացդ փոշեկը առնեմ,
 Ոտկացդ փոշեկը առնեմ որ քաշեմ աչքիս թիւթիա,
 Որ քաշեմ աչքս թիւթիա՝ աչքերուս լուսը շատանայ :

Այս երգին առաջին չորս տողերը Քուչակի մէջ կը վերագտնենք՝ աւելի քնքուշ եւ աւելի խոր ներշնչմամբ մը վերանորոգուած .

Ջո՛ւր, գըլգըլալէն կուգաս, գետիդ ո՛ր ախէն կուգաս .
 Երթաս այդ ձորերն ի վայր, ձայնդդ կայ ու դուն չերեւաս .
 Գիտեմ՝ սիրու տէր ես դուն . ի օտար աշխարհի կուգընաս .
 Երթաս ու սիրուդ հասնիս, գիշերն ի քուն չի լինաս :

Իսկ «երգին» յաջորդ ութը տողերը յայտնի է թէ անմիջական կապ չունին առաջին չորս տողերուն հետ . ժողովրդական ուրիշ մոթիֆներ են՝ եկած այդ քառեակին վրայ աւելցած, կըցուած : Այդ մոթիֆներէն՝ «կամուրջ կապեմ քեզ համար»ը, «սփռեմ էպրիշում խալի որ գործած տասերկու տարի», Ակնայ ժողովրդական երգերուն մէջ յաճախ կը հանդիպինք կրկնուած, առաջինը՝ ուրիշ տեղ՝ աւելի աղւոր, պարզապէս վսեմ ձեւով մը արտայայտուած .

Վաղուց գընացած եարուկ, ե՛լ եկու՛ խիստ եմ կարուսցեր .
 Ինչեխ եմ կարօտացեր, ես ի քու սըֆաթն եմ մոռցեր .
 Տարին տասերկու ամիս դուն ծովուն եալուն կու կենաս,
 Ծովն ալ մահանայ կ'անես, իս քենէ կարօտ կու պահես .

Ե(ր)ք որ գալու որ լընիս, դուն ինծի իմաց մ'արէ՛,
 Թերս կարմունկ շինեմ, անցի՛ ու դարձի եկու՛ :

Իսկ վերջին մոթիֆը՝ « ոտկացդ փոշեկը առնեմ որ քաշեմ աչքիս թիւթիա », կը գտնուի նաեւ Քուչակի մէջ .

Պագնեմք զիր (եարին) կարմիր երեսն որ աշխարհս չէ ի գին նորա,
 Առնումք ի ոտուց փոշուն ու քաշեմք աչլիս թոււթիա .

Բայց ասիկա « արեւելեան » հին ու տարածուած ասուածին մը պէտք է ըլլայ, ոչ Քուչակի ոչ ալ Ակնայ յատուկ ստեղծագործութիւն . Հաֆըզի մէջ կը գտնենք միեւնոյն դարձուածքը . « La poussière de tes pieds est l'unique collyre de mes yeux »(1) :

Կան Ակնայ ժողովրդական երգերուն մէջ կտորներ որ գրեթէ Քուչակի տաղերուն չափ կատարեալ են, ինչպէս սիրային « պալլատ »-ներէն, պանդուխտի երգերէն ու մահուան երգերէն ոմանք . բայց անոնց մէջ ալ չեմ գիտեր ինչ մը կայ, որ տարբեր է Քուչակէն . ատոնք գործը պէտք է ըլլան ուրիշ մեծ աշուղներու, որոնց անունը կորսուած է եւ արտագրութիւնները ժողովրդին բերնին մէջ յաւերժացած են :

Ատոնցմէ կը յիշեմ այստեղ երկու կտոր, մին զմայլելի փոքրիկ « պալլատ » մը, միւսը՝ մահերգ մը՝ սարսուեցուցիչ .

Աղբիւր մի Մզրայ լեռը, ջուրն ուռուն տակը կու վազէ,
 Օլուխն արծըթէն դըրին, ջուրն ոսկուն Թասը կու վազէ :
 Երկու Թուխ՝ Լ աղւոր աղչիկ նօշըպով ի ջուրն են եկեր,
 Երկու փեխիվան կը յիճ (կտրիճ) ձին հեծեր ու սէյր են ելեր :
 — Աղջիկ, աղբօրդ արեւուն, նօշըպէն պըտիկ մի ջուր տուր .
 — Ջուրըս տաք է, չէ պաղեր . մեր սիրուն շատ մարդ է մեռեր :

(1) Quelques odes de Hafiz, trad. de A. M. L. Nicolas.

— Թող խըմենք ու Թող մեռնինք , հաշուեմ
Թէ մարըս չէ բերեր :»

Մեռած կինը կ'ըսէ իր ողջ մնացած սիրա-
կանին .

Երթամ քաջ արծիւ լինիմ , գամ Թառիմ քու
պատուհանին .

Ինչաքը ֆիղան անիմ , ֆիղանէս քուներդ չի
տանի .

Որու քուն տանի տանի , իմ ու քու քունը չի
տանի :

Քուչակի հատորին մէջ բոլոր անտունիները
դնելու առաձարկին համաձայն չեմ ուրեմն: Ակ-
նայ ժողովրդական երգերը, որ ժողովրդին բեր-
նէն քաղուած են, պէտք է առանձին հաւաքա-
ծու մը կազմեն. Քուչակի տաղերը, որ ձեռա-
գրերու միջոցով մեզի հասած են եւ անտունի-
ներուն մէկ որոշ, ինքնուրոյն մասն են, պէտք
է յատուկ հատորի մը մէջ ամփոփուին, հատոր
մը որ՝ ինչքան ալ հեղինակին անձին վրայ քիչ
բան գիտնանք, ինչքան ալ այդ տաղերուն մէջ
տիրէ ժողովրդական ոգին, անհատական գործի
մը յստակութիւնն ու միութիւնը ունի (մասնա-
նաւորապէս սիրային երգերուն համար): Քու-
չակի հատորին մէջ Ակնայ անտունիներէն կա-
բելի կը նկատեմ դնել միայն չորս կտոր, « Ես
աս գիշեր դուրս ելայ, մութ գիշեր չիկար լու-
սընկայ, » (դուրս ձգելով վերջին երկու տողը),
« Կարմիր ու ճերմակ երես, մազդ երեսդ ի վար
կու բերես » (ամբողջապէս), « Քանի դուն հու-
տա հուտա, իմ հուսա սիրաբըս կու գողայ », (ամբողջապէս), եւ « Ես աղւոր մի սիրեր եմ որ
երեսն իրեք պէնկ ունի » որուն մէջ երկու
տաղ կայ եւ մէկ կիսատ երկտող: Ասոնք բոլոր-
ովին Քուչակի շեշտ ունին, եւ թերեւս օր մը
ձեռագրերու մէջ ալ գտնենք զանոնք: Քուչակի
հատորին մէջ դնելու է նաեւ իբր վարիանթ՝ Ակ-
նայ անտունիներու այն կտորները որ Քուչակեան
տողեր կը պարունակեն: Քուչակի շարքին վրայ
կարելի է ապահովապէս աւելցնել նաեւ Պ. Կոս-
տանեանցի ժողովածուին Բ. Պրակին « Ասի թէ
սիրեմ » տաղաշարքը: Նորայր՝ նամակի մը մէջ՝
այդ կտորին վրայ — ինչպէս եւ այն պրակին
« Այ իմ մարգարտէ շարոց » եւ « Երգ եարոց » կտոր-
ներուն վրայ — ուշադրութիւնս հրաւիրած էր

իբր Քուչակի գործ. ըստ իս « Ասի թէ սիրեմ »ը՝
կրնայ նկատուիլ իբր Քուչակի երեք տաղիկ (եւ
ոչ մէկ տաղ՝ ինչպէս՝ Նորայր կը կարծէ), իսկ « Այ
իմ մարգարտէ շարոց »ը՝ Ակնայ ժողովրդական երգ
մը կը թուի քան Քուչակի տաղ: Քուչակի
գործ կարելի է համարիլ նաեւ « Երգ եարոց »
տաղաշարքը, որ իբր մէկ տաղ հրատարակուած
է եւ որ՝ ըստ իս՝ կը պարունակէ վեց տաղ եւ
երկու կիսատ տաղ (այս թիւին մէջ կը հրատա-
րակեմ զայն):

Եթէ Ակնայ ժողովրդական երգերը եւ Քու-
չակեան տաղերը մէկ մարդու գործ չեն, ինչ-
պէս մտնել ուրեմն՝ պիտի ըսէք՝ քանի մը տա-
ղերու եւ շատ մը երկտողերու եւ սողերու նոյ-
նութեամբ երկու շարքին մէջ ալ գտնուիլը: Եր-
կու ենթադրութիւն կարելի է ընել. կամ Քու-
չակի տաղերը յօրինող բանաստեղծը ապրած է
շատ հին ժամանակ եւ ինքն ստեղծած է Ակնայ
բանաստեղծական ոճը եւ իր յաջորդները կրկ-
նած են իր գեղեցիկ դարձուածքներէն շատերը,
եւ ժողովուրդը իր երգերէն մէկ քանին նոյնու-
թեամբ պահած է աւանդաբար. եւ կամ այդ
ժողովրդական երգերը աւելի հին են, եւ յետոյ
եկած է Քուչակ մը, որ այդ ժողովրդական բա-
նաստեղծութեան ամենասիրուն մոթիֆներէն,
պատկերներէն, բացատրութիւններէն ոմանք իր
ստեղծագործութեան մէջ ձուլելով իւրացուցած
է: Դժուար է այս պահուս՝ վճռական նախընտ-
րութիւն մ'ընել այս երկու վարկածներուն մի-
ջեւ, բայց ես տրամադիր եմ աւելի դէպ ի առա-
ջինը հակելու. ատոր դիս կը մղէ տղբուման մը
զոր օրինակած եմ վիեննայի Միխիլարեանց թիւ
176 ձեռագրէն: Քուչակի քառեակներու ոմանց
համախմբում մըն է՝ « Երգի » (chanson) ձեւով,
խմբողին կողմէ երկու յանկերգի յաւելմամբ.
Անանիսի այս թիւին մէջ կը հրատարակեմ այդ
հետաքրքրաշարժ տղբումանը. չեմ կրնար ըն-
դունիլ որ ատիկա ըլլայ միակ տաղ մը՝ այդ ձե-
ւով եւ իր երկու յանկերգներով՝ սկզբնական
հեղինակէն յօրինուած. այդ քառեակները որ
ըստ բաղդի ետեւէ ետեւ դրուած են հոգ (ա-
մենքն ալ սիրայիններուն մէջէն ընտրուած),
Քուչակի տաղերը մեզ հասցնող միւս ձեռա-
գիրներու մէջ կը գտնուին ուրիշ քառեակներու
հետ խառնուած, բոլորովին տարբեր կարգով
դասաւորուած. հաւանական է որ ետքէն եկող

աչուղ մը Քուչակի սիրային տաղերուն ամենա-
 սիրուններէն շարք մը ընտրած, փունջ մը կազ-
 մած եւ յանկերգ աւելցուցած է իր կողմէն (որով-
 հետեւ Քուչակ երբեք յանկերգով երգ չունի), եւ
 թերեւս իր կողմէն եղանակ մըն ալ յարմարցը-
 նելով երգած է . այդպէս ըլլալուն ուրիշ ապա-
 ցոյց մըն ալ այն է որ համախմբողը հաւանա-
 կանաբար յիշողութեամբ հաւաքելով Քուչակի
 տաղերը՝ այդ քառեակներէն ոմանց երկու տողը
 միայն դրած է, անաւարտ թողով իմաստը, եւ
 անցնելով ուրիշ քառեակի : Այս ամենը նկատի
 առնելով, կարելի է երկու վարկածները հաշտե-
 ցնել ու ենթադրել որ Ակնայ ժողովրդական եր-
 պերէն ոմանք աւելի հին են քան Քուչակը որ,
 անոնցմէ օգտուած է, իսկ ոմանք իրմէ յետոյ՝
 ի մէջ ներշնչուելով են յօրինուած իսկ մէկ քա-
 նին իր տաղերուն ժողովրդականացումն են :

Ահա ամէն ինչ որ կարող եմ ըսել՝ առ այժմ
 Քուչակեան առեղծուածին մասին : Սրտանց կը
 մայթեմ որ Նորայր յաջողի լիովին լուծել այդ
 առեղծուածը : Չայն լուծելու համար, պէտք էր
 կարենալ ստուգել թէ նարակոնիսի մէջ՝ հանգ-
 չող Քուչակին գերեզմանին վրայ արձանագրու-
 թիւն մը կա՞յ, եւ անունն ի՞նչ ձեւով է գրուած
 («Նահապետ» բառը կա՞յ թէ ոչ՝ Քուչակի միա-
 ցած) : Պէտք է նաեւ փնտռուքներ ընել Ակնայ
 մէջ . Ճանիկեան իր հատորին մէջ բանաստեղ-
 ծութիւններ շատ հաւաքած է, բայց Ակնցի ա-
 շուղներու մասին ոչինչ կ'ըսէ, ոչ մէկ աշուղի
 անուն կը յիշէ : Ակնցիք միթէ չե՞ն պահած բը-

նաւ իրենց հին մեծ աշուղներուն անունը . Քու-
 չակի մը անուն կա՞յ արդեօք իրենց աւանդու-
 թեանց մէջ պահպանուած : Ասոնցմէ զատ, ան-
 հրաժեշտ է որ՝ վերջապէս՝ երեւան գայ ձեռա-
 գիր մը ուր գտնենք Քուչակեան տաղաշարք մը՝
 հեղինակի անուն կրող : Ի՞նչ դժբաղդութիւն
 սակայն — իրական աղէտ —, եթէ յանկարծ
 այդ ի լոյս ելլող անունն ըլլար Նիկողիմոսի
 կամ Կուռնիլիոսի պէս բան մը . . . Այնքան
 վարժուեցանք Քուչակին, այնքան այդ անունն
 այլ եւս նոյնացած է այդ տաղաշարքին հրապոյ-
 ըին հեա մեր հիացմանն ու սիրոյն մէջ : Բայց
 ո՞վ գիտէ . . . թերեւս ձեռագիրները միշտ շա-
 րունակեն լուռ մնալ հեղինակի անունն մասին,
 ու մեր Քուչակեան հարցը զանազ տեսակ մը
 փոքրիկ հումերական հարց . աւանդութիւնն է որ
 կը վերագրէ Իլիականն ու Ոլիսականը Հոմերոսի
 մը . զարերէ ի վեր բանասէրները կը վիճին, կը
 քննեն, կը փնտռեն . սմանք այդ քերթուածնե-
 րուն մէջ կ'ուզեն տեսնել հին ժողովրդական
 երգեր՝ հաւաքուած ու ձուլուած, ուրիշներ կի-
 սով կամ ամբողջովին՝ միակ անձի մը՝ Հոմե-
 րոսի՝ գործը . իսկ գրասէր հասարակութիւնը,
 եւ գրագէտներն ալ, կը շատանան ըմբոշխնելով
 այդ բանաստեղծութեան անմահ գեղեցկութիւնը
 եւ Հոմերոս մը կը սիրեն անոր մէջ . մենք ալ
 այդպէս պիտի ընենք Քուչակեան բանաստեղ-
 ծութեան համար :

Ա. ՉՊԱՆԵԱՆ



Պ Ա Տ Ա Տ Ո Ւ Կ

Նուէր Տ. Ս. Ս.



ուզ էր պատել մեր աշխարհն : Հուր ջարհնով զողզած
 Խոժոռ ու մուժ այդ երկրում , հին ճաժեւի մօտերը
 Դեռ այսօր էլ տաւարածն ճանապարհորդ անցորդին
 Ցոյց է տալիս Տրմբլէսկից՝ Որոտ գետի հովտի մէջ՝
 Հեռում եղած Երնհայրի Հրոփսիմեանց կուսանաց

Վանքի նախկին բեկորներն : Ժամանակի ժանիքը
 Շատ է կերել ու մաշել մենաստանի արտաքինն .
 եւ բաղեղի թրփերը իրեանց փէշի տակ առած
 Բնքըշաքա ծածկել են աւերակներն վերից-վայր :

Մեծ Տրդատի օրերից , որը այնքան տարիներ
 Կըւիւ մըղեց հայրենի մեհեանների քաջ պաշտպան
 Բուրմ-մոգերի դասի դէմ , այնտեղ եղած Անահտի
 Անուան ձօնուած բագինը բաժին տըրուեց կոյսերին :
 եւ այդ օրից՝ այդ տունը շրջակայքի շինական
 Ժողովրդի համար մի ապաւէն էր , ապաստան :
 Մարդ , տուն չըկար , որ այդտեղ հանգիստ առած չըլինէր :
 Այրի չըկար , որ վանքից բաժին տարած չըլինէր :
 եւ տոհմական ու ազնիւ իշխանների համար նա
 Մի սուրբ վայր էր կատարեալ , որտեղ անմէն-մի անհատ
 Հանգիստ առնել կարող էր , թէ մարմնով , թէ հոգով :
 Լուսաւորչի օրհնութեամբ այդ սուրբ տան մեծ մայրապետն
 Հրոփսիմէ անուանուեց , իբրեւ անդարձ յիշատակ
 Հրոփսիմէ մեծ կոյսին : եւ այդ օրից ըսկըսած
 Մի վաղեմի , բարեպաշտ սովորութեան համաձայն
 Կուսաստանի մայրապետն Հրոփսիմէ էր կոչուում :

Անցան դարեր բազմաթիւ . վանքը ծաղկեց ու շէնցաւ
 եւ իւր հետ էլ շէնքըրեց չորս կողմն եղած գիւղերը ,
 Ուսումնարան ու վարժոց վանքի բակում պահելով
 եւ խոր խաւար աշխարհում՝ իբրեւ մի վառ մեծ ճրագ
 Ու լուսատու դառնալով : Շատ բազմաթիւ լոյսեր էր
 Տըւել նա այդ աշխարհին , բայց ամենից սիրունը
 Այսօր էլ դեռ դիմացի խոր ձորակի գագաթին
 Թառած փոքրիկ մատուռի անուն կըրող տիրուհին՝
 Շահանդուխտն էր եղել միշտ , որ իր առած կըրթութեան
 Բարոյական քաջութեամբ շատ վեր դասեց նահատակ
 Լինել , քան թէ անօրէն , անհաւատի կին դառնալ :
 եւ ամառուայ գիշերներն , երբ որ լուսնի շողերը
 Սիւնեաց երկրի երեսը դադարում են պագնելուց ,
 Ձորի գըլխին վառ ճրագն համբոյրներ է ուղարկում

Ձորի գրկում կուրծք տըւած կուսանոցի խարոյկին :
Անցան անծիւ տարիներ , մի նոր ուրիշ մայրապետ
Հրւիսիսիմէ անունով մենաստանի գործերը
Ահա քանի տարի է ղեկավարում , տանում է
Իբրեւ մի մայր հոգատար , որին իբրեւ մի նոր սուրբ
ձանաչում է շրջակայ ժողովուրդը բարեպաշտ :
Եւ չարատանջ ու դժնեայ , սեւ ու արին ցասումի
Այլ օրերին Հրիսիսիմէն մի ծաղիկ էր նորպէս ,
Որ դեռ մատաղ հասակից ջերմ ու անոյշ գըծումէն
Օրինակ էր կենդանի : ժամանակի սեւ ու մութ
Խաւար պատած երկնքում այդ վառ , պայծառ պըլպըլան
Աստղըն էր լոկ երեւում : Ազնիւ , տոհմիկ , գեղեցիկ
Գեռ հագիւ էր բոլորել քրտան տարին , որ կոյսի
Երզարշ առաւ երեսին , կրօնաւորի սեւ , երկար
Տարազ առած ուսերին : Նա հովուական գաւազան
Ու մատանի էր կըրում , ինչպէս որ սուրբ , մեծ արհի
Տաճեացի Գրեգորը : Ուրիշների համար միշտ
Շատ բընական գտնելով ամեն տեսակ աշխարհիկ
Հըրապոյրներ ու վայելք , իւր նըկատմամբ եւ ոչ մի
Չնչին վայելք իսկ անգամ չէր կամենում թոյլատրել :
Պահանջում էր՝ ամեն օր հէնց առաջին իսկ անոյշ
Քուն քաշելու ժամանակ , որ հերթապահ քոյր-կոյսը
Գար եւ իրեն արթեցնէր , որ ամենից վաղ ինքը
Եկեղեցում գտնուէր , շատ անգամ էլ գալտնագող
Վեր էր կենում անկողնից , — մի կոշտ խըշտեակ՝ չոր յարդից , —
Եւ մի անկիւն քաշուելով՝ սաղմոս քաղում ծնկաչոք .
Քուրմ էր կըրում իւր քնքոյշ մարմնի վերայ այժի կոշտ
Մագից շինած խորգ-շալից , ինչպէս նախկին օրերի
Մենակեցիկ Տգնաւոր : Սակայն ոչ ոք վանքի մէջ
Տեղեկութիւն իսկ չուէր մայրապետի արարքից :
Բայց այդ բոլոր խստամբեր պրարքներն ու չարչարանքն , —
Որ երբեմն իսկ արդար մեղադրութիւն էր կորզում
Որոտ գետի միւս ափին ապաստանած Մեծ-Ջարանց
Անապատից ուղարկուած խոստովանող ծերունի
Քահանայի բերանից , — այդ ամենը մի վայրկեան
Չէր իսկ փոխում մեղմ , փափուկ մայրապետի վարմունքը
Իւր հրամանի տակ եղած քոյր-կոյսերի նկատմամբ :
Տարուած նախկին Հայրերի գրուածքներով , սուրբ Գրքի
Մասին եղած մեկնութեամբ , Խորենացու , Անյաղթի
Քերթուածների ախորժով , եղիշէի , Փարպեցու ,
Փաւրստոսի եւ միւս այլ պատմիչների երկերով ,
Նա մեկնում էր ու պարզում ամենից մութ տեղերի
Խրթին իմաստն ու միտքը այն աստիճան հեշտութեամբ ,
Որ վանական ու գիտուն մարդկանց զարմանքն էր շարժում :
Բայց մայրապետն ինչքան որ գիտնական էր , դորանից
Էլ աւելի բարի էր : Խեղճ ու աղքատ տընանկի
Աղախինն էր՝ հեզ , խոնարհ : Եւ երբեմն փողոցում
Պատահելով ամենքից հալածական բորոտին՝
Համբուրում էր աներկիւղ եւ ըստփում խեղճերին :

Քանի՛, բանի՛ հրրաշքներ կատարուել էր իւր ձեռքով :
 Մի օր , երբ որ վանքի մէջ վերաբերում էր անում ,
 Սուրբ Սկիհը իւր ձեռքին՝ հրրամայեց տաճարի
 երկինք ելած կամարի տակ ապահով օժեւան
 Դըտած , հանգիստ բուն դըրած ծիծառների ողջ խմբին ,
 Որ այդ պահուն խանգարում էին իրենց ճռուողով
 Աստուածային պաշտամունքն . — լուել եւ ձայն չըհանել :
 եւ իւր ամբիծ շրթունքից ելած խօսք ու հրամանի
 Զայնին ականջ դընելով՝ ծիծառները իսկոյն եծ
 Թըռան , հասան կամարի դէպ դուրս ցցուած անկիւններն ,
 եւ մինչ « Յրհնեալ եղերուք » ն լուռ ու անձայն մընացին ,
 Չըհանեցին ձայն-ճպտուն : Առաքինի գործերի ,
 Ծածուկ արած . բայց յայտնի ողորմութեան ու սիրոյ
 Արարքների համբաւը տարածուել էր շատ հեռու ,
 Ինչպէս վարդի բուրմունքով պատած զեփիւռն Որոտի :
 Բաժանելու ըստեղծուած իւր զոյգ , բընքոյշ ձեռները
 երբեք իրար միացած չէին տեսել դեռ մարդիկ :
 եւ երբ գըլուխն ու ուսերն ծածկող ճերմակ սըքեմը
 Վերան առած անցնում էր , տէր-ողորմեան քաշելով ,
 Իւր ըզգլխիչ հայեացքը ցած խոնարհած դէպ երկիր .
 Աստուածային խառնուրդի հրրաշալի զուգորդմամբ
 կընոջ նազանքն ու շընորհին , հրեշտակային տեսքի հետ
 Միանում էր ու ձուլում նորա չքնաղ անձի մէջ :

Այդ երկնային սըրտի մէջ , այսպէս ուրեմն երկրային
 Ո՛չ մի բան եւ ո՛չ մի կապ չէր մընացել , բացի այն
 Զօրեղ ու բուռն , վառ սիրուց , որ սուրբ կոյսը տածում էր
 Ծաղիկների համար միշտ : Նա պաշտում էր ծաղիկներն :
 Մի յակինթի , շուշանի , մի մեխակի ու վարդի ,
 Կամ անտառի ձնծաղկի , խըլոպուզի , սմբուլի ,
 Անթառամի , նարգիզի տեսքի առաջ իւր մեղմեղ
 Խանդաղատած հայեացքը եւ աչքերը իսկոյն եծ
 Տամկում էին , ցօղ կապում : Մեղադրում էր ինքն իրեն ,
 Ինչպէս որ վատ , անարի մի Թուլութեան համար մարդ
 Մեղադրելի կարող է : Բայց ի՞նչ արած , — այդ նորա
 Թուլութիւնն էր՝ եւ անբոյժ : Նա պաշտում էր ծաղիկներն :
 եւ իւր մաքուր սրտի մէջ , որ քննել էր ինքն իրեն
 Նա իւր սիրած ու պաշտած ծաղիկներից մէն-մէկի
 Համար մի սուրբ սէր ունէր , որից ամենքն հաւասար
 Բաժին էին ըստանում : Նորա խաղաղ խըցիկի
 Պատուհանի շուրջ բոլորն գրկած վայրի մասրենին
 Մագըլցում էր դէպի վեր եւ Աստուծոյ իւր բաշխած
 Առաւօտեան իւր ծաղկած կոկոնների նազելի
 Աչիկներով ժպտում էր նորա դիմաց , իբրեւ մի
 Շատ հընաւուրց ծանօթի : Նորա տեսքից յասմիկը ,
 Կարծես հըմայք ըստացած , իւր ըզմայլիչ բոյր հոտը
 Տարածում էր իւր շուրջը եւ մեղմանում , ինչպէս մի
 Անոյշ , աղու մըրմնջով « քեզ սիրո՛ւմ եմ » կըկընող
 Ու հառաչող անվերջ ձայն : Խաչվերացի Թափօրի
 Տօնի օրը , Մամկունի Չինմաչինից մեր աշխարհն

Իրենց հետը հիւր բերած եւ այդ օրը միւս բոլոր
 Թաղիկներէ հետ խմբած՝ տըխու՛ւր , դարդո՛տ , Թալկադէմ՝
 Բրիզանթեմը իւր սեւուկ տերեւների արանքից
 Անոյշ ժրպիտ էր ձրգում նորա ամբիծ երեսին ,
 Որ այդպիսի քնքոյշ ձեռք մուսցնել է տալիս իւր
 Հայրենիքի կարօտը : Իսկ միւս բոլոր ծաղիկներն
 նորա քնքոյշ սէրն իրեն էին դարձնում բուրմունքի
 Հազար ու մի տեսալի մեղմ պլլուած ծալքերում :

Այսպէս , ուրեմն , ահա այդ խաղաղ ու խոր հանգըտի
 մոցում հանգչող վանքումն էր , որի ամբիծ , բարեպաշտ
 Համբան աճում , մեծանում էր ամեն օր չորս կողմը ,
 Որ Աստուծոյ օրերից մէկն ու մէկը սոսկալի ,
 Սարսուռ պատող , չարադէտ մի լուր հասաւ Անըսպաս :

Վերջ դընելով Իրենիքի մելիքների հետ արած
 Բանակցութեան խաղերին , — որով երկիրն իրեն տալ ,
 Իսկ աղջիկներն Մօղօլի՝ հարէմները անպա՛ման
 Ուղարկել էր պահանջում , — Պինչը-Տափակ Հուլաղուն՝
 Մօղօլների աւագը , հըրամայեց Թաթարի
 Ձաւակներին գըրոհ տալ այդ անառիկ աշխարհը
 եւ անխընայ կոտորել ազնւական ու գեղջուկ ,
 Առանց սեռի խտրութեան՝ երիտասարդ ու ծերուկ ,
 Թէ որ միայն բանակի երեւալով չը գային
 Իբրեւ խոնարհ հրպատակ՝ առանց վէնքի իւր առաջ :
 « Բաւական է , ասել էր , որչափ այդ մուծ աշխարհը
 Իմ զօրքերի արիւնով ներկեց իւր հողն ու ջուրը ,
 Անտառներում , ձորերում , խոր կըրծերում զօրքերիս
 Շարքերն անվերջ կըլանեց : Հերթը իրենց է հասել :
 Վա՛յը եկել տարել է ով առաջըս չի չոքիլ :
 Գըրոհ տուէք աշխարհը , կոտորեցէք անխընայ » :

Հըռիփսիմէ մայրապետն շատ լաւ գիտէր , որ վանքը
 Անօրէնի անցնելու ճանապարհի իսկ վերայ
 Գըտնըւելու պատճառով , հէնց ա՛յդ տեղով պիտ՝ անցնէք
 երկրի սիրտը մտնելու , եւ հուր ու սուր սփռելով
 Երջակայքը , իւր վանքն էլ պիտի աւեր դարձընէր
 Այդ անպիտոն վատշըւէրն եւ իւր անմեղ կոյսերին
 Ձեռքից պիտի չըթողնէր : Եւ ո՞վ գիտէ ի՞նչ անարգ ,
 Անօթալի արարքի պիտի մասնէր քոյրերին :
 Ով կարող է թող փըրկուի՝ : Այդ էր ահա սարսափի
 Ազդեցութեամբ տարածուած ծայնն ու կոչը ամեն տեղ :
 Մո՛վ էր պատել Տաթեւը , Դարաբասն ու Բռնակոթն
 Թափուած կարմիր արիւնից , եւ անարգուած դիակներն , —
 Հարս ու կոյսի , պատանու , կարմիր կոհակ յորձանքից
 Գշուում , տարում էր դէպի Որոտ , Շամբի ափերը :
 Որովհետեւ Հուլաղուն դուրս էր եկել Մեղրիից :
 Հասուէհաս է Հուլաղուն : Քաջարանցի անվեհեր
 Միականի Քօռ-Ձաքու հաստ , կոշտ մորթից պատրաստած
 Ան ու սարսափ տարածող Թմբկի ծայնից սիրտ առած

Գալիս հասնում են Լեզգիքն , Իրզի ցեղերն ու Թաթար
 Թուրքի զինուած արաներն . իրենց արեան ծարաւի
 Կողոպուտի , աւարի տենչով բռնուած խմբերով :
 Հասուէհաս Է Հուլաղուն : Ով կարող է Թող փախչի :
 Նա գալիս է յետեւից յիսուն հազար քաջերով ,
 Հետը առած քառասուն պաշարուով զարբազան ,
 Երկու հազար սայլերով , եզներ լծած , ոնց գազան ,
 Հալիձորի իշխանի եւ նորա հետ միացած
 Սիւնեաց երկրի զօրքի դէմ : Եւ եթէ իւր անց կացած
 ձանապարհին վանք տեսնէր , նա այրում էր անխնայ ,
 Սրբի բերան էր տալիս Թէ վանական , քահանայ ,
 Թէ վանահայր , սարկաւագ , Թէ տիրացու եւ Թէ մոնթ :
 Անըզգայ էր , ահուելի , բայց բարեպաշտ մոլեռանդ .
 Դուրանն երբէք իւր ձեռքից ամենեւին չէր Թողնում :
 Նա անցնում էր արեան ծով , արտասուքի հեղեղի
 Թափուած գետից անվրդով : Վառուած գիւղերն , աւաններն ,
 Հէնց առաջին պատահած ծառից կախած իշխաններն
 Նորա դաժան երեսի ժրպիտն էին լոկ շարժում :
 Իւր կատաղի զինուորներն՝ Հարանց-վանքում , Տաթեւում ,
 Հալիձորի , Գենուազի , Որոտ , Կալեր ու Վանքի .
 Դարաբասի , Քաջարանց անապատում խեղճ , անմեղ
 Եղբայրներին կապելով շարան-շարան միատեղ՝
 Կըտրտում են ամենքի ձեռքն ու ոտքը եւ յետոյ
 Հըրէշ կտրած դահիճներն խարազանի ու փայտի
 Հարուածներով սոսկալի ծեծ են տալիս հաշմանդամ
 Մարդկանց մինչ այն աստիճան , որ խեղճերը ըստիպուած
 Արինձաթաւ մարմնի բըզիկ-բըզիկ մասերով
 Փորսող տալով փախչում են այս , այն սնկիւնն ու պուճախն .
 ձանապարհի անցքերին փախըստական , դողացող
 Աբեղաներն իրենց սուրբ մասունքները կամ ոսկէ
 Սպասները գիրկ առած գաղտագողի անցնում են՝
 Վախկոտ , վրհատ քայլերով : Ուր որ անցնէք՝ լոկ միայն
 Ձեռք երկարած ու մուրող քահանաներ կը տեսնէք ,
 Որոնց ոչ ոք այլ եւրս ոչ կերակուր , ոչ էլ տուն
 Տալ չէ ուզում երկիւղից : Որովհետեւ Հուլաղուն
 Դուրս է եկել Մեղրիից : Նա գալիս է հասուէհաս :
 Ո՛վ կարող է Թող փրկուի , գըլուխ առնէ ու կորչէ :

Սակայն որչափ իւր վանքին մօտենում էր անպզուր
 Այդ բանակի վոյմակը , այնքան քնքոյշ մայրապետն
 Իրարանցման , վըրդովման քիչ նըշան էր ցոյց տալիս :
 Ահը փախել էր անհետ . երկիւղ չունէր իւր սրտում :
 Կարծէք , Թէ նա վաղեմի , հալածական օրերի
 Նահատակի տիպ լինէր : Եւ երբ մի օր՝ վանքին կից
 Շինուհայրցի մի գեղջուկ , երեկոյեան ուշ պահուն ,
 Վախից լեզուն բռնըւած , եկաւ նորան լուր բերեց ,
 Թէ բանակի խմբերը , պատերազմի փողերի ,
 Հընչիւններով , գալիս են ներքեւ ընկա՞ծ ձորակով
 Հոսող գետի , Կալեղի , — մայրապետը հակառակ
 Իւր շուրջ խմբուած կոյսերի կառծիքներին , հրամայեց

Լայն բաց անել իսկոյն եմ մեծ դարբասի դռները ,
 Կուսանոցի պատերի բոլորք պատող խրամատի
 վերայ ձրգուող կամուրջը իջեցընել իւր սեղից :
 Յետոյ՝ առած քոյրերին եւ նորատի կոյսերին
 Տարան վանքի դասերը , որ ճրբագուող լոյսերի
 Շողերի մէջ պննուած մեծ , տօնական պաշտաման
 Տեսք էր առել տաճարը , եւ յորդորեց հանգըստեան
 Շարականներ ու երգեր երգել անվերջ , սրտաբով :

Թուխ-կարմրագոյն , ամեհի իւր շառատի մէջքին թառ ,
 Որի բերնի փրփուրը ձիւն էր ներկել իւր սանձը ,
 Այա հեռուից Հուլաղուն երեւեցաւ խրոխտաբար :
 Շեփորների , փողերի ալմուկների մէջ կորած
 Մօտենում է անդադար : եւ արիւնտտ երկնքում
 Տատանում է իւր յետից Մօլորների ազգային
 Դեղին դրօշն , երախը լայնկեկ բացած , թամբերով
 Դուրան գրկած վիշապով : Խոր , լայն ձորով անցընող
 ձանապարհի երկայնքը ամբողջապէս բռնուել է
 Տէգ , նիզակով , սրբերով , հազար տեսակ վահանով
 Ջինուած վխտող ամբոխով : Ուժ ահագին ուժեղ եզ ,
 Որոնց վրդի տակ կախուած կաշուէ լայն-լայն կախոններն
 Աւելում են երկիրը , ինչպէս Լօռու-Հրմզայի
 Դետին աւլող շրթունքներն , — քաշ են տալիս բանակի
 Ջօրապետի յետեւից հսկայական բաբանը ,
 Որի երկայնքն ու շուրջը փաթաթուել ու պատել է
 Պրզնձածոյլ հրէշ-օձն , մի ահուելի գընդընկէց ,
 Որ շինել էր հէնց ինքը՝ Ջատու-Ալին Սըմբըղանդ :
 Նորա ձայնն ու շրթինդը այն աստիճան ահուելի ,
 Սոսկալի էր , որ նոյն իսկ ամենից ճեր ու սրտոտ
 Ջօրականը գլխից-ուռք սարսըռում էր տեղն ու տեղն
 Իսկ երգնոգիս կանայքը շա՛տ , շատ հեռուից սարնափից
 Վիժում էին զաւակներն :

ձիշդ խոր ձորի մէջտեղում .

Կուսանոցը շուրջ պատող պարիսպների ոտքի տակ
 Բիթը-Պաճօ Հուլաղուն իջաւ աշխէտ իւր ձիուց
 եւ դառնալով չորս կողմը խրոխ եկած , ըսպատող
 Հետուորդների բազմութեան , — « Տեսէք , ասաց , նայեցէք ,
 Դուռը բաց է վանդակի , իսկ մէջն եղած թռչուններն
 Թրուել , փախել են ամենքն : Ուշ կնք հասնում բաւական » :

Եւ յօնքերը պըռքստած , զայրոյթ կտրած , կատաղած
 Առաջ անցաւ ու կանգնեց կուսանոցի պարբսպի
 Շուրջը պատող խրամատի կամրջակի եզերին :
 Բայց մի հայեացք ձրգելով ճեր , հինաւուրց դարբասի
 Կամարների տակ անցնող մուժ ու խաւար միջանցքին ,
 Յետ-յետ գընաց՝ տեսնելով վառ-դպր լոյսեր խաւարում :
 Բաց , ճրբագած տպանքիքիւր բոցերով պըպըրով
 Վառուող պատրոյգ , մոմեր խոյան ու շողն էր երեւցողն
 Հեռուից՝ պայծառճգրաճարի բեմնէն : Եւ տէնուում խոր խաչով :

Իսկ կոյսերը շարէ-շար , ոմանք կանգնած գլխիկոր ,
 Ոմանք չոքած դասերում : Մէկ էլ յանկարծ , մայրապետն
 Ու կոյսերի շարքերը իրենց անոյշ , արծաթի
 Ձայնի հնչուն ելէջով , ուր ոչ մի խազ իսկ անգամ
 Չէ դողդողում երկիւղից , հին տաճարի կամարներն
 Ողողեցին ծոր-տրւող , մելամաղձիկ մեղեդու
 « Արի Աստուած » աղերսով , բղխած սրտի խորքերից :
 Արտի ներքին մի յոյգից յանկարծակի բռնուած ,
 Որ դեռ մինչ այդ ժամանակ չէր ունեցած , գղջացած ,
 Մարդը ապշեց , տատամսեց : Ինքը մի քաշ լինելով
 Միշտ յարգում էր քաշերին : Ձայն արծակեց , հրամայեց
 Տեղն ու տեղը բանակել , կապի դընել բանակի
 Գըրաստներն ու ձիերը : Գլխից հանեց իւր ծանրը ,
 Ցըցունքներով սաղաւարտն , եւ մի բաժակ ջուր ուզեց :
 Ապա մի կողմ քաշելով իւր օգնական Բաշոյին . —

« Եղբայր , ասաց , անվեհեր ու քաշարի այս կրնոջ՝
 Մայրապետի նրկատմամբ մի թուլութիւն եմ ըզգում :
 Խիղճս է գալիս այդ կինը : Եկ խընայենք մենք նորան :
 Իմ առաջըս լայն բացած այս դարբասը և իջեցրած
 Կախանաւոր կամուրջը սաստիկ նեղն են ձրգել ինձ :
 Ես անարի , վատշուէր մի յաղթական կը լինիմ ,
 Թէ յաղթութեան բաժինըս այս տաճարի դասերում
 Եարկաններ , աղօթքներ ու տաղ երգող այս անմեղ
 Հարիւրի չափ խեղճ կոյսեր , անզէն կանայք լոկ լինին :
 Եկ խընայենք մենք նոցա » :

Սակայն , Բաշօն հակառակ
 Կարծիքի էր : « Ըզգո՛յշ կաց , իմ քաշարի՛ եղբայր , այս
 Մարդկանց վոհմակն յուզելուց : Այս կոյսերը ուզում են
 Ֆաղթանակել նոցա դէմ : Իսկ միւս կողմից , հաւատա ,
 Որ այդ ճերմակ ծածկոցով ոտքից-գըլուխ պաշտպանուած
 Անմիտ , յիմար կոյսերը պիտի նուաղեն , վայր թափուեն ,
 Երբ այս մարդկանց դէմքերը վանքի մուտքից դէպ տաճար
 Ներս խուժելիս հէնց տեսնեն : Մեր ձեռքը տուր այս վանքը ,
 Անենք՝ ինչ որ ուզում ենք : Ամենից լաւն էլ այդ է » :

Բայց իւր դիմաց խօսողին էլ Հուլալուն չէր լսում :
 Նա վճռել է անելիքն : Քայլերը դէպ վայր կախուած
 Կամրջակը ուղղելով եւ հայեացքով՝ գիշերուայ
 Գրկում կորած լուռ վանքը մարտ ու կըռուի կանչելով ,
 Ձեռքը տարաւ ու կողքից կախուած երկար , մեծ թուրը
 Քաշեց , հանեց պատեանից , գետին զարկեց իւր ձեռքով :
 « Եա՛՛ բիսմըլլահի էլ-Ռահիմ , Եա՛՛ փէյլամբար , Եա՛՛ Ալի » ,
 Ասաց յանկարծ , Թէ այստեղ ձեռքովս տնկած այս թըրիս
 Մայրը արմատ կը բռնէ ու կը ծաղկէ այս գիշեր ,
 Դա նշան է , Թէ Ալլահին իւր սուրբ կամքով ուզում է ,
 Որ այս վանքում կոյսերը այսուհետ էլ ապահով
 Իրենց կրօնի երգերը ու ալելուին միշտ ասեն , —
 Եւ ո՛վ գիտէ , Թէ մի օր փէյլամբարի սուրբ դենը

Ձեն ընդունիլ կամովին : — եւ արեւծագ չըբացուած ,
 Հաստատապէս խօսք կըտամ , նոյնչափ հաստատ , որչափ եւ
 Իմամ Հասան ու Ալին եգիպտացի մահ գըտան ,
 Առանց նոցա մի մագին , այս տան չոփին ու ծիղին
 Մինչեւ անգամ կպչելու , բանակս կ'առնեմ ու կ'երթամ » :
 Այս ասելով զինուորը քայլերն ուղղեց դէպ վըրան
 եւ խո՛ր , ծանրը քուն մըտաւ :

Գիշերն իջաւ : Մի խաղաղ .

Պարզ ու վըճիտ , աստղալից , պըլպըլացող վառ գիշեր ,
 Որի արծաթ լուսընկայ ցոլքն ու փայլը տարածուել ,
 Լուրթ էր կապել չորս կողմը : եւ դասերի շարէ-շար
 Անմեղ կոյսերն խաղաղիկ ու պարզընկայ օդի մէջ
 Ձգում , ծորում էին միշտ իրենց հընչուն զիլ ձայնով
 Շարականի երգերը , որ լոկ միայն երբեմըն
 Ընդհատուում էր՝ մեղմ հովի ալիքներից տատանուող
 Խարոյկների բոցերի շուրջը կտրած բոլորած
 Պահակների կոշտ ձայնով :

Արշալոյսի վառ շողերն

Արեւելքի բոսորած հորիզոնում վերջապէս
 Տարածեցին իրենց լոյսն : Կեանք է առել ամեն ինչ :
 Բանակն ելնում , շարժում է , խըլըտում է , ինչպէս մի
 Մեծ , վիթխարի հըրէշ-օձ : Շեփորների ձիգ , երկար
 Ականջ ծակող հընչիւններն զարթեցըրեց բանակի
 Խոր քուն մըած մարդոցը , հետն էլ իրենց գըրաստներն :
 Առաւօտեան արեւը , դեռ եւս խոտոր ու սառը ,
 Սաղաւարտով ծածկոտած հակատների վերայ մի
 Արագ , վախկոտ , ոսկեշող պաղ սարսուռ է տարածում ,
 Աչք խըտըղում ու անցնում : եւ բանակի մէջտեղում
 Իւր վայր թողած վըրանից դուրս է գալիս Հուլաղուն
 եւ չորս կողմը տարածուած , հազիւ լսուող մըմըռոց ,
 Քըթմնջիւնի շըշուկի միջից անցնում անվըրդով , —
 Կազմ ու պատրաստ եւ հագած գըրահ ու վէտ , սաղաւարտ ,
 Ըսպառազէն , եւ դիմում դէպ ի վանքի մուտքի դէմ
 երէկուանից վայր թողած կախանաւոր կամուրջը ,
 Որ իւր աչքով իսկ տեսնէ , թէ ի՞նչ եղաւ իւր սուրը :

Իսկ լերկ ժայռի կողերին թառած խաղաղ վանքի մէջ ,
 Դարբասները լայն բացած , դեռ հնչում է բարեպաշտ
 Սաղմոսների ձայները եւ տարածում գիշերուայ
 Արդէն փախչող ծոցի մէջ սուրբ Մեսրոպի աղերսներն :
 Ծանրը թուրը մերկ , շիտակ՝ ցցուած , կանգնած է հողում .
 Բայց դեռ արմատ չէ բռնել , ոչ էլ պտկել ու ծաղկել
 Այդ անց կացած գիշերը սուրբ կոյսերի աղօթքով :
 Սակայն միայն լոկ մի օր կեանք քաշելու եւ լոկ մի
 Գիշերուայ մէջ հաւունցած մի պատատուկ՝ շեշտ վարսած
 Թըրի շեղքի չորս կողմը փաթաթել էր իւր տկար
 Ոլորպըտոյտ ցողունը : Մայրապետի սիրասուն
 Սիրով սիրած ու պաշտած ծաղիկներից ամենից

Թոյն ու տրկարն իւր գրկում հուր-շող ու փայլ արծակող
Հուժկու թուրք գերել էր, ամուր գրկած թոյլ գրկում,
եւ մեղմ, անոյշ ու ժրպտուն, ինչպէս յառած մի նայուածք,
Իւր թարմ, կապոյտ բաժկիկը թըրի ծայրին ծաղկում էր:

Եւ Հուլաղուն անշարժ, լուռ, երկար կանգնած դիտում էր
Համեստ, անշուք ծաղիկը, մտմտալով իւր տըւած
Խոստման մասին. իսկ հոգին ապշուժիւնից, վարանքից
Ամբողջապէս յոյզ ելած, կանգնեց, կանգնեց վերջապէս. —

« Տըւէք ինձ մի ուրիշ թուր, ասաց յուզուած, եւ իսկոյն
Թող բանակը չու ելնէ . . . Զիս քաշեցէք . . . մեկնում ենք »:

Եւ ասպազէն, հետեւակ մարդկանց անթիւ մի բանակ
Իւր յետեւից քաշ տալով, որոնց սիրտը անտառի
Համեստ անշուք պատատուկն երկիւղ-սարսուռ էր լըցրել,
Նա հեռացաւ:

Ծաղիկը փրկել էր իւր սուրբ կոյսին:

Փոխադրութիւն Յր. Կօպպէից .

1906. Հոկտ. 3/16
Փարիզ.

ՏԻՐԱՅՐ ՎՍՐԴԱՊԵՏ



Յ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ր



Թնչաղի մըն էր: Աղեքսանդրիոյ նո-
րակառոյց քարափին երկայնքը կը
գեգերէի, անոր ամբողջ լայնալիճ աղեղը կըտ-
րել անցնելու տենդով մը ջղախուած: Աչքս
անկած Սելսելէի աշտարակին, որ հաստախա-
րիսի կը նստէր արեւելեան լեզուակին ծայրը,
գրեթէ մեքենաբար միայն կը տեսնէի ծովին
աղուոր խաղերը՝ արեւմուտքի նարնջագոյն ու
ա՛լ վատուժ ճաճանչաւորութիւն մէջ: Ի՛նչ հեշ-
տալի է այդ լքումը, անմտած ու ինքնաշարժ,
սրունքներուդ վրայ որոնք կ'առնեն կը տանին
քեզի՝ կարծես առանց ուզելուդ, ուղեղիդ մէջ
արձագանքելով քայլերուդ հնչիւնը, վանելով
դուրսի աղմուկները, որ ա՛լ հեռաւոր սղզանքի

մը պէս կ'ըլլան: Մերթ կանգ կ'առնէի, այդ
խօշարչաւ ինքնամոռացումէն վախցած, իրերուն
ու միջավայրին ըմբռնումին դառնալու անզուսպ
կարօտով մը. ու կը տեսնէի, հեռուն, հորիզո-
նին բարձունքին վրայ, կեցած առագաստանա-
ւեր՝ թեւատարած կարապներու պէս ճերմակ.
քարափին խարիսխէն դուրս երկնցած՝ նիզակնե-
րու նման՝ ձկնորսի եղէգներ. ու հոս հոն պէր-
պէրի կիսամերկ լակոտներ շաքարեղէգի կտոր-
ուանք իրարու ձեռքէ խլելով՝ ծուլթի պէս ճեր-
մակ ակոսներովն խածատելու համար վայրե-
նօրէն. ասդին, բարամբին վրայ, ուռեցուորած
բոպիկ սոտերները վար կ'ախած, Ֆելլահին մը
կաթ կուտայ իր լաճին՝ վիթխարի ծիծի մը տակ
ծածկած անոր դէմքը: Պատկերին միօրինակու-
թենէն սրտնեղ՝ նորէն ճամբայ կ'ելլայի սրա-
վար, ինքնաշարժ, գրեթէ գիտով:
Սելսելէի իրանը կը մեծնար հետզհետէ.
Ծովափին լիկած ջրեմուռներուն կծու հոտը վեր

կ'ելլար՝ իրիկուան լոյծ խոնաւին հետ հոտոտե-
լիքէդ ուղեղիդ թափանցելով մինչեւ : Մովա-
ծփանքը կ'արապանար , կը խտանար , հալած
կլայիկի գորշ կապուտակով մը՝ անհունօրէն
փոթփոթուած , յորձանաչարժ : կ' ուզէի սակայն
համիւ հոն , վերը , աշտարակին քով , վերջա-
լոյսը չնուաղած , եւ այս մտահոգութեամբ կը
պատրաստուէի վերջին խոյանքի մը անձնատուր
ըլլալ երբ , ետեւէս , շնչասպառ ձայն մը պոռաց
ինձի :

— Բարեկա՛մ , կեցիր վայրկեան մը :

Ու կեցայ , մէկէնիմէկ , իրբ թէ մէկը յան-
կարծ փնչէս քաշած ըլլար ուժգնութեամբ :
Եւ իրու , այդ ձայնը՝ ձեռքի այդ հարուածին
դերը կատարած էր . որովհետեւ անիկա սովո-
րակսն ձայնը չէր . անձկոտ , պաղատող , բայց
հուժկու ալ բան մը ունէր , որ սարսուռի ցունց
մը առաւ ջիզերուս :

— Ես եմ , չճանչցա՞ր զիս , ըսաւ մարդ մը ,
դէմս ցցուելով :

Նայեցայ , քիչ մը անշուշտ ազդուած հան-
դիպումին անակնկալէն : Ո՞վ էր որ այդպէս
օձիքիս կը կտուչէր , անձնական ստ շատ մտե-
րիմ հաճոյքիս մէջ , երազանքի անուշ բոպէի մը ,
որ այնքան թանկագին է տառապող մտքերու
համար :

Եւ երբ կը ջանայի այդ դէմքին մէջ ճանչ-
ւոր մարդ մը երեւան հանել :

— Այո՛ , ես եմ , աւելցուց , Հրա՛նդը , վա-
ղեմի բարեկամդ : Հէ՞ , չե՞ս ճանչնար , վրայ բե-
րաւ տեսակ մը հեզնականութեամբ , սանկ դէմքը
խմինիս մօտեցնելով՝ իբր թէ մութի մէջ ըլլա-
յինք :

— Վա՛յ , Հրա՛նտ , դուն հո՞ս , ուրկէ ո՛ւր ,
բացազանչեցի՛ մանկութեան այդ ընկերոջս ճիւղը
նետուելու շարժումով մը , զոր սակայն կեցուց
ան՝ ձեռքի խափանարար քիրտ ժեսդով մը :

— Բալնէ՛ք , ըսաւ , ժամանակ չտալով որ
ես դիտողութիւն մը ընէի իր ոչ-համակրական
այդ վարմունքին համար : Թեւէս բռնեց , ու սկը-
սանք քալել լուռ ու մունջ , որովհետեւ մէկէն-
իմէկ այդ ծանր բանը եղած էր մեր մէջ , մենք
որ մինչեւ տասը տարի առաջ մտերիմ բարե-
կամներ էինք , Պոլիս : Ո՛րքան փոխուած կը
տեսնէի զինքը հիմա : Զուարթ , չէնչող երիտա-

սարդ մըն էր , կեանքին դժպատեհութիւնները
արձամարնող , իրերու եւ դէպքերու գերազան-
ցօրէն լաւատես ըմբռնումով մը , որ մինչեւ տե-
սակ մը միամտութեան կը մղէր զինքը : Մէկ-
տեղ գացած էինք դպրոց , ուր անիկա՝ ժամա-
նակին մանկավարժական ըմբռնումին համեմատ՝
ուսուցիչներուն կողմէ տեսակ մը վրան-բաց
աշատութեան առարկայ եղած էր , իր հօրը ու-
նեւորութեանը եւ ազդեցիկութեանը պատճա-
ռաւ : Սակայն , իր նկարագրին բարի հիմը թող
չէր իտար իրեն օգտուել իր այդ բազառիկ հոն-
գամանքէն՝ գոտող ու չարտերտ ընկեր մը ըլլա-
լու համար : Այնիւ ու վերանձն , հեզնանքի
ժպիտ մը կ'ունենար ամէն անգամ որ՝ իր մէկ
չարածճիութեանը համար՝ կառավարիչը ուրիշ
աշակերտի մը վրայ իր խստութիւնը յանեցնէր՝
տեսած էի նոյն իսկ որ օր մը անիկա դրամա-
կան պարգեւ մը սպրդեցուց աշակերտի մը փրո ,
որ իրեն համար պատժուած էր անիրուօրէն :
Մեր բարեկամութիւնը շարունակուեցաւ դպրո-
ցէն դուրս ալ , հասուկ կեանքի յորձանքին մէջ :
Նեղութեան օրերուս միակ յոյսս ան էր : Ու
մինակ ինձի համար չէր որ ատանկ էր ան . մեր
մտերմական շրջանակին մէջ քիչեր կային որ
անկից օգտուած չըլլային նիւթապէս : Հայրը
վաճառական , ինքն ալ վաճառական եղաւ . բայց
մեծանձն , զուարթ , ու լայնախոհ վաճառական
մը : Գճի դէպքերուն՝ բնակոյնաբար կորսնցու-
ցինք զիրար , շնչասպառ ու խելայից ցրուումին
պահուն , որ հայրը՝ զաւկէն , եղբայրը՝ քրոջմէն
զատեց : Եւ անա տասը տարի վերջը , ան մէ-
կէնիմէկ դէմս կ'ելլար . Միջերկրականի փե-
րուն վրայ , յանկարծական ու տարօրինակ ,
վրան գլուխը թափած թափթփած , ծիւրադէմ ,
աչուըններուն ծանօթ մշտակայ ժպիտին տեղ՝
գոռող , կրնամ ըսել՝ յարձակողական դառնու-
թեան չողարձակումով մը , որ աչքէս չվրիպե-
ցաւ նոյն իսկ հող , անջրպետին չորս կողմերէն
մաղուել սկսող մանրացնող մթութեան մէջ :
Տարակոյս չիկար . տանջանքի հալոցին մէջ մտած
ելած էր , քայքայումի այդ կաղապարին տակ ,
ինչպէս բոլոր Հայերը՝ քիչ շատ :

Բոպէի մը մէջ այս բոլոր բաները մաքէս
անցան . ու դեռ կը յամենայի անոնց վրայ երբ
Հրանտ՝ իր երկար ոսկրուա մասներուն մէջ
թեւս սեղմելով :

— Դրամ ունի՞ս, հարցուց անփոյթ շեշտով մը :

— Պէ՞տք ունիս, ըսի ձեռքս գրպանս խոթելու շարժումով մը, զոր ան դարձեալ կեցուց :

— Ս՛ ոչ, տեղ մը երթանք նստինք. քեզի թօ՛սաֆ բաներ պիտի պատմեմ . . . որովհետեւ . . . վերջապէս մէկուն պատմելու եմ ինչ որ եղաւ . . .

Չայնը պղտոր հնչեց ականջիս : Իսկոյն ետ դարձանք՝ մեծաբայլ հեռանալով քարափէն, որուն կուգային կը զարնուէին հիմա ծովին ջուրերը խուլ շառաչմամբ, յայտեր արձակելով մինչեւ բարամբէն ասդին :

Բարեկամիս վարմունքին տարօրինակ եւ գրեթէ կոպիտ հղանակը շրթներուս վրայ կը սառեցնէր կարգ մը շատ բնական հարցումներ, զորս անոր պիտի ուզզէի՝ իր յեղակարծ երեւումին առթիւ : Միայն, միւս կողմէ, ես ալ կը մղուէի վիպական բաներ մը տեսնել այս ամենուն մէջ, տիւմայական տռամի մը գրուազը, խռոնուած հնութեան մեծ պատկերներուն, որոնք երեւակայութիւնս անդադար կը վառէին ամէն անգամ որ պողոմէական մարմարեղէն վաղնջուց պալատներու այդ վայրերուն մէջ թափառէի, աւերակի բեկորներ գտնելու մարմաջով : Ուստի լռիկ մնչիկ կ'երթայինք՝ աւազներուն մէջ թաղուելով, քարերու զարնուելով ամէն մէկ քայլերնուս :

— Եա հունա՛, եթէ կ'ուզես, ըսաւ Հրանտ ծովահայկաց գարեջրատուն մը ցուցնելով, որուն մօտեցած էինք եւ որ լոյսերու մէջ կը շողար :

Ներսը, մէկուսի սեղանի մը շուրջը նստանք դէմ դիմաց : Հիմակ, աւելի դիւրաւ կրնայի վրննել բարեկամիս դէմքը, որուն ամբողջ ահա որ մաշուածութիւնը դուրս կը ցայտէր լամպարներուն դեղնաշորթ լոյսին տակ : Շապիկը օձիք չունէր, ոչ ալ փողկապ : Բաճկոնը իւզոտած էր, ու մաշած թելերը կ'երեւային : Իր վրայ ամէն բան թափառայած պոհեմի յանգուզն, սանձարձակ ու տխուր անմտածութիւնը կը մասնէր : Անոր մէջ ինծի ծանօթ մարդը մտած էր գրեթէ, եւ ուրիշ մէկը կար, ալքովի տնտղովը բռնկած նայուածքով, շրթներուն անկիւններուն վրայ պեղուած երկար խրամներով որոնք այտոսկրնե-

րէն մինչեւ թուշը կ'իջնային : Ուսերը վեր տընկուած էին, վտիտ ու մսկոտ :

— Ապսէ՛նդ մը, հրամայեց սպասուորին, որ մեզի մօտեցած էր. իսկ դո՛ւն, հարցուց ինծի դառնալով :

— Գարեջուր մը, ըսի :

Հրանտ ապսէնգամո՛ւլ. ան որ, ատենօք, գարեջուրը անգամ չուզելով կը խմէր : Ու դիտեցի՝ կանանչորակ թոյնին երկար գաւաթը շրթներուն տանիլը տեսակ մը հաճոյական եւ ակներեւ վարժութեամբ, որ ինծի կսկծալի վայրենութիւն մը թուեցաւ : Մէկէնիմէկ զզուանքով լեցուեցայ այդ մարդուն առջեւ, որուն շարժումները, նայուածքը, խօսելու եղանակը, ամէն բան կը ջնջէր միւսը, նախկին ընկերը եւ բարեկամը :

— Հիմակ ա՛լ սկսած եմ թեթեւ գտնալ ապսէնդը, ըսաւ վար գնելով գաւաթը, բայց հոս հաշիշի երկիրն է. հէ՞, աւելցուց քստմնելի քիծածաղով մը երեսս նայելով :

— Երկրին մէջ այդ թոյնին մուտքը արգելուած է խօսիւ, մեծ պատիժ ու տուգանք կայ, ըսի՝ անոր աչքը վախցնելու մտադրութեամբ :

— Ս.միս մըն է որ հոս եմ, կարելի է քսան անգամ մը քաշեցի անկէ, ըսաւ. առաջին անգամը անհաճոյ երազներ տեսայ. բայց ետքէն՝ յուռութքս ձեռքիս մէջ բռնելով, ա՛լ այդ երազները չտեսայ . . .

— Առաջին անգամուսնը ի՞նչ տեսակ երազներ էին :

— Օ՛ մի՛ հարցուններ. ինչ որ պիտի պատահէր երբոր արքայութիւն երթայի. մարդիկները հրեշտակի թեւեր ունէին. մարդիկնե՛րը, երեւակայէ, շեշտեց ապսէնդին գաւաթը նորէն շրթներուն տանելով :

— Իսկ յետո՞յ, պնդեցի՝ խեղճ բարեկամիս մտաւորական անկումին ցաւազին հաստատուը ընկու յամառութեամբ մը :

— Յետոյ, ա՛լ անկէ ետքը ամէն անգամուն ձեռքիս մէջ բռնեցի յուռութքս, միտքս անոր վրայ սեւեռելով՝ թմրութեան անուշ ամպերուն մօտեցած ատենը. ու ա՛լ մարդիկները կ'երեւնան իրենց բո՛ւն կերպարանքովը, սատանայի պէս սեւ եւ կապիկի պէս ծիծաղելի, վերջացուց ան վրիժառութեան ռևերիմ շեշտով մը :

« Յուսուժք » բառը , զոր երկիցս արտասանեց շատ յարգալից , եւ մասնաւորապէս երկիրդած կերպով մը , թուեցաւ ինծի այն լլկիչ մտասեւեռումներէն մէկը , որոնք անբուժելի խենդերուն միայն առանձնայատուկ են . ըստ որում արդէն սկսած էի խենդ մը նկատել բարեկամս :

— Ի՞նչ յուսուժք է այդ , հարցուցի :

— Ահա՛ , ըսաւ աջ ձեռքին մատներովը բաճկոնակին ճեղքէն դուրս քաշելով թիթեղէ փոքրիկ տփիկ մը , որ բարակ առասանով մը ճիւտէն կախուած էր . ասիկա , շարունակեց , իմ միակ պաշտպանս է այլեւս . բոլոր մարդկութիւնը մէկտեղած չի կրնար զիս իտարել քանի որ ասիկա ունիմ , կ'ըսէր երկու ձեռուքներուն մէջ խանդաղատանօք սեղմելով այդ անպլտ մետաղէ տփիկը եւ զայն համբուրելու ձեւեր ընելով :

Կրնաք երեւակայել տրտմութիւնս , հետզհետէ հաստատուելով բարեկամս խենդեցած նկատելու համոզումս մէջ . եւ արդէն իսկ մտքիս մէջ կը պտըտցնէի այն պաշտօնական գործողութիւնները որոնք ընդհանրապէս տեղի կ'ունենան առաջնորդարանին մէջ , աղքատ հիւանդներու հիւանդանոց փոխադրութեան համար , երբ ան՝

— Թերեւս հիմա մտածես որ , ըսաւ , Հրանտը չելլա՞յ խենդեցած ըլլայ . չէ՛ , բարեկամ , չեմ խենդեցած , յայտարարեց կամաց մը նորէն ներս քշելով թիթեղէ տփիկը . ու հիմա պիտի հասկնաս թէ ի՞նչպէս չեմ խենդեցած , հակառակ անոր որ չխենդենալս արդէն ինքնին զարմանալի բան մը ըլլայ . . . Միայն թէ սկսելէս առաջ ապսէնդ մըն ալ , աւելցուց , աղաչական , գաւաթին տակը մնացած կաթիլները ծծելով անյագօրէն :

Այդ վայրկենին տրամադիր էի զրպանիս բոլոր դրամը ապսէնդի յատկացնելու , այդ կենդանի հանելուկին լուծումը ձեռք բերելու համար :

Հրանտ բաճկոնին զրպանէն սեփսեւ , ծուռումուռ սիկառ մը հանեց՝ քիչ մը քրքրուած թերթերով , վառեց ու սկսաւ ծխել , նոր գաւաթին մէջ կուշտ մը թաթխելէ յետոյ չրթները :

— Պոլսէն բաժնուած ատենդ , սկսաւ ան՝ Թաղիքէ հալուամաջ գլխարկը ընթուիներուն վրայ

տեղաւորելով , գիտէիր թէ նիւթական ի՞նչ վիճակ ունէինք : Յի՛ն հայրս մեռաւ յանկարծ , ամբողջ հարստութիւնը ու գործը ինծի ձգելով : Գիտես թէ հայրս ո՛ր աստիճան չըջահայեաց մարդ էր . դէպքերը եւ անոնց հետեւանքները նախատեսելով՝ հեռուոր եւ մօտաւոր հրապարակներուն վրայ մեր ունեցած առնելիքները յաջողիք էր ժողվել՝ դրամը պառկեցնելով զանազան արժեթղթերու դնման , մասնաւորապէս Ֆրանսական ու եգիպտական . անանկ որ դէպքերուն հետեւանօք երբ մեր հրապարակին վրայ շատ հայ վաճառականներու դիրքը խախտեցաւ , մենք աննշան կորուսանիք միայն ունեցանք : Արդ , հօրս մահուամբը տասը հազար ոսկիի հարստութեան տէր կը գտնայի . ունենալով նաեւ հաստատուն ու նախանձելի դիրք մը հրապարակին վրայ , եւ գործ մը , որ , հանդարտօրէն ու խոհեմօրէն շարունակուելով , կրնար երջանիկ ընել զիս մինչեւ մահս . . .

Հրանտ , հոս , կանգ առնելով , երազականօրէն նայեցաւ սիկառին ոլորուն քուլաներուն , զորս մեղմիւ դուրս հանեց բերնէն՝ չրթները փոթիլով կարծես սուշելու համար :

— Բայց տես թէ ի՞նչ պատահեցաւ . բարեկամներէս , դպրոցի ու կեանքի մտերիմ ընկերներէս շատեր հեռացած էին Պոլսէն եւ զանազան երկիրներ ցրուած . Պուլկարիս , Ռուժանիս , Եգիպտոս , եւ այլն : Ծատ չանցած նամակներ սկսան հասնիլ ամէն կողմերէ . որը դրամական անմիջական նպաստ կ'ուզէր , որը իր բանալիք գործին համար դրամագլուխ , որն ալ արտասահմանի մէջ ընկերովի առեւտրական ճիւղ մը բանալու առաջարկ կ'ընէր : Արիւնալի դէպքերը եւ աղգային մեծ ցաւը արդէն մատնած էին զիս խորին թաղծութեան մը եւ ջղային այնպիսի դրութեան մը մէջ էի որ՝ ազգակիցներու դառն կացութեան դարման մը տանիլը , որքան որ կրնայի , ինծի համար սրբազան անհրաժեշտ պարտք մը երեւցաւ . ի՞նչպէս կրնայի մերժել անանկ մարդիկներ , որոնց հետ զրեթէ անցուցած էի կեանքս , մտերիմ ու յիշատակալից բարեկամութեան մը մէջ . ու հիմա որ անոնք ինկած էին առանց իրենց ուզելուն՝ պէտք չէ՛ր որ ձեռք կարկառէի անոնց : Կը ճանչնաս Գառնիկ Մեհրապեանը , Ասատուր Ճանկէօրէնեանը , Ղուկաս Կէօմրիք-

ճեանք: եւ ուրիշներ, որ դիմում գիմումի վրայ կ'ընէին: Չէի կրնար մերժել: Երկու տարուան մէջ պատրաստի ունեցած դրամիս գրեթէ կէսը այս տեսակ գործերու յատկացուցի: Գառնիկ՝ Ռուսճուգի մէջ, Ասատուր Կալացի մէջ մանիֆաթուրայի բաւական ընդարձակ գործեր բացին իմ գրամագլխովս: Ղուկաս, որուն արդէն մինչեւ Պոլսէն մեկնիլը այնքան օգնութիւններ բրած էի, Մարտիրոս մեկնած էր յետին ծայր կարօտութեան մէջ. անմիջապէս կարեւոր գումար մը զրկեցի իրեն, եւ ըսի որ եթէ չ'ուզեր Պոլիս զառնալ նորէն՝ կրնայ ուզած տեղը գործի մը ձեռնարկել, գրամագլխի մասին հոգ չընելով: Բաւական ժամանակ պատասխան չստացայ իրմէ, այնքան որ վախցայ թէ մեռած կ'ըլլայ: Յետոյ օր մըն ալ նամակ մը առի: Գահիրէ գացեր էր եւ 500 ոսկեոյ գումարի մը անմիջական պէտքը կար՝ մտնի Երկաթեղէնի գործ մը բանալու համար, որ չափազանց շահաբեր է եղեր՝ ընկեր պիտի ըլլայինք: Ֆիոման իր ու իմ անուանովս: Երկրորդել իսկ չտուի առաջարկը, եւ Քոնստանտինոպոլի վրայ քաջուած 500 ոսկինոց չէք մը զրկեցի իրեն: Ծիշշ այդ միջոցին Ռուսճուգէն ծանօթ մը ինձ կը գրէր թէ Գառնիկ Մեհրապեանը յանկարծ իր վաճառատունը ուրիշի մը փոխանցելով շատ շահաւէտ պայմաններով՝ յոյն կնոջ մը հետ առած քալած էր յայտնի չէ ո՛ւր: Այս անյուշալի վատութիւնը ինձի 700 ոսկիի կը նստէր: Առաջին ցնցումն էր որ կը կրէի...

Հրանտ, որուն ձայնին մէջ տրտում լրջութիւն մը արեւց մէկէնիմէկ, չոր հագով մը կողորդ մաքրելէ յետոյ, քանի մը ումպ ապսէնդ կուլ տուաւ եւ շարունակեց.

— Մտածեցի սակայն որ կնոջ մը մատը քանի որ կար գործին մէջ, մարդը այնքան ալ մեղաւոր ըլլալու չէր... վերջապէս ի՞նչ կըրնայի ընել: Երանի թէ կորուստս այսչափով վերջանար: ԾՅին սկիզբներն էր. օր մը ոստիւնութիւնը յանկարծ վաճառատունս կոխեց, գըրտեց թուղթերս, տետրակներս, եւ զիս ալ ձերբակալելով ոստիկանութեան գուռը տարին: Հարուածը այնքան ուժգին էր որ առաջին շնորհումիս մէջ բան մը ո՛չ մտածեցի, ոչ ըրի. մութ եւ խոնար բանտի մը խորը նետեցին զիս, ուր օրերով մնացի, առանց որ մէկը գար հարցնէր փնտտէր զիս. վերջապէս սթափած, գլխուս

ճարը նայիլ ջանացի: Երեք ամիս անընդհատ դիմումներ ըրի ոստիկանութեան նախարարին, գործիս քննութեանը համար. սաչափը միայն կրցայ հասկնալ թէ մատնուած էի իբրեւ Հընչակեան գործիչ, որով եւ է՛ն մտերիմ բարեկամներս իսկ չէին համարձակեր միջամտութիւն մը փորձել. ստիպուեցայ գրամ խաղցնել... Երկար կ'ըլլայ հիմա մանրամասնել ինչ որ քաջեցի եւ ինչ որ խարճեցի բանտէն ազատուելու համար... հինգ վեց հարիւր ոսկի շունչանուորին կողորդը լեցուցի: Վաճառատունս թէեւ բացի նորէն, բայց գործս մեծապէս սկսած էր կաղալ. Կալացէն ու Գահիրէէն բնաւ լուր չի կար. նամակ նամակի վրայ գրեցի. պատասխան բնա՛ւ: Եւ ահա նոր զժբախտութիւն մը հասաւ. Ք... եան տունը մտանկանալով՝ 750 ոսկիի առնելիքս կ'ոչնչանար: Պաղարիւնութիւնըս, զոր մինչեւ իսկ բանտին մէջ պահած էի, քիչ քիչ սկսաւ պակսիլ... Այս տագնապներուն միջոցին է որ ոստիկանութիւնը երկրորդ անգամ խուզարկեց վաճառատունս եւ բանտարկեց զիս: Այս անգամ աւելի շուտ ազատեցայ, բայց աւելի շատ գրամ կերցնելով: Դուրս ելլալուս, քանի մը Թուրքի, որոնց վրայ կարեւոր պահանջներ ունէի, մերժեցին վճարում ընել: Ղատարան անգամ չդիմեցի: Կալացի ու Գահիրէի բարեկամներս կը շարունակէին իրենց զարմանալի լռութիւնը, հակառակ իրարու ետեւէ գրած նամակներուս: Ու ա՛լ անկէց ետքը, մինչեւ 905, երբ վերջապէս մեկնեցայ Պոլսէն, տարին երկու երեք հեղ չափեցի ոստիկանութեան բանտը՝ միշտ ափ մը ոսկի նետելով գայլերուն բերանը՝ ազատուելու համար: Փճացած էի, այո, փճացած էի, անչըպետեց Հրանտ, որուն ճակտին վրայ քրտինքի կայլակներ շարուած էին, ու աչուրներուն մէջ ալքոլին յարուցած փայլատակումին հետ կատաղութեան կայծեր կը շողային. ու պահ մը գոցեց զանոնք կլլելու համար կանաչորակ ըմպելին, որ թոթուեց անոր մարմինը:

Յետոյ, ան նորէն շարունակեց՝ իրարու վրայ քանի մը հեղ ուժգին մը քաշելէ ետքը սրկառը.

— Երկու հարիւր ոսկիի գումար մը մնացած էր քովս. հազարները թռած գացած էին (ու ափին մէջ բերնովը փչեց մինչեւ մատները).

որոշեցի փախչիլ Պոլսէն, դեռ բոլորովին չփր-
 ճացած. 59 ոսկի ծախսեցի ինքզինքս մինչև
 Քէօսթէնճէ նետելու համար. . . Շունչս Կա-
 յոց առի, Ասատուրը գտնելու յոյսով. ափսո՛ս,
 ոչ խանութ գտայ, ոչ Ասատուր. ըսին թէ ան
 շատոնց մեկնած էր Ամերիկա՝ լմնցընելէ յետոյ
 ձեռքը գտնուած դրամը, յետին չքաւորութեան
 մէջ, Գլխիկոյ թողուցի Կալացը, անցայ Պուք-
 րէշ, Ղիսննա, ու Բարիզ հասայ հազիւ հարիւր
 ոսկի գումարով մը. . . Գործ մը ընելու գիտա-
 ւորութեամբ՝ միացայ թշուառականի մը որ զիս
 համոզեց թէ մեծ շահ կար պարսկական ու հնդ-
 կական թանկագին քարերու առուծախին մէջ,
 Իրաւ ալ առաջին հարուածով բաւական կտրիկ
 շահ մը ըրինք. ընկերոջս նկարագրին անծանօթ՝
 ամէն կերպով անձնատուր եղայ իրեն. ու օրին
 մէկն ալ անյայտ եղաւ ան՝ ամէն բան տանե-
 լով, քարերն ու դրամները, եւ զիս թողլով
 փողոցը, անօթի եւ անդրամ. . .

Այս ամբողջ ցուագին պատմութեան միջո-
 ցին լուռ ու մունջ մտիկ ըրած էի զինքը, ա-
 ռանց ոչ մէկ անգամ ընդհատելու: Տեսայ որ՝
 այդ դժնդակ կէտին հասնելուն՝ կանգ առաւ
 Հրանտ՝ մտածմունքներու մէջ խորասոյզ, գէմքը
 տարօրինակ կերպով եղծուած:

— Յետոյ, հարցուցի՝ այդ վշտալի ողի-
 սականին վախճանը հասկնալու անհամբեր:

— Յետոյ, կրկնեց երեսո նայելով յիմա-
 րօրէն. ազիլ մը ինկայ քանի մը օր խնամուելու
 համար, որովհետեւ յուզումէս ջգային տագնապ-
 ներ ունեցայ: Անկից դուրս ելլելուս պէս ուրիշ
 մտածում չունեցայ եթէ ոչ իսկոյն Եգիպտոս
 նետուիլ՝ Ղուկաս Կէօմրիւկճեանին, որ անշուշտ
 ողջ էր եւ անհետացած չէր մեր վերջին ոսկի-
 ներուն հետ, ինչպէս միւսները: Մարսիխայէն
 բեռի չոգեաւ մը սպրդեցայ գրեթէ գաղտագո-
 ղի, եւ նաւատիներու աշխատութեանց մաս-
 նակցելով՝ հասայ Բոր-Սաիտ, ասկէց ամէս մը
 առաջ, Ի՛նչի մը օր ետքը յաջողեցայ շոգեկառ-
 քի դրամ մը ձեռք ձգել եւ շունչս Գահիրէ առ-
 նել, ուր առաջին գործս եղաւ Ղուկասը փնտը-
 ոել: Ես կը յուսայի երկաթեղէնի խանութի մը
 մէջ գտնել զինքը. բայց անա բոլորովին տարբեր
 դիրքով մը ներկայացաւ ինձի: Երբոր հայ սըր-
 ճարանի մը մէջ անոր անունը սուրի, ամէն մարդ
 զարմացմամբ ինձի նայեցաւ, կարծես ըսել ու-

զելով թէ ի՛նչպէս կը համարձակէի ատանկ մէկ
 մարդ մը հարցնել փնտուել. ե՛ս, ողորմելի թա-
 փառաշրջիկս. միամտօրէն ըսի թէ ես անոր մը-
 տերիմ բարեկամն էի եւ իր գործին ընկերը.
 քահքահ մըն է փրցուցին. նեղուած, շուարած,
 շուրջիններուս երեսը կը նայէի, անոնց արգա-
 հատանքի ու ծաղրի նայուածքներուն տակ ջախ-
 ջախուած: Յետոյ վերջապէս անոնցմէ մէկը,
 զուցէ մեղքնալով զիս, ըսաւ թէ սխալած ըլլա-
 լու էի, որովհետեւ Ղուկաս Կէօմրիւկճեանը
 շատ հարուստ մարդ մըն էր, թէ մեծ ու փա-
 ռաւոր ափառթուման մը կը նստէր, պանքէճէ մը
 տարբերութիւն չունէր, հողատէր էր եւ մեծա-
 պէս ազդեցիկ պորսային մէջ: Այս պարագաները
 իմանալով, ներքնապէս սաստիկ կ'ուրախանայի-
 ինքզինքս փրկուած կը նկատէի, քանի որ բա-
 րեկամս այդքան հարստացած էր: Իսկոյն դուրս
 ելայ սրճարանէն, Ղուկասը գտնելու համար
 չուտով, ինչ որ շատ դժուար չնկաւ. դրասնե-
 եակը արդարեւ պանքա մը երեւցաւ ինձի՝
 դուրսէն երբ ակնարկ մը նետեցի ներս: Արապ
 գանապանը դրանը առջեւ կեցուց զիս. բարե-
 կամիս անունը տուի. մարդը վրաս գլուխս նա-
 յեցաւ եւ արարերէն բաներ մը ըսելով թող
 չտուաւ որ ներս մտնամ: Անմիջապէս թուղթի
 կտորի մը վրայ գրեցի. « Սիրելի Ղուկաս, եկած
 եմ. գրասենեակիդ դուռն եմ այս պահուս. »
 եւ ստորագրեցի. արապը առաւ թուղթը եւ
 ներս մտաւ. հինգ վայրկեանս ետքը եկաւ՝ տուած
 թուղթս ձեռքը. կասկածոտ մը սանկ նորէն
 չսփչիկեց զիս եւ երկառոզս ինձի առաւով. « խո-
 վակա մաֆիշ » ըսաւ կտրուկ եւ խոժոռ: Ի՛նչ
 ընէի, լեզու չէի գիտեր այդ վայրենիին հետ
 բացատրուելու համար. եթէ խավական հոն չէր,
 ինչո՞ւ ուրեմն թուղթս մինչև ներս տարաւ. .
 արգեօք, կը մտածէի, որի՞ջ Ղուկաս Կէօմրիւկ-
 ճեան մըն էր ատ, որ զիս չէր ճանչնար: Փորձ
 մըն ալ ըրի ներս մտնալու, բայց արապը « կալ-
 լահ, բո՛ւհ » մը պոռալով զիս դուրս հրեց եւ
 գրասենեակին դուռը սոցեց: Վարսնում, չփո-
 թութիւն, զայրոյթ իրար խառնուած էին ներսս:
 Դուրս ելայ փողոցին մայթին վրայ սըքտալու.
 համար մինչև որ Ղուկաս դուրս ելար, եւ այն
 ատեն դիւրին էր զայն ճանչնալ. . . Կէս ժամ
 չանցած՝ գեղեցիկ կառք մը եկաւ կեցաւ չէն-
 քին գրանը առջեւ: Աչքս այդ դուռին սուեռած

գիմացի մայթին վրայ կեցած էի: Ի՛նչպէս եղաւ չեմ գիտեր, մէկ միջոց մը ուժգնօրէն եւ յանկարծակի դռնէն դուրս մէկը ելաւ. ցատքեց կառքին մէջ, եւ կառքը սահեցաւ գնաց իր քառուչուէ անիւներուն վրայ. ու ես քարացած մնացի հոն, քայլ մը առնելու անկարող. այո՛, տեսած էի, Ղուկասն էր, մեր բարեկամը, բուլորովին փոխուած, գէր, առողջ, փառաւոր հագուած. ու տեսած էր զիս, տեսած էինք զիրար, փայլակի արագութեամբ: Ու կառքը արդէն հեռացած էր երբ չորցած կոկորդէս ձայն մը ելաւ. « Ղուկա՛ս, Ղուկա՛ս . . . »:

Հրանտ, դեփ-գեղին կտրած, գրեթէ չընչասպառ, ընդհատեց խօսքը. մասները, որոնցմով բռնած էր սիկառը, կը դողային. եւ գերագոյն ճիգի մը մէջ, կարծես ինքզինքին դէմ գօտեպնդուելու համար՝ զժնդակօրէն ապսէնդին գաւաթը բերնին տարաւ . . .

— Այո՛, շարունակեց, Ղուկասն էր, մեր պատուական Ղուկասը. բայց զժուարութիւն մը կը տեսնայի, կը զգայի անոր հետ դէմ դիմաց գալու. Չէի ուզեր հաւատալ թէ ան չէր ուզեր տեսնուիլ ինծի հետ. մեր բազմամեայ բարեկամութիւնը եւ մանր երկաթեղէնի գործը կար. . . Հայուն սրճարանը դարձայ նորէն, ճար մը փընտոնելով, Թուղթ մը առի եւ նամակ մը գրեցի. « Սիրելի Ղուկաս, ըսի, ես եկած եմ. սոսկալի ձախորդութեանց հանդիպեցայ. ինչդեմ, շուտով տեսնուելու դիւրութիւն մը սուր ինծի. այսօր երիկուան օրէն նորէն գրասենեակը կուգամ: » Եւ նամակը առանց բուլի ձգեցի փոսզան: Յուսալից, ժամը օրէն նորէն ներկայացայ. միեւնոյն արապը դէմս ելաւ նորէն. « խավակա՞ » հարցուցի. « մաքիչ » պատասխանեց իր բիրտ ձայնովը. բարկացած, այլայլած, ուզեցի բռնութեան դիմել. ու ներս խուժեցի. արապը վրաս յարձակեցաւ. իրարու փաթթուեցանք: Ելած աղմուկէն երկու երիտասարդներ ներսէն դուրս վազեցին ու զիս ազատեցին արապին ձեռքէն. շնչասպառ, մոլեգնած՝ կ'ուզէի նորէն յարձակիլ այդ վայրենիին վրայ, երբ երիտասարդներէն մէկը « ո՞վ կուզէք » հարցուց:

— Այս գրասենեակին տէրը Ղուկաս կ'օժրիւկճեանը չէ՞, հարցուցի:

— Այո՛, ըսին միաբերան:

— Լաւ, զիս իր քովը տարէք, իմ վաղեմի

բարեկամս է, ըսի:

Երիտասարդները իրարու երես նայեցան քմծիծաղով մը. յետոյ ինծի պատուիրեցին որ դուրսը դրանը առջեւը սպասեմ խելօք մը, պատասխան ստանալու համար: Դուրս ելայ ու սպասեցի. քանի մը վայրկեան ետքը անոնցմէ մէկը ձեռքը դռնէն դուրս կարկառելով կ'ըսէր ինծի.

— Ա՛ն, բայց ուրիշ անգամ հոս մի՛ հանդիպիր . . .

Մեքենաբար առի ինծի երկնցած այդ ձեռքին պարունակութիւնը ու, խելակորոյս, դուրս ելայ այդ խելօղով վայրէն . . . փողոցը շուտ շուտ կը քալէի՝ ափովս սեղմած այդ բանը, զոր չէի համարձակիր նայիլ. կը զգայի որ զրամ էր, ողորմութիւն մը, զոր իմ վաղեմի ու պատուական ու երախտահատոյց բարեկամս ինծի շնորհած էր. ոսկի մը անշուշտ, մանր երկաթեղէնի առեւտուրին համար իրեն զրկած հինգ հարիւր ոսկիներէս մէկը . . . ու բացի ափս, ու նայեցայ . . .

Հինգ դրուշնոց մըն էր:

Եթէ չես հաւատար, ահաւասիկ, ըսաւ Հրանտ մասները նորէն բաճկոնակին ձեղքէն ներս խոթելով ու հոռակիւնի թիթեղէ տփիկը դուրս հանելով, զոր ճիգով մը բացաւ:

Արծաթ հինգնոց մը դուրս ինկաւ մէջէն, զոր տեսակ մը գուրգուրանքով բռնեց Հրանտ. հագուստին քսեց մաքրելու եւ փայլեցնելու համար. յետոյ նորէն մէջը դրաւ եւ տփիկը՝ ներս՝ իր տեղը քչեց:

— Իմ յուրութքս է աս, աւելցուց երեսու նայելով ապսէնդէն շմորած աշուրներովը, որոնց մէջ լըջութեան ահարկու կայծ մը տեսայ. ասիկա քանի որ ունիմ, ա՛լ չեմ վախնար որ մարդիկները կրնան խաբել զիս. օ՛, ո՛չ, մամընաց սիկառը ուժգնօրէն նետելով գարեջրատան մէկ անկիւնը. բոլոր մարդիկներէն կը կասկածիմ, նոյն իսկ քենէ՛, որ ասանկ խելօք մը սա վայրկեանիս դէմս նստա՛ պատմութիւնս մտիկ ըրիր, ցաւած ու կարեկից դէմքով . . . Դուն ալ Ղուկաս կէօմրիւկճեանէն աւելի արժէք մը չունիս ինծի համար. վաղը, վստահ եմ, միեւնոյն պայմաններուն տակ, միեւնոյն վատութիւնը դուն ալ կ'ընես . . .

Եւ մինչ ձեռքի լայն շարժումներով կը

փորձէի բողոքել տաք տաք հրեսիս նետուած այս արեւնալի կասկածանքին գէժ, Հրանտ ա- ճապարանօք ոտքի ելաւ, եւ գէպ ի դուռը քալելով արագութեամբ,

— Հո՛ւս է, հո՛ւս, ամբողջ մարդկային բա- րոյականը հո՛ւս է, գոչեց յուռութքը մատնանշե- լով կուրծքին վրայ :

Ու անյայտ եղաւ մութին մէջ :
Աղեփսանդրիս ԵՐՈՒՆԱՆ



ՀԱՅ ԳԵՂՁՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական երգերի ծաւալումը եւ սզդեցութիւնը

Ժողովրդական եղանակների բարբառներ . — Ժողովրդական եղանակները սեյտ առնչու- թիւն եւ բնական կապ ունին տեղական պայ- մանների հետ, որոնք ծնում են միջավայրին յատուկ ոճեր . ուստի մի երաժշտական միտք, այլ եւ այլ տեղերում ստանում է տեսակ տե- սակ բնորոշ արտայայտութիւն : Մի տեղ պարզ է եղանակի ոճը, միւս տեղ ճապաղ . մէկ տեղ լերկ, մի չորրորդում ոլորուն, հինգերորդում տափակ, վեցերորդ տեղում գեղարուեստական, եւայլն : Թէպէտ ձեւով եւ արտայայտութիւնով զանազան են, բայց եւ բոյորի հիմքը նոյնն է, բոլորն էլ ունին մի ընդհանուր երաժշտական արմատ, որ յատուկ է Հային :

Տեղական եղանակներից ծագում են երա- ժշտական գաւառական բարբառներ, որոնք այնքան որոշ են, որ զիւրացին ջոկում է մէկը միւսից աշխարհագրական անուններով :

Նախ ազգային եւ օտար երաժշտութեան սահմանն է գծում այսպէս : Հայի, քրդի եւ տաճկի եղանակ են ասում արեւմտեան Հայերը, իսկ հայի, քրդի, թուրքի (թաթարի) եւ պարսկի

արեւելեանները : Նոյնպէս յոյն, ասորի, ուսու եւ ուրիշ եղանակների անուններ էլ են յիշում, բայց վերեւ բերածները, իւրաքանչիւրն իր հա- մապատասխան լեզուով, երգում էլ է :

Իր եղանակները բաժանում է այսպէս : Սարի եւ արանի (դաշտի) եղանակ ասելով մի բնական աշխարհագրական սահման է քաշում կրդի մէջ : Երկրորդ՝ Աբարանայ, Շիրակայ, Ալաշկերտու, Վանայ, Մոկաց, Մշոյ, Ակնայ, եւայլն եղանակ ասելով խմբում է նման երա- ժշտական, գաւառական բարբառներն իրար մօտ : Երրորդ՝ Կողքի, Իգդիրի, Բլուրի, Սար- դարապատի, Գառնուայ, Բանաքնոի, Ալիքու- չակի, Մաստարայի եւայլն եղանակ ասելով էլ մասնա-որում է գաւառականի վրայ իշխող գիւ- ղերի երաժշտական ոճը, որ աւելի գեղարուես- տորէն է ներկայացնում ընդհանուրի ոգուն յա- տուկ գծերը : Օրինակ, արեւելեան հայ գեղջուկի համար յարգի, անուանի, գովական եւ հեղի- նակաւոր են Կողք գիւղի եղանակները :

Այս անգամ, դժբաղդաբար, քաղաքական հանգամանքներն արգելք եղան, չը կարողացանք հայ ժողովրդական բարբառների տոանձնակե- ուսումնասիրութիւնները լրացնել եւ իւրաքան- չիւր աշխարհագրական եւ երաժշտական ստոյգ սահմանները որոշել :

Ժողովրդական եղանակի կեանքը . — Ժո- ղովրդական եղանակների կեանքն ընդհանրա- պէս կարճ է . որովհետեւ նորերը շուտ շուտ են դուրս գալի, ընդհանրանում են, ինչպէս հե- տաքքերական լուր, եւ արմատ ձգում այնքան շատ, խոր եւ մեծ, որքան աւելի են համա- պատասխանում զանազան տեղերի ժողովրդա- կան կեանքի պայմաններին :

Տեւական եւ գրիմացկուն են շինական, ծի- սական, վիպական, վիպաքնարական, անտունի եղանակները, որոնք դարերով եւ ամուր կապ- ուած են ժողովրդական սովորութիւնների եւ աւանդութիւնների հետ : Բայց որովհետեւ բարդ են, գիւղացիներից շատին անմատչելի են : Այժմ իմացողներին մատով են ցոյց տալի : Սու- վորութիւնների հետ այս կարգի եղանակներն էլ են կորչում :

Վիպականը բարդ է, որովհետեւ անբաժան է եւ վէպը եղանակից : Պատմական վիպաքնա- րականը թէպէտ պարզ եղանակ ունի, բայց

երկար պատմերգութիւն է : Շինականներից
գծուար են գովածներգերը : Միսականից՝ հարս-
նեկանները , որոնց հետ հիւսուած են մի շարք
արարողութիւններ , եւն :

Ընդհակառակն են խաղերը , մանաւանդ
պարերգերը , որոնք շատ շուտ են անյայտանում .
որովհետեւ իւրաքանչիւրը պատկերացնում է
կեանքի մի սովորական բոպէ , կապուած է մի
որոշ անհատի հետ :

Պարերգերը հաս հաս եւ թուցիկ զգա-
ցումների մի շար են եւ բովանդակութեան հա-
մաձայն էլ արտայայտութիւն են փոխում : Բուն
պարերգի ստեղծուիլն ու մեռնիլը մէկ է լինում :
Մի բոպէում է յղանում . եւ երբ անցնում են
բոպէն նկարագրող հանգամանքները , տանում
են եւ իրենց հետ համապատասխան պարերգի
եղանակը : Քիչ երկար կեանք են վայելում
այնպիսիները , որոնք դուր են գալի որ եւ է
գրաւիչ յատկութիւնով՝ չափով , եղանակով ,
բառերի պատկերաւորութիւնով եւն . կամ այն-
պիսիները , որոնք իրական անցքի , զիպուածի
են վերաբերում եւ կապուած որոշ անձի հետ :
Եթէ , նոյն իսկ , նման դէպքերն ու անուններն
էլ չփոխեն , եղանակը պահում են :

Դուր չեկած երգին կարեւորութիւն չեն
տալի . հարիւրաւոր երգեր , զանազան տեղեր
վայրկենապէս բռնկում ու վայրկենապէս էլ
հանգչում են :

Այս կարգի երգերն աւելի արժէք ունին ,
ուսումնասիրութեան համար , կտրուկ բովան-
դակութիւնով , զգացմունքների եւ մտքերի տե-
սակներն ու փոխադարձ առնչութիւնը պարզ ,
որոշակի նկատելու եւ սահմանելու համար :

Պարերգերը շուտ են մոռանում մէկ էլ այն
պատճառով , որ իւրաքանչիւր եղանակ , իսկա-
պէս , ունի մի տուն բուն բանաստեղծութիւն
եւ կրկնակ . իսկ պարը , երգեմն , ժամեր է տե-
ւում : Այսքան երկար ժամանակի ընթացքում ,
եթէ եղանակը փոխել չը խնդրեն , անընդհատ
երգում են օգտուելով ուրիշ երգերի եւ խաղերի
պատրաստի բառերի պաշարից , որից իւրաքան-
չիւր գիւղացի գիտէ մի քանի տասնեակ տուն :

Այս հանգամանքը ջնջում է պարերգի գե-
ղարուեստական , բոպէական հետաքրքրոթիւն
պատճառող , երգաստեղծութեան գրաւութիւնը
եւ դարձնում է մի տեւական ձանձրացուցիչ եւ

մեքենայական պահանջ : Երբ պարողները դադա-
րում են , դադարում է եղանակը , ու գործա-
ծութիւնից ընկնում երբ պիկ է գալի մի եղա-
նակ իր բուն եւ հիմնական բառերից , կորցնում
է հաւասարակշռող նեցուկը , կանգուն պահող
յենաբանը եւ անյայտանում :

Երգի բառերն աւելի են նայքում , քան
եղանակը . որովհետեւ նոյն եղանակով կրկնող
իւրաքանչիւր տուն բերում է իր հետ նոր թարմ
պատկեր , ուշադրութիւն դրաւում , հետաքրք-
րութիւն շարժում եւ կեանքն ապահովում :

Երգեցողութիւն

Գիւղացու երգական կարողութիւնը . — Ժո-
ղովրդի երգեցողութիւնն ունի ինքնուրոյն զբա-
րոց , ուր դաս են առնում ամենքը , ամեն ժա-
մանակ , երբ կարիք են զգում : Գեղջուկի զբա-
րոցը , ուսուցիչը եւ առարկան՝ բնութիւնն է :

Նա ձեռք է բերել ամենատեսակ փորձա-
նութիւն , հմտութիւն եւ , բազմակողմանի ու
կենդանի երգերով , իր եւ բովանդակ բնու-
թեան զուարթ ու մտայլ սրտի յուզումները
պայծառ նկարելու կարողութիւն :

Իւրաքանչիւր գիւղացի քաջ գիտէ տեղա-
կան եղանակներն ու երգերն այնպէս , որպէս
բարբառը Շատ զարգացած է բնագրաբար յար-
մարելու երգական կարողութիւնը , որ ձեռք
է բերել , կամաց կամաց , դարերի ընթացքում ,
մշտական փորձերով եւ սուր յիշողութիւնով ,
որոնց առաջնորդն է զգուշ լսողութիւնը :

Երգելու ժամին , իւրաքանչիւր գիւղացու
համար , հեղինակութիւն է լաւ խաղ ասողը :
Երբ սա մի նոր եղանակ է երգում , ներկայ
գտնուողներն էլ սկսում են այնքան արագ ու
միաժամանակ կրկնել , որ լսողը կարծում է , թէ
եղանակն առաջուց գիտէին : Մանաւանդ պա-
րելիս իւրաքանչիւր մէկն ականջ է դառնում եւ
ուշադիր լսում ու մտիկ տալի պարագլխի եր-
գածին , որ չը լինի , ընկերներից յետ մնայ եւ
նոցա առաջ ամօթով , որովհետեւ պարագլխից
յետոյ , ամբողջ խումբը պէտք է երգէ նորա
երգածը :

Երգ սովորելու եւ ասելու թեղ ու ժամանակ .
— Գիւղական իւրաքանչիւր տեսակ երգ սովո-
րելու եւ ասելու յարմար տեղն ու ժամանակն

ունի, որոնց հետ սերտ կապուած է:

Շինական երգերն ստեղծում, ասում եւ սովորում են գործի ժամին, տեղն ու տեղը:

Միսականներից հարսնեկանները երգում են հարսնիքի օրերին, որոշ տեղում, որոշ ժամին եւ ամեն մէկի բաժին երգն իր հերթին: Միւս ծիսականներն էլ յատուկ ուխտին: Օրինակ. վիճակի խաղերն ասում են Համբարձման:

Վիպական ու պատմական վիպաքնարական երգերը, որոնք լուրջ բովանդակութիւն ունին, ձմեռնային երկար օրերին: Երեկոները խմբեր են կազմում եւ զանազան տներում երգում, պատմում ու լսում: Միւս քնարական վիպականներն ասում են իրիկուան կամ ցերեկուան ազատ, կամ թեթեւ գործի ժամին եւ, սովորաբար, բացօթեայ:

Յաղերն ասում են գրեթէ ամեն ժամանակ եւ ամեն տեղ. բայց յատկապէս՝ ուխտին, հարսնիքին ազջկայ տանը, գիւղական ուրախութիւններին եւ տարուայ գեղեցիկ երեկոներին՝ գիւղի հրապարակներում, փողոցների անկիւններում, կալերում ու այգիներում:

Անտունի երգերն էլ խաղերի պէս ազատ գործածութիւն ունին, միայն թէ գիւղացին ստեղծում ու ասում է, երբ օտարութիւն է քաշում կամ իր սկանչխտին յիշում: Սիրահարական անտունիներից են բռնում, երբ աաքայցիկ են կեր ու խումբի մէջ:

Շատ դժուարութիւնով կամ ամենեւին չեն երգում, նոյն իսկ ծաղր են անում, եթէ մի ոչ գիւղացի խնդրէ, որ, օրինակ, մի շինական երգ ասեն, երբ գործի չին, այն էլ՝ տանը:

Ժողովուրդն արուեստական երգեցողութիւն ասած բանը չը գիտէ: Իւրաքանչիւր երգ իր տեղում, իր ժամանակին է ստեղծում կամ սովորում: Գործի ժամին՝ գործի երգ, տանը՝ տանու երգ միայն կ'ասեն: Ոչ մի գիւղացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալերգն ստեղծելու եւ պսելու տեղն է կալը. ուստի շատ օտարտի է երեւում, թէ ինչու են հետաքրքիր լինում մի երգով, երբ անտեղի եւ անյարմար ժամանակ է:

Իւրաքանչիւր երգ կապուած է գիւղական կեանքի մէկ բոպէի հետ եւ տալիս է միայն այդ բոպէի հաշիւը: Ժողովուրդը ժամանակից եւ

տեղից բաժան երգ չի՝ հասկանում, չի՝ ստեղծում եւ չի՝ էլ գործածում: Ե

Շատ հետաքրքրական է երգի կամ պարի ժամանակ գիւղացի մանուկներին տեսնելը: Այս ու այն ծակից ներս են մտնում, պզտիկ տախտիկները ձախ ու ծուռ գնում, երգողներին մտիկ տալի, նոցա հետ այս ու այն կողմ պըտոյտ դալի, մանրիկ բերաններն ակամայ բաց ու խուփ անելով երգում այնքան, որքան մանկան միտքը կ'ըմբռնէ եւ արտայայտելու վստահութիւն կ'առնէ:

Հէնց որ խաղը վերջանում է, վազում են մի առանձին անկիւն բռնում, արծարծում ու սերտում են մեծերից լսածը:

Նոցա դուր է գալի երգի կարճ ու պարզ կրկնակը: Բառերի հետ ամենեւին գլուխ չունին, որովհետեւ բովանդակութիւնը նոցա համար անմարս է:

Վիւղական երգեցողութեան տեսակները. —

Հայ ժողովրդական երգեցողութիւնն ունի թէ՛ միայնակ եւ թէ՛ խմբովին երգեցողութիւն: Միայնակը լինում է մէկ կամ երկու հոգով: Առաջին զէպքում երգում է միայն մի հօգի եւ մի ամբողջ երգ, կամ մի մասը:

Երկու հոգով միայնակ ասում են նոյն երգի զանազան տները, հերթով, փոխէ փոխ, նոյն եղանակով կամ ուրիշ եղանակով:

Սյս ձեւը գործ են ածում, սովորաբար, ծաղրական, սիրահարական եւ այնպիսի երգերի համար, որոնք գիւմակի երգասութիւնով պատկերացնում են խօսող, վիճող, ծաղրող, կըռուող, սիրահարուած եւայլն մարդոց հարցն ու պատասխանը:

Խմբովին երգեցողութիւնն ունի երեք ձեւ՝ պարզ, բարդ եւ խառն:

Պարզ է, երբ մի խումբ երգն սկզբից մինչեւ վերջ ասում է մենակ:

Բարդ ձեւն առաջ է գալի, երբ երկու հօգի, երկու խումբ, մի հօգի եւ մի խումբ երգում են նոյն եղանակով, բայց օղակ օղակ կամ հանգոյց հանգոյց իրարու միանալով:

Մէկն սկսում է երգը եւ լրացնում առաջին երաժշտական նախադասութիւնը. նոյնը կրկնում է միւսը: Կրկնութեան վերջին յանգաւոր ոտքից միանում է առաջին սկզբին էլ եւ

երգելով երկրորդի կամ կրկնողի հետ մինչև առաջին, կրկնուող երաժշտական նախադասութեան վերջը, շարունակում է երկրորդ նախադասութիւն, որի վերջին յանգաւոր ոտքից միանում է առաջին երգողը եւ կրկնում է երկրորդ նախադասութիւնն ամբողջ: Վերջին յանգաւոր ոտքից միանում է նորից առաջին երգիչը եւ այսպէս, օղակ օղակ շղթայուելով, հանդոյց են կապում ամբողջ երգի սկզբից մինչև վերջը:

Երբեմն միանում է մի խմբին մի ուրիշ գիւղի խումբ եւ, իւրաքանչիւրը իր անկախութիւնը պահելով, միմեանց հետ մրցում են հարց ու պատասխան տալով:

Այս դէպքում, ամեն մի խումբ, վերը նկարագրած ձեւով երգելուց զատ, իրար մէջ էլ, փոխէփոխ են անում եւ հանդոյց կապում:

Բարդ ձեւերն աւելի յատուկ են պարերգերի համար:

Իրան ձեւն առաջ է գալի, երբ միայնակ կամ խմբով երգելն իրարու յաջորդում են առանց կանոնաւոր հերթ պահելու: Իրան եւ ազատ ձեւով ասում են գութաներգերը եւ կալերգերը:

Բազմաձայնութեան հետ. — Թէպէտ հայ ժողովրդական երաժշտութիւնը բազմաձայնութիւն չզիտէ, բայց եւ յաճախ պատահում են դէպքեր, որոնք ցոյց են տալի կանոնաւոր երկձայնի նշաններ:

Երբ երգ սկսողը այնքան բարձրից է բռնում եղանակը, որ ձայնաստիճանը միջակ ձայներին է ճնշում, կամ այնքան ցածից է անում, որ բարձրերին է խեղդում, տուժողները փոխում են ձայնաստիճանը եւ լարում իրենց ձայներին այնպէս յարմար, որ նորը հինին դաշնաւոր լինի, որ վերջին եղանակը առաջինն համաձայն գայ:

Եւ երբ զանազան ձայնաստիճաններով լարուած եղանակներն ասում են պարերգի բարդ ձեւով, երկձայնութիւն է դուրս գալի:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ՀԱՅ ԷՋԵՐ

Տաղ Ս. Աստուածածնին

Աղբի՛ւր կենդանի, Բղխուն զանազան,
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական.
Գըլուխ կուսանաց, Դասուց դու պարծանք,
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Երեսիդ փափաք՝ Զօրքըն վերնական,
Էրանեալ Ընտիր Թաք (1) ու աննրման,
Փառանգող (2) դրախտին եւ արքայութեան,
Մեղայ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Ի փառքս Լուսոյ Խորհի՛ւրդ հիացման,
Ծընո՛ղ կենդանի Յիսուսի իջման,
Համաւո՛ր բաժակ, Ձե՛ռուք փրկութեան.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Ղամբա՛ր ճշմարիտ Մեծ ուրախութեան,
Յուկի տուփ խնձո՛ր, Նորոգւ՛մն ական,
Շնորհիւ քո լոցան Որչիք Ազամեան.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Զարին հալածիչ (3), Պըտո՛ւղ սրբութեան,
Ձա՛հ մաքուր ոսկի լուսով աննրման.
Ռատվա՛զ (3) աղբիւր, ջուր անմահութեան,
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Սըրովքէ սէր սուրբ վերին պետութեան,
Տուն Յիսուս որդւոյն եւ բընակարան,
Բաբունի կուսից, Ֆաւոց քաւարան.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Ի իւսեալ ի լուսոյ մայր ուրախութեան,
Մեռեալքըս մեղօք (4) քեւ առողջացան.
Փառքք քո որդւոյն այժմ եւ յաւիտեան.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

Դու լա՛լ մեծագին որ ի պատաշխան,
Եաղը՛ւթ ու զըմբութ եւ ա՛յլ պատուական,
Ա՛կ ես լուսատու, գա՛նձ արքայական.
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական:

(1) Թերևս՝ Թագ. աւելի հաւանականաբար՝ Թրքերէն « Թէք » ն է, « մէկ հատիկ » իմաստով: — (2) Ձեռագ. ժառանգաւ: (3) Ձեռ. ծնաւ: (2) Ձեռ. հալածել: (3) Առատավազ. (4) Ձեռ. մեղաք:

Զքեզ միշտ կու գովեն Խաթա 'Լ ի Խըման,
Զըմուռ եւ զգտաշխ եւ զգկասիան,
Եւ այլ ծխանելիք պէտք է սրբուծեան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Դու ես համասփիւռ ծաղկանց ամիրան,
Քեաֆիր վարդ պայծառ հոտով եւ բոււրման,
Դու լուսի՛ն աշնան, դու արե՛ւ գարնան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Դըրախտն Ադամայ չէ ի քեզ նըման,
Փառանգողք դրախտին յոձէն խաբեցան,
Խաբողքն եւայի քեզ ոչ մերձեցան .
Մեղայ քեզ մեղա՛յ, կոյս անապական :

Թէ զերկինքն ասեմ՝ չէ ի քեզ նըման .
Հրեշտակք ի յերկնից յերկիր Թափեցան,
Եւ քու հողածինք յերկինս վերացան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Ի քեզ պարըսպեալ Բանըն հայրական,
ԶԳաբրիէլ հրեշտակն եղիր պահպան,
Հեռացան ի քէն որդիք կորըստեան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Յարգանդ բաւեցիր զՏէրն անբաւական,
Աչերդ է սովոր աստուածտեսութեան,
Կաթամբ սընուցեր զորդիդ աննըման .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կոյ՛ս անապական :

Մոցդ է անմատոյց խորանի նըման .
Դիրկդ է սերովբէ կայ ի տարածման .
Միտք ոչ հասանեն քեզ անհասական .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Դըրա՛խտ լուսեղէն, պըտո՛ւղ մաքրական .
Պըտղովդ ապրեցան որք անմահացան .
Դըտան առ ի քէն գիր ազատութեան,
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Ընտրեաց զքեզ ի կուսից ինքն ընտրողական,
Դու կաս եւ մընաս անուն յաւիտեան,
Պըտուղ Աննայի եւ Յովակիմայն .
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական :

Ով աստ կու կենան քեզմով կու կենան,
Ըզքեզ կու հային քեզմով պարծենան,
Զքեզ փառաւորեն աշխարհի ամենայն .
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական :

Դու ես Արեւելք լուսատու մարդկան,

Սիրտըդ Արեմուտք մեծ խորհրդական .
Հիւսիս եւ հարաւ սընարքդ ի նման .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Աչըդ քո Փիտոն երթար Վըրաստան,
Ահեակըդ Գեհոն՝ ի Հապաշաստան,
Նայելիքդ Տիգրիս, եփրատ գընացման .
Մեղա՛յ քեզ մեղայ, կո՛յս անապական :

Աչըդ Յովհաննէս է վըկայութեան,
Ահեակդ Մաթէոս է (1) Յշմարտաբան,
Ղուկաս եւ Մարկոս դէմքըդ եւ Թիկան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Աչըդ առիւծոյ եւ ահեակդ եզին,
Եւ դէմքըդ մարդոյ լուսով կազմութեան .
Գրկելիքդ արծուոյ սաւառնաթեւեան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Երբ քո միածինդ գայ ի դատաստան,
Եւ անդ ժողովին աշխարհի ամենայն,
Դու բարեխօսեա վասըն փրկութեան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Դու ես աննըման, դու ես աննըման,
Դու ես աննըման, ոչ կայ քեզ նըման,
Ոչ կայ քեզ նըման, ոչ տի գայ նըման,
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Այս աշըխ Բօչէկս որ կ'ասեն ի Վան,
Զար վիրօք իլլի (2) եւ դատարկաբան,
Որդն եմ եւ փոշի եւ հող անպիտան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Տըւէք զողորմին 'Լ ասէք զՀայր մեղան
Աշըխ Բէօչէկին հոգոյն միաբան,
Որ եւ դուք լինիք ողորմու արժան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

Աշխարհս է նանիր ծաղիկն ի նըման,
Որ այսօրըս կան եւ վաղըն չըկան,
Տէրն հեռացնէ ի ձէնջ զսատանան .
Մեղա՛յ քեզ մեղա՛յ, կո՛յս անապական :

(1) Ձեռ. եւ :

(2) Ի լի, լեցուն :

Ե Ր Գ Ս Ի Ր Ո Յ

Ո՞չ եա՛ր, քեզ լալով սէլամ, ես ի քո քաղքէն
կու գըսնամ.
Բեր պագնեմ զաչերդ, ունեիդ, երբ երթամ՝ չի
կարօտսնամ:
Յայս աստուածաչէն ծոցէդ՝ երեսէդ մահրում
կու մընամ.
Բացվեր ես ի վարդ նրման, ես պըլպուլ՝ ի դէմ
քեզ կուլամ:
Մարդ չեղնամ թ'էլ եար սիրեմ, կամ ըզքո
սէրն մոռանամ,
Կամ զքո անուշիկ պագիկն թէ սրտ'ս հանեմ
ուրանամ:
Թէ նուշ թէ շաքար ուտեմ, առանց քեզ իմ
հալն է հարամ.
Ապրեր եմ քրսան տարի ու շարեր (2) հազար
տարոյ դամ:
Ի՛նչ շահ է իմ շատ ապրիլն որ առանց սիրուդ
կը մընամ:
Ես ու դո՛ւն, հողեկ, ես ու դուն, ես ու դուն,
աչխա՛րհ՝ դօշկեկ ի քուն (2):
Ես ու դու՛ն, աչկո՛ւնք, ես ու դուն՝ ես ու
դուն՝ օթվան սարերուն,
Ձէդ տա՛ս, հողեկ, զէդ տա՛ս, զաչքդ ուտեմ՝
ունքերդ ի վերայ:

Տ Ա Ղ Ա Շ Ա Ր Ք (4)

(Վերագրելի նահապետ Բուչակի)

Գիշերս ես ի գուրս ելայ, թուխ ամպ էր 'ւ ա-
նուշ կու ցօղայ(5).

(1) Այս տողը, օրինակուած Ս. Ղազարու թիւ 565
ձեռագրէն, կրնայ Բուչակի պանդուխտի երգերուն շար-
քին մէջ մանեկ:

(2) Ձեռ. Ու շարեր եմ:

(3) Այս վերջին երեք տողերը չեն համաձայնիր Բու-
չակեան տաղաչափութեան որուն համեմատ գրուած է տա-
ղին ամբողջութիւնը:

(4) Հրատարակուած Կ. Կոստանեանցի «Միջնադար-
եան տաղերու» երկրորդ պրակին մէջ (էջ 55, 57) իբր
միակ տաղ՝ «Երգ եարոջ» տիտղոսով:

(5) Կոստանեանց՝ «Թուխ ամպեր և անուշ կու ցօղայ»:

Ձիմ եարն ալ կանկնուկ տեսայ, զիւր կանաչ
կապան կու թանայ:
Ձեռքս բռնեց տուն տարաւ, զգուռն եղիր՝
ըզիակն ի վերայ:
Մանուկ ես նսրա կ'ասում, որ առնու զրալնին
ու բանայ:
Բանայ 'ւ ի պաղչան մտնի, վարդ քաղէ ու ցօղն
ի վերայ:
Եւ փունջ մի եարօջն տայ որ զընէ զերեսն
ի վերայ:

Ճերմակ ծոց ու լայն ճուպա, ի ծոցիդ ի վայր
սահեցայ:
Այդ խակ թեւերուդ միջին գիրկ ածի պահիկ
մ'արգելցայ:
Ձեռկունքս այլ ի վեր կալայ, «Տէ՛ր, արա՛
զմահիկս ի հոսայ(1),
Ձմահիկս ու զմատղիկս արա՛ աղկեկան կրծրցն
ի վերայ (2):

Այս աստընտորի շահէն, անշահէն ես ի՛նչ շա-
հեցայ:
Առի զբազաս որս ելայ, թըռուցի, զինչ մաղ-
պուն եղայ:
Բազա՛, տընաւեր բազա՛, զընացած տեղրդ (3)
ինձ ասա՛,
Ես այլ հետ քեզի կուգամ, հանց հաշուեց թէ
օր մի չեղայ:

Դիժար հիւընտուկ եմ ես, ա՛ն խընծոր արի՛
ե՛կ զիս տե՛ս:
Հազար զինեհար կուտամ որ օտար հաքիմ չը
բերես:
Օտար հաքիմ ի՛նչ անեմ, իմ ամէն տարտըս դո՛ւ
գիտես:

(3) Հոսայ. սըտեղը:

(4) Այս բառեակը կը կրկնէ՝ ու զմայլելի ձեւով՝ զա-
ղափար մը զոր արդէն Բուչակ արտայայտած է այն բառ-
եակին մէջ որ կ'աւարտի «Հոգիս պարսկան էի Գրողին»,
լօք թող գայ ու առնու տանի» տողով:

(1) Կոստ. «Տեղն»:

Եկո՛ւ տամ ծոցուս բաշնին , բա՛ց սրտիս դուռը
մուտ ի ներս(1) :

Եալամ եալալամ կ՛ասեմ , չեմ եկեր , քո սէրն
է բերեր .

Քո սէրն իմ սրտին միջին տուն չիներ ՚ւ ի ներս
կու կենայ : (2)

Բազան , երբ քաղցած լինի , գորսն առնու ,
այնով զըմպաղի .

Մանուկ՝ սիրու տէր լինի , պագ (3) առնու կա-
րան անցանի .

Ա՛մ ի՛նչ լինենամ , թէ պահեստ նա ինձ կու
պիտի (4) .

Հի՛մի ի ծոցուդ ելայ , դեռ աչուերս ի հետ (5)
կուհայի :

Հանց եղեմ ի քո սիրուդ զինչ ամռան աւազն
որ կ՛այրի .

Զօրն ի բուն երկինքն ի վեր կուհայի կաթիկ
մ՛անձրեւի(6) :

Հանչափ ջանացի իւր հետն որ իրմէն պագիկ
մի առի .

Ի քաղցրութենէն եղբա՛րք , բրոններ է սրտիկս
որ այրի(7) :

Պահնե՛մ ըզքո լան ճակատդ՝ որ աչքեր ունիս
զազալէ .

Գրկիմ ըզքո ուռ միջկունքդ՝ որ հագեր(8) ես
չատ կապանի(9) :

(1) Այս քառեակը քիչ տարբերութեամբ վարխանթ
մըն է Քուչակի « Հիւանդ եմ ի քո սիրուդ » քառեակին :
(2) Անաւարտ է այս տողիկը :
(3) Կոստ . « պագ » :
(4) Երկու վանկ պակաս է այս տողին մէջ :
(5) Թերեւ « ի յետ » : (6) Կիսատ տող :
(7) Վերջին կիսատողը պէտք է ուղղուի՝ « բոլն-
կեր սրտիկս ու կ՛այրի » ինչպէս կայ արդէն Ակնայ ժո-
ղովրդական երգերուն մէջ :
(8) Կոստ . « հագեր » : (9) Կիսատ

10

Քանի՛ ու քանի՛ ասեմ « զիմ եարին կապան
կարեցէք ,

Արեւն իւր երեսք արէք , զլուսընկան աստու
ձեւեցէք .

Թուխ ամպն այլ բամպակ արէք , ՚ւ ի ծովէն
դերձան քաղեցէք .

Աստղերն այլ կոճակ արէք , զիս ի ներս ողկիկ
չարեցէք » (1) :



Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Խիստ եմ կարօտցեր(2)զիմ եարս , դուն աժես (3)
որ ես կարօտնամ (4) .

Ով ըզքեզ մօտ յիս բերէ , նայ հանեմ զճիկերս
իրեն տամ .

Զագ ասա՛ (5) , ճերմակ , զա՛դ ասա , ճերմակ
ծոց ու ծինն (6) ի վրայ (7) :

Ապրեր եմ քառսուն տարի ու քաշեր հազար
տարու դամ .

Ի՞նչ շահ է իմ շատ ապրիլս երբ ի քէն կարօտ
կու մընամ .

Տարուբեր քամեկ , տարուբեր , զգէչն տար
զաղեկն առ ու ըեր .

(1) Այս տողին վերջի մասի զաղափարը և զայն ար-
տայայտող պատկերները մեծ մասամբ կը վերագտնուին
Ակնայ ժողովրդական երգի մը մէջ՝ սկիզբն ու վերջը ուրիշ
տարբերու խառնուած .

Ան բարձրը լեռներն ի վար մեզի բարկ արեւ
մին է ցաթեր .

Ըմմենուն երգիքն ի վար , մեզի դուռն ի ներս
է ճառագեր .

Ըմնդ ի վրայ եկէք , թագւորին կապան կա-
րեցէք .

Լուսընկան աստու արէք , արեգակն երես
ձեւեցէք .

Ան մոյ ու խոշոր աստղեր թեւերուն աիւկմէ
կարեցէք .

Հայ իմ պզտիկ թագւոր , կլորեր հս մեզ ծմե-
րուն ,

Ճովերդ ի երգիքն ելեր՝ կախուեր է խոշոր ճի-
վերուն :

(2) Ձեռ . կարօտցեր . (3) ձեռ . տձես . (4) ձեռ . կա-
րօտանամ . (5) ձեռ . զադասայ . (6) ծին (grain de beauté),
ձեռ . ձիւնն : (7) Ձեռ . ի վրայ :

Կօզա՛լ, խղճա՛ քո գերոյգ, քո գերուս մենակ
մմնալոյս .

Գաղտ եւ ալանի լալուս կու վախե՛մ ելնեմ
աչերուս .

Ձաղ ասա՛, ճերմակ, եւն .

Լըսեր եմ որ վարդ ունիս, ուղարկէ՛ փունջ մի
քո գերոյս .

Պագնեմ աչերո՛ւս դընեմ, որ դադրի՛ աչիրս
ի լալուս .

Տարուբեր քամեկ, եւն .

Կօզա՛լ, քեզ վատ չե՛մ ասեր, դու ինծի է՛ր
ես խըռովեր .

Ղամազ կայ ի մեր միջին, քեզ զալատ է հաս-
կացուցեր .

Ձաղ ասա՛, ճերմա՛կ, եւն .

Ղամազն է ի օճնըման որ զԱդամ է զալտեցուցեր,
Խաբեր ՚ւ ի դրախտէն հաներ ՚ւ ի լուսոյն է
մերկացուցեր :

Տարուբեր քամեկ, եւն .

Երկինքն որոտաց դողաց, ասողըն իւր տեղըն
չի մընաց .

Իմ եարն ի յիսնէ գընաց, բիւր հազար ծաղ-
կունք հետ իրաց .

Ձաղ ասա՛, ճերմա՛կ, եւն .

Գըրեմ բարակիկ թղթիկ, ուղարկեմ շատ պատ-
գամ ի լաց (1),

Որտեղ ես բարո՛վ կացիր, դքս սիրած եարըզ
չի մոռնաս :

Տարուբեր քամեկ, եւն .

Դու ելար ի ձեր տունէն զերգ ելաւ արեւն
ի մօրէն .

Ծագէ լոյս ի յիւր ծոցէն զինչ գարնան կայ-
ծակն ի յամպէն (2) .

Ձաղ ասա՛, ճերմա՛կ, եւն .

Շատ հաբեղայ ու երէց իջուցեր (3) քո սէր
ի բեմէն .

Ձիս ալ սիրու տէր արիւր ու հանիր իմ հօրս
ի տանէն .

Տարուբեր քամեկ, եւն .

Փոքրիկ բոլորիկ դըռնակ որ քենէ ծագեց լու-
սընակ (4) ,

Քո մէջքդ է քան զուս բարակ, քո ծամերդ իջեմ
բարունակ .

Ձաղ ասա՛, ճերմակ, եւն .

Իմ եա՛ր, դու զադ ինձ ասիր, դու ապրիս
բազում ժամանակ ,

Ես այլ ի աւուրս ի վեր ի ծոցոյս անեմ քեզ
ճարակ (1) :

Ձաղ ասա՛, ճերմակ, եւն .

Երկու թուխ ու մէկ բարակ կու կինան ի մէկ
բըրբզակ ,

Թուխն ալ ի բարակն ասաց, « ի ծոցէս (2) անեմ
քեզ (3) ճարակ .

Ձաղ ասա՛, ճերմա՛կ, եւն .

Ասիր ու չարիր ճարակ, դու ընկնիս ի ծովն
անյատակ (4) ,

Ձկներն ի մըսէդ ուտեն՝ որ ընկնիս տապկէ
ի տապակ :

Ձաղ ասա՛, ճերմա՛կ, եւն .

Կանչեմ այդ ծովուդ վըրայ, ծովն ակէն թող
թանաք գառնայ .

Ձինչ շամպայ եղէզ որ կայ՝ ամենն ինձ զալամ
պիտեմայ .

Ձաղ ասա՛, ճերմա՛կ, եւն .

Շատ ոք այդ ծովդ է մըտեր, լողացեր ու ալ-
վայ ելեր ,

Եկեր իմ առջիս առեր, զիս սարսափն ու դողն
է պատեր :

Տարուբեր քամեկ, եւն .

Բազկի(դ) զենէհար անկայ, թէ՛ լողա՛ ու ա՛ռ
զիս ու ե՛լ .

Դու ինձ շատ ատեն հասել, հիմա ինձ է՛ր ես
խըռովել (5) :

Ձաղ ասա՛, ճերմա՛կ, եւն .

Դարձաւ ու ճուղապ կտուր . « Քո մեղաց ալին
է թացեր .

Շատ մարդ այդ ծովերդ անկեր, մոլորեր անհետ
կորսըւեր .

Տարուբեր քամեկ, եւն .

Եզեր մօտեցեր եմ ես կու վախեմ քարի դիպե-
նամ ,

(1) Ձեռ. զատ պատգամողաց . (2) ձեռ. ծագէ լոյս
յիւր ծոցէն ի յամպէն զինչ գարնան կայծակն ի յամպէն :

(3) Ձեռ. Շատ երէց ու հաբեղայ իջուցեր . (4) ձեռ.
լուսընկայ :

(1) Ձեռագրին մէջ՝ աղաւաղուած, աւելորդ բառերով
խճողուած սա տողը կը գտնուի . « Յրէս ինձմէս ի վեր
ի ծոցէս անեմ քեզ ճարակ դու ընկնիս ի հուր ի կըրակ » .
մենք նախընտրեցինք դնել տողը՝ ինչպէս կը գտնուի
Հայերգի օրինակին մէջ :

(2) Ձեռ. ի խոցէս . (3) ձեռ. էր . (4) ձեռ. անատակ :
(5) Ձեռ. Շատ դու ինձ ատեն հասել .

Քակտի իմ ամուր շինուածս ու տարտա'կըս
մէկմէկանայ :

Ձադ ասա', ճերմա'կ , եւն .

(Վիեննայի Մխիթարեանց թիւ 176 ձեռագիր .)

343 .



ՏԱՂ ՍԻՐՈՅ (1)

Իմ հոգևոյս հոգեկ եա'ր , ա'մ (2) , քանի քո
քովէդ գընացի ,
Հոգիս ի մարմնոյս ելաւ , ի մահուն դուռըն
գընացի .

Աղվընօքն(3) մինչ իրիկուն կուլայի ու գքեզ
կ'ուզէի ,
Գիշերն մինչ որ լուսանայր , քո սիրոյն ես
քուն չընայի :

Կօզալն (4) ալ ի խօսք ելաւ . իր եարուն գան-
գատներ արաւ ,
— Հանց մի որ սիրես դու զիս , ինձ ասէ' որ
ես գիտենամ :

Ես ալ (5) քընար պիտէի , զօրն ի քո գիրկըն
կենայի .
Կամ ապըրշըմէ գօտի , քո միջացըդ գիրկ
ածէի .

Կամ աղբըրական չըրիկ , գայի քո բերանդ
մըտնէի .

Կամ գարնանային ցօղիկ , ես ի քո վըրադ
ցօղէի .

Կամ ապըրշըմէ լարեր , հետ քեզի պէսպէս
խօսէի :

(Ջականչըդ դուլիս արա' ու լըսէ ըզիմ գան-
գատնիս) .

Կամ քաղցըր նըռան գինի , զօրն ի քո շիշան
կենայի .

Դէմ գայի զլեզուդ պագնէի (6) ,
ես ծիծեռնիկ պիտէի , բունս ի ձեր տունըն
դընէի ,

Ձագ հանի ճըւվըռայի , ու սիրովըդ կըշտա-
նայի ,

(1) Այս տաղը ընդլայնուած վարիանք մըն է Գու-
ջակի « Ես ձագ ծիծեռնիկ պիտէի » տաղին :

(2) Ձեռ. եարում : (3) Այսինքն' առաւընօքն : (4)
ձեռ. թզալն : (5) ձեռ. Սալ

(1) Կիսատ է այս տողը :

Ի աղվընէն (1) մինչ իրիկուն ի երեսդ ի վեր
հայէի .
Իրիկունն երբոր մձնէր , գայի քո ծոցըդ
մըտնէի .
Գիշերն մինչ որ լուսանայր , ես ի քո ծոցըդ
պառկէի .
Երբոր առաւօտանայր (2) , ես ի բունըս ճըւ-
վըռայի .
Երբոր լուսըն լուսանայր , աշխարհիս վըրայ
ծուռ գայի :

(Վիեննայի Մխիթարեանց թ. 343 ձեռ.)



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռ. Աշիֆեան , Ծփանկներ . — Ծփանկներու
հեղինակը նորեկ մը չէ : Մօտ տասնեւհինգ
տարի առաջ Պ. Ալիքեան Պոլսոյ մէջ հրատա-
րակած է — իր իսկական անունով — բանաս-
տեղծութեանց հատորիկ մը , ուր քանի մը
գեղեցիկ հատուածներ կը նկատուէին՝ յայտնելով
ճշմարիտ բանաստեղծ մը , որ սակայն դեռ կը
խարխափէր ու իր ձեւը չէր գտած : Ծփանկնե-
րուն մէջ Ալիքեան կ'երեւայ աւելի հասուն
մտածմամբ , աւելի խնամոտ արտայայտու-
թեամբ :

Ներկայ հատորը առաջին երգը կը պա-
րունակէ ընդարձակ բերթուածի մը , զոր հեղի-
նակը յղացած է հետեւողութեամբ Պայրընի
« Չայլտ—Հարոլտ »ին : Գաղափարը գեղեցիկ է :
Ալիքեան կ'երեւակայէ հայ Հարոլտ մը ,
որ պայրընեան Հարոլտին ընկերակցութեամբ ,
պիտի կատարէ նմանօրինակ ուղեորութիւն մը՝
Արեւելքի երկիրներուն , յիշատակարաններուն ,
երազներուն ու մտաւոր եւ իրական , անցեա-
լէն արթնցած կամ ներկային մեջ կերտուող
տեսիլներուն մէջէն : « Նախերգանք »ը կոչ մըն
է առ Պայրըն , առ ներշնչողը : Հին օրերուն ,

(1) Այսինքն , եւ առտուընէն . Պերես ալ՝ վաղվընէն ,
առտուն կանուխէն : (2) ձեռ. Առաւօտայր :

բանաստեղծները՝ քերթուած մը սկսելէ առաջ՝ Մուսա մը կամ Աստուած մը իրենց օգնութեան կը կանչէին, խնդրելով որ տար իրենց շունչը՝ կարենալու համար ըստ արժանւոյն երգել զիրենք ոգեւորող նիւթը . ինչո՞ւ այսօր բանաստեղծ մը չուղղուի մեծ բանաստեղծի մը հոգիին . չէ՞ որ մեծ բանաստեղծներու հոգիին մէջ են բոլոր մուսաները եւ բոլոր Աստուածները, որովհետեւ այդ հոգին է որ զանոնք ըստեղծեց: Պ. Ալիքեան, խօսելու համար Պայրընին, գտած է սրտաշարժ չեղտեր որ թերեւս պիտի յուզէին մեծ ազատասէր քերթողին ուրուականը՝ եթէ կարող ըլլար լսելու .

Ըստորոտէն Տորոսի՝ զերդ թիծեռնիկ մ'ազագուն
 Հիւսիսայգէդ շըլացած՝ դէպ ի բարձունքդ առի թեւ .
 Տարիներով Թափառիկ, շրջմոլիկ հուր մ'ոստոստուն,
 Շիրմաց ընդ մէջ՝ այլ քեզի՝ սեւեռելով յարատեւ,
 Աւերակէ աւերակ որոնեցի ձայնըդ գող .
 Գետերուն հետ սահելով հասայ մինչեւ կոհակին .
 Քեզմով լեցուն ամէ՛ն ինչ . այլ աչքերէն իմ պղտոր
 Խոյս կուտայիր, անցեալին իմ իտէա՛լ Թանկագին . . .
 Հասած հիմակ անապատն անմարդածայն գիշերին,
 . . . Կը պաղատիմ ողբածայն,
 Հարուտը տուր ինձ ընկեր, բռնէ՛ ձեռքէս դողդոջուն,
 երթանք փնտռել միասին նոր հորիզոն, նոր երկիր,
 Գաղտնիքներուն անդ քննել անվերջ « ինչ պէս »ն ու « ինչու »ն,
 նոր Աստուած մը որոնել՝ տառապանքին կարեկիր :
 Մըտերմութիւնք Թողած հոն՝ Շէլլիիդ պէս ափ մ'աճիւն,
 Հայրենիքէս տարագիր . . . Հարուտըդ տուր ինձ ընկեր,
 Հըրատոջոր աւագէն կը մեռնին կեանքս ու աւիւն,
 Տառապանքն հոս անհուն է . ա՛խ, զիս մինակ մի՛ ձրգեր . . .
 Կը դառնանք շուտ անոր հետ, ու գուցէ նա պատմէ քեզ

ինչ որ երբեք չի տեսաւ երբեմն ըստրուկ
 Ելլադան,
 -- Հայրենիք մը սրգազգեաց, բազնիդ վրբան
 ողջակէզ,
 Բռնկած Կովկասն ու յաւէտ ապերջանիկ
 Հայաստան . . .
 Գուցէ իջնես միանգամ քու բարձունքէդ այն
 ատեն,
 Քնարիդ շեշտերը յուզեն պոռնրկացած եւրոպան,
 եւ ալեւոր Մասիսի ձիւնասպիտակ գագաթէն
 Ազատութեան մոռցըլած երգը գողաս Հայութեան :

« Ծփանքներ »ուն առաջին երգը, « Իէպի Անդունդ », նուիրուած է Մովսէսի եւ Յիսուսի հայրենիքին, այդ տարօրինակ Հրէաստանին որ իր մտածումը տարածեց ու տիրապետել տուաւ մարդկութեան մեծագոյն մասին մէջ եւ որուն Մեծ Գիրքը այնքան անգամներ եւ այնքան հզօրապէս ներշնչեց նոյն իսկ նոր ժամանակներու ամենէն խիզախ բանաստեղծները՝ Պայրընէն սկսեալ Ալիքեան՝ իր կարգին կուգայ երգել մեծ ու մռայլ ճակատագիրը հոգեշունչ ցեղին, ու իր երգը անարժան չէ նիւթին . այդ երգը մերթ, յղացմամբ ու նոյն իսկ ձեռով, կը բարձրանայ պարզ ու խոր ազնուութեան մը, որ Ալֆրէտ տը Վինսին կը յիշեցնէ .

Քայլ մը դէպի Արեւելք, Լիբանանէն քիչ մը վար,
 Կը հեծէ հէք մի ծովակ, Մեռեալ Մովը մեռաւոր,
 . . . երկիրն ուր ծովն է մեռած ու մահն անգամ մեռաւ մերթ,
 . . . Հողն Աւետեաց՝ երկնաշունչ իւր վէպերովն հրաշակերտ,
 Ընտրեալ ցեղին բնավայր, օրրանը սուրբ երգերուն :
 Հոմերական տաղ մ'է նա, այդ երագուն ցեղին բաղդ,
 Գերութենէ գերութիւն, մշտամուրը, Թափառիկ .
 Յաւերժապէս ճնրադիր եփվային մեծայաղթ,
 -- Կրակի, ամպի սիւնն հրակայ, կամ մըռնչող փոթորիկ, --
 Ցեղ մը կըրտուած բուրգերուն կամ ըսփինքսին ըստորոտ,

Սեմի զաւակ , ծրծած կաթն արիական հա-
 ւատքին ,
 Դիւցազնական մի երգի շեշտը խրրոխա բամ-
 բորոտ ,
 Կամ նեղոսի , սիրատի ափերն հառաջ ողբա-
 գին . . .

. . . Թմբուկներով փողերով պարիսպները
 սարսեցին ,
 Խրրոխտ արեւն իր ճամբան անոնց համար
 առաւ կանգ .
 Երիքովի կը մըխան դեռ հիւզակներն առան-
 ձին ,
 Չագաներու լըսելով վայնասունին արծազանք
 Անպարտելի յաղթական , իրենց հետ էր եհո-
 վան ,
 Փոշիի պէս ցրուեցան Ամաղեկը , Բետացին ,
 Օճեալ իրենց արքաներն խելայեղ ու տիրական
 Յաղթանակի ու սիրոյ անմահ քնարը լարեցին :

. . . Շոն սոայի , քիչ մ'անդին եզեկիէլ տեսա-
 նող ,
 Որ Մովսէսի բաղբակից' ընդնշմարեց ամպէն
 վեր
 Կապոյտին մէջ իր փառքով ձիւնասպիտակ
 լուսաշող
 Սուրբ Աստուածը հընուծեան , խորշոմ ճա-
 կատ , ալեհեր ,
 Կամ երեսիան , կամ եզրաս' Արտաթի դաշուն
 անսահման ,
 Որուն աչքի վարագոյրը վերացաւ մէկ գիշեր ,
 Անդրշիրմին գաղտնիքներ' դեռ չի մեռած
 տեսաւ ան .
 Լըսեց ձայնն իր հրեշտակին , որ զինքը վեր
 կը կանչէր :

Մարգարէները համայն , այնչափ հեռու դա-
 րերով
 եւ իրարու անծանօթ , որ նոյն քնարը հըն-
 չեցին ,
 Ըսպասումով մը լեցուն , յուզումնալից , մըշ-
 տախուով ,
 Կարծես տօգոյն փայլակներն եղան այն մութ
 քառսին ,
 Որ մարդկութիւն կը կոչուի , եւ որ զերդ վէսն
 ովկիան ,
 Երկնակապոյտ ծալքին տակ անլոյս գիշերն
 ունի խոր ,
 Լի կարօտով մի շողին երազներու տըւընջեան ,

Յըղի յաւէտ մըտածմամբ , անյուսուծեամբ
 ահաւոր :

Լուսինը դեռ կը նայի դաշտերուն վրայ Մո-
 վաբու ,
 Ուր քարաշէն քաղաքներ աւազին վրայ կը
 նիրհեն ,
 Լըռութիւնը կ'ընդհատեն վայրի չագալ , յո-
 վազ , բու ,
 Մեռած ծովուն ալեակներն կը խուսափին
 ափերէն .
 Սողոմ Գոմոր կը ծածկեն անիծապարտ իրենց
 բաղբ ,
 Խաւի մը տակ ծրծըմբի , որմէ ելած գոլորշին
 կը ծաւալի Թունաւոր , ու ճիշով մը յուսահատ
 Մայրիներու Թռչնակներն անկէ հեռու կը
 փախչին :

Կամաց կամաց ու դողդոջ' առանց երգի մըր-
 մունջի ,
 Աւազներու ընդմէջէն կը Թաւալի Յորդանան ,
 Ալիք չունի ու կարծես յաւերժապէս կը հանգչի
 Գեսն անիծուած արիւնի ու ներսուծի ան-
 կենդան :
 Չուր կ'որոնէ աչքը հոն եղիայի կառքն հրե-
 դէն ,
 Նիհար ոսկրոտ ետային , սուրն հրեշտակին
 ոճրադատ .
 Տապանակին առջեւ վառ լոյսն անբաժան
 կանթեղէն .
 Թաղեց զանոնք իրեն տակ անծայրածիրն ա-
 նապատ :

. . . Սակայն անկիւն մը կայ լուռ' Յովսափա-
 տու ձորին մէջ ,
 Ուր իրարու խըռնըւած , երջանիկներ կը
 նընջեն ,
 Անոնք որոնք հաւտացին եւ ըզգացին լոյսն
 անշէջ'
 Կաթած իրենց հոգւոյն վրայ երկինքներու
 բարձունքէն :
 Գերերջանի'կ դիակներ . . . որ կը սպասեն
 անտրտունջ ,
 Լըսել կեանքի հրեշտակին որոտագոջ փողին
 ձայն ,
 Ժամն ուր Աստուած ալեւոր պիտի իջնէ
 հըրաշունջ
 Իր շեշտովի կը արել հոն կեանքերու հուսկ
 դատաստան :

Սերովամէն բիչ մը վար , շաւիղ մը կայ մոլորուն ,
 Մէջքերնին կոր շէնքերու բաւիղին մէջ խեղդուած ,
 Որ կը պահէ տակաւին հին խունկերու ծուխերուն
 Ամպի գոյնը անորոշ, տրամուծիւնը միգամած.
 Այդ շաւիղէն կ'անցնէր մերթ սուրբ ուխտին հին տաճանակ ,
 Որուն առջեւ պարելէն երգիչ Արքան կը գընար :
 Ու կը վառէր ոսկեղէն եօթնաստեղեան աշտանակ ,
 Իսրայէլն ալ կը ցընծար յաղթանակով տենդավառ .
 Երգ երգոցի չքնաղ վարդն ու Սարօնի շուշաններ ,
 Փունջ փունջ այնտեղ բուրեցին , յօրինեցին ծաղկաւետ
 Կեանքի ուղին իմաստնոյն ու մըրայօն , սեւահիեր
 Դեղրեկիներ քալեցին նոյն շաւիղէն լուսահետ Դէպ ի Տաճար ,
 ուր փառքով կ'ընկողմանի եհովան՝
 Երազանքի մէջ մոռցած աստուածութիւնն ու երկին ,
 Երբ առաջին շողերուն մէջ լուսասփիւռ առտուան
 Կը հալէին շարականն ու ալելուին ցնծագին :

Շաբաթ օրերն հիմակ ալ նոյն շաւիղէն կը քալին
 Յընցոտիներ վըրանին Իսրայէլի զաւակներ ,
 Ծեր , կազ ու հէք , վիզերնին ծուռ , քայլերնին դողալէն ,
 Կ'երթան պատի մը առջեւ ժամանակէն կիսաւեր
 Ու կ'արտասուեն անշըշուկ : Դուն, Աւետեաց Պաղեստին ,
 Փառքի օրերդ տեւեցին բաղեղներու ծաղկին պէս
 Մէ'կ արշալոյս՝ ու դուն զուր կը յուսաս թէ վերըստին
 Զաւակներուդ Թափառիկ դարձը պիտի ողջունես :

Հրէական յիշատակներուն մէջ Թափառումը մերթ կը ներշնչէ բանաստեղծին տեսիլներ ամբողջ մարդկային ճակատագիրն ընդգրկող , տեսիլներ լայն ու գեղեցիկ .

Անլուծելի հանելուկ , գաղտնիք , մա'րդն ու իր հոգին .
 Փակած հողին՝ աստղերէն վար՝ անոնցմէ Թըռչի վեր ,
 Ինքը տըկար ու հիւլէ , այլ կուրծք կուտայ փոթորկին
 Ու կոհակին , մի հըպարտ ընդվըզումով ա՛վեցեր :
 Կարճ է Յամբան՝ քալելու , սակայն անհուն իր կորով ,
 Դէպքը տաճարն՝ այլ ներսէն՝ հիւսքը երկաթ ջիղերու .
 Թէեւ շուրջը կործանին ամէն ինչի՛ն ինքն անխրոով
 Իր իտէան կ'երագէ , Աստուածն՝ ըլլալ Աստուծոյ :

Ազուր շեշտեր կան նաեւ այն էջերուն մէջ , ուր բանաստեղծը կը պատմէ բոլոր ցաւերն ու չարիքը զոր կրօնքները պործած են՝ ազգերն իրար բզբտելու մղելով . աստուածաշնչական վեհ ոճով հետեւեալ տունին մէջ , Ալիքեան կ'երագէ պահ մը բնաջնջումը կրօնքին , որ սէր կը քարոզէ եւ մահ կ'արտագրէ :

Թող բարձրանար մէկ գիշեր իր դամբանէն Մեռեալ Մով ,
 Նեխած ջուրերն իր նետէր Սաղէմին վրայ եւ իր տակ
 Անյայտանար ամէն ինչ , անցեալն իր սեւ յուշերով
 Թող ընկղմէր մոռացման վիհին ներքեւ անյատակ :
 Յորդանանը կանգ առնէր ու լեռները՝ զարհուրած՝
 Վեր նետուէին արմատնէն , եւ անսահման , ամայի ,
 Անապատ մը երկարէր երկրին վըրան Աւետեաց ,
 Ու տարածուէր անէծքի լռութիւնը ամեհի...
 Ու կըրօնքը քայքայուէր

Մարգարէներու աշխարհին մոխիրները քըրքրած ատեն , բանաստեղծը յաճախ կը յիշէ հեռաւոր աշխարհն իր հայրերուն , կ'ողբէ իր ցեղը՝ բազդատելով զայն հրէականին .

... Կայ սակայն ցեղ մը նըման միւսին ,
 Քառսուն դար է քեզ համար , Ազատութիւն ցանկալի՛ ,

իր նահապետ լերան շուրջ՝ արցունքն արիւնն
 կը հոսին
 Բու կարօտովդ հըրայրեաց. մշտաուրելուր կը
 հալի . . .
 Ա՛ւր ես արդեօք . աշխարհի վըրան այլ եւս
 չի կա՞ս դուն ,
 Կը խո՛ւսափի՞ս այն ցեղին զաւակներէն պաշ-
 տող քեզ .
 Չունին անոնք առաջնորդ՝ ոչ ամալի , ոչ
 կրակի սին ,
 Այլ Հայրենիք մ՛աւերակ՝ բագնիդ վըրայ ող-
 ջակէզ :

Յայտնի է որ այս հարցման պատասխանը
 դժուար պիտի չըլլար Ազատութեան համար .
 ան միշտ կայ ու կ'ապրի , բայց անոնց համար
 միայն որ գիտեն իրենց բազուկին ու հողուն
 ուժովը զայն իրենցն ընել . Ալիքեան ըմբռնած
 է զայդ , եւ կը կշտամբէ իր ցեղը որ իր ցաւ-
 ըուն դարմանը՝ զարերով՝ խաչին ոտքը լալով
 է փնտռած , փոխանակ սուրին ծայրէն զայն
 սպասելու .

Քանի՛ անգամ կընայիր խաչի փոխան առնել
 սուր .
 Դուն մերթ առիւծ մերթ արծիւ՝ նախընտրե-
 ցիր Գառնուկին
 Դրօշը պարզել ու դարեր պաղատագին հայ-
 ցել զուր ,
 . . . Աստուածորդւոյն շիրմին մօտն իսկ զըր-
 կեցիր սըգազգեաց
 Ջաւակներըդ որ կանգնեն տաճար ու քու
 վիշտերուն
 Թարգման ըլլան , այլ ափսո՛ս , Անբաւն հոն
 ալ լուռ մընաց :
 Մատուռները մընացին ըստուերներով տըրտ-
 մագին՝
 Լուռ , ամայի , Աստուածներն առանց գիրենք
 պաշտողի . . .

Բարձր յատկութիւններուն հետ զոր այս
 քերթուածը երեւան կը բերէ , կան՝ դժբաղ-
 դարար՝ անոր մէջ բաւական կարեւոր թերու-
 թիւններ . Բանաստեղծին թոփչը մերթ շատ վե-
 րերը կը սլանայ , բայց մեծապէս անհաւասար
 է , եւ մերթ՝ կը թուլնայ , կը կաղայ , հողուն
 վրայ կ'իջնայ ուժաթափ . կը գտնենք հոն այն
 ստեղծ հասարակ վերադիրներ , արձակունակ

բացատրութիւններ , սամիկ կամ անճիշտ պատ-
 կերներ .

Գըտաւ սրտի տըկար կողմն ուղեկորոյս մարդ-
 կուծեան . . .
 . . . Ասոնք եղան ըսկզբունքն ու կտակներն
 իր վերջին
 Որոնց վըրայ կը յուսար հիմնել նոր կիանք ,
 նոր կըրօն :
 . . . Մարդն ալ կրօնքը , զիջումներով փո-
 խադարձ
 Ձիրար խաբել ջանացին , մինչեւ մեռան իրա-
 կան
 Նըպատակներն Յիսուսին , եւ սին կեղեւը
 մընաց .

Մերթ , նոյն իսկ բանաստեղծին մտածումը
 իր միութիւնը կը կորսնցնէ , կը հակասէ ինք
 իրեն , չիօթ ու տարտամ կը դառնայ . ցանկալէ
 յետոյ՝ նախերգանքին մէջ՝ գտնել նոր Աստուած
 մը տառապանքին կարեկիր » , քերթուածին մէջ
 Ալիքեան նախամեծար կը համարի շանթարձակ,
 անդութ ուժամով Եհովան՝ Յիսուսէն՝ զոր ինքն
 իսկ կ'անուանէ սակայն «խոնարհ դասուն կա-
 րեկիցն առաջին» .

. . . Յոյսի բառեր մըմնջեց գերի անյոյս ամ-
 բոխին
 եւ սիրոյ մեղկ Աստուծոյն՝ փոխակերպեց եհո-
 վան . . .

Ուրիշ տեղ մը , Նիցչէական ազդեցութեան
 տակ , Ալիքեան «գերի Աստուած» կը կոչէ Յի-
 սուսը . ու մինչեւ իսկ , ինքը՝ արիւնհեղութեանց
 տեսարանէն ընդվզած , իր մարտիրոս ցեղին
 ցաւին հանդէպ սարսաղող երգիչ , կը ծնրադրէ
 Եհովային .

Երանի՛ Թէ ջնջուէին քսան դարերդ աշխար-
 հէն ,
 Յիսուս , ու մենք ըլլայինք դէմն Աստուծոյ
 շանթարձակ ,
 Ու խաղալիկ իր կամքին , քմահաճոյքներուն
 իր ամէն .
 Կը գիծովնար նա ծուխէն ողջակէզի ճենճե-
 րին ,
 Ու կը ներէր շատ անգամ իր ապստամբ զա-
 ւակաց :

Ենովան հանգիստ ձգենք իր ասիացի բռնակալի սեւ գերեզմանին մէջ. թող շնթուկած մնայ հոն : Յիսուս իրօք գերի ազգէ մը կը բղխէր, բայց « գերի » չէր, « մեղկ » չէր. ինքն է որ « գերութիւնը » ջնջեց, ու այդ քաղցր հերոսը սորվեցուց, իր օրինակովը, որ իրական քաջութիւնը տկարները խողխողելու մէջ չի կայանար, այլ գաղափարի մը համար կեանքը յօժարակամ զոհելուն մէջ : Բայց չեմ ուզեր ծանրանայ այս հարցին վրայ, որ՝ ինքնին՝ երկար ընդլայնմանց պէտք ունի. կը նկատեմ միայն մտածման հակասութիւնը . Պ. Ալիքեանի մէջ այդ հակասութիւնը աւելի եւս կը բարգանայ, երբ « մեղկ ու գերի » անուանելէ յետոյ Յիծուար, Ալիքեան ուրիշ տեղ մը կ'ընդունի որ Փալիլիացին յղացած էր ազնիւ իտէալ մը մարդկութեան համար, բայց մարդիկ՝ սխալ հասկնալով՝ իր վարդապետութիւնը աղիտաբեր են դարձուցած :

Ալիքեանի լեզուն սիրուն աշխարհաբար մըն է, բայց տեղ տեղ գրաբարի աւելորդ հետքեր կան դեռ. « տաղ մ'է նա », մի հըպարտ ընդվզումով », « ի յանապասն ի ծովափ », « ուր խառնեն » (փոխանակ « կը խառնեն » ի), եւն.

Տաղաչափութիւնն ալ, ընդհանրապէս դիւրասան, ունի մերթ անախորժ խճողումներ, կողաղումներ, աններդաշնակութիւններ, « Ով կիանն փակած իր ուղին » (ովկիանն՝ երկու վանկ հաշուած, մինչ՝ հոս՝ չորս վանկ է իրապէս), « արցունք արիւնն կը հոսին », եւն :

Իր թերութիւններով հանդերձ, « Դէպ ի անդունդը » զմայլելի քերթուած մը կը մնայ, իր տրոյն տեղը գրաւելու սահմանուած մեր ժամանակակից բանաստեղծութեան մէջ. ան՝ մին է այն շատ սակաւաթիւ փորձերէն որ մեր մէջ կատարուած են իմաստասիրական խուկումներ թրթռացնելու հայ քնարին վրայ : Կը մաղթեմ որ գործին յաջորդ երգերուն մէջ Ալիքեան իր ներշնչման բարձրութիւնը պահպանէ եւ իր արտայայտութեան յաջողի տալ աւելի կռու կատարելութիւն մը :

Հատորը կը պարունակէ նաեւ երկու անջատ փոքրիկ բանաստեղծութիւններ, Տեախու եւ Աղաւիկն անեծֆը, առաջինը՝ բոլորովին

թոյլ, երկրորդը՝ յանդուգն ու բարձր յղացմամբ, բայց՝ քնարերգական ազւոր տողեր ու քանի մը ուժեղ պատկերներ ունենալով հանդերձ՝ արտայայտութեան մէջ ընդհանրապէս տկար, խաթարուած՝ լրագրական արձակուճակ գնացքով մը բացատրութեանց, բոլորովին անպատշաճ այդ մեծ նիւթին. կան կտորներ որ պարզապէս Արփիարեանի հեռագրական ոճով խմբագրականները կը յիշեցնեն, ինչպէս հետեւեալը .

Իրիկունը Ազամ եկաւ երգելէն :
Տարօրինակ : Ո՛չ արձագանք մ'իր ձայնին .
Արդեօք օ՞ճը : Չէ՛ : Վստայի էր թէ եւան
Երկրորդ անգամ չէր խաբուեր :
« Կայէ՛ն, Աբէ՛լ » : Խնդաց ինքնին : « Թերեւս
Ինձ աչքկապուկ կը խաղան : »
Մովը կ'ունար, եւն :

Արտաշիր Բաբական կարնամակ. պահլաւ բնագրեկն քարգնակեց Տր. Յ. Թիրեախեան. — Մեծարժէք աշխատութիւն մըն է այս գիրքը, արդիւնք երկայն ծանր ճիգերու եւ ընդարձակ հմտութեան, գրուած այն համեղ ու վայելուչ հայերէնովը որ յատուկ է այդ գրագէտ-բանասէրին եւ որուն հրապոյրը գրեթէ չեն յաջողիր արեւ գրաբարի մէկ քանի աւելորդ ոտնձգութիւնները : Քրտնիկը, որու թարգմանութիւնը կուտայ Տր. Թիրեախեան, շատ հետաքրքրական է ինքնին՝ իբր տաքիւման մը պահլաւ գրականութեան, եւ իբր բնատիպարը Շահնամէի այն գրուագին որուն թարգմանութիւնը կը հրատարակենք Անահիտի մէջ. մեծապէս շահեկան է տեսնել ինչ որ Ֆիրտուսի վե՛ր ու ճօխ երեւակայութիւնը աւելցուցած է՝ այդ քրտնիկը դիւցազնիւրդութեան մը բարձրացնելու համար : Բազմաթիւ ծանօթութիւնները որ գրքին վերջին մասը կը կազմեն, ստուար ու կարեւոր նպատարերու թիւն մըն են հայ լեզուաբանութեան : Յառաջարանը կը յարուցանէ բանասիրական ծանրակշիռ հարցեր, եւ՝ գլխաւորապէս՝ պահլաւերէնի եւ դասական հայերէնի տարօրինակ հանգիստութիւններուն գաղտնիքը լուծելու հարցը եւ՝ ստոր հետեւանքով՝ նոյն իսկ հայերէնի ծագման ու կազմութեան հարցը : Տր. Թիրեախեան հարցը կը դնէ, եւ առ այժմ որոշ լուծում մը չի տար անոր : Սակայն, չտալով հանդերձ լու-

ծուռ մը , Տր. Թիրեաքեան կը գրէ սա սողերը որ կը յայտնեն իր ներքին միտումը հայերէնը պահպանելու :

« . . . Այս աղերսները , այս առնչութիւնները (հայերէնի եւ պահպանելու միջեւ) հասարակ բիրտ հանդիպումներ չէին երեւնար , այլ մեծաւ մասամբ՝ ա՛յնպիսի ներքին՝ հիւթական՝ հիւլական , ըսինք , զուգախառնութիւններ էին որ խորունկ մտածութեան եւ լուրջ եւ անպաշար ու անաչառ դիտողութեանց տեղի կուտային . . . Պիտի յայտարարեմ թէ մինչեւ իսկ զարնուր թուեցաւ ինձ այսչափ սերտ չգիտեմ ինչութիւնն ըսեմ Պահլաւի եւ Հայու մէջ : . . . Գիտենք որ մեր լեզուին պատմութիւնն տակաւին եղած չէ . այնպէս որ , ինչ որ ալ ըսուեցաւ գրուեցաւ մինչեւ հիմա թէ մեր եւ թէ օտարաց կողմանէ , թուեաց կարծեաց սահմանին մէջն են բոլորն ալ . ճշմարիտն այս է որ թարգմանչաց ձեռնարկութիւնէն առաջ լեզուին ունեցած վիճակին վրայ ոչ ոք ստորգ բան գեւ գիտէ :

« Գրի գիւտով եւ Ա. Գրոց թարգմանութեամբ , յանկարծ , հիանալի կատարելութեամբ հրաշարուեստ լեզու մը կ'երեւնայ ի միջի . այս է մեր բոլոր գիտցածը : Լեզուին բոլոր պատմութիւնը այս յեղակարծ երեւման թուականէն յետոյ կրած վիճակներու պատմութիւնն է . ո՛չ առաջ , նաւարն ա՛յն աստիճան չօշափելի . լուծութիւնն ա՛յնքան բացարձակ է այդ նախնական վիճակին վրայ որ մարդ չհամարձակիր մի որ եւ է փորձիչ հաւանականութեամբ կարծիք մը գոյացնել կամ ըսել : Այն մի քանի հատակոտորներն ալ որ նորենացին « թուելեաց » անուամբ մեզ կ'աւանդէ , իբր հին բարբառոյ մը նշխարք կամ նշմարանք , ես շատ կը տարակուսիմ թէ պատմահայրը զանոնք իսկապէս tale quale իր ժամանակի ռամկին կամ Գողթնացեոց բերնէն յսած լինի : Ըստ ամենայն հաւանականութեան , մի օտարաձայն աշուղի կամ աշուղներու հատուածեալ հագներգութիւններն էին սոքա զորս հայրենասէր քերթողահայրը թարգմանաբար տուած է մեզ՝ հայացնելով : »

Ասոնցմէ կարելի է հետեւեցնել թէ Տր. Թիրեաքեան սակեղարեան հայերէնի կազմութիւնէն առաջ չի հաւատար հայերէն լեզուի մը եւ այդ լեզուով բանաստեղծութեան մը գոյութեան : Այդ թերահաւատութիւնը ինձի համար դժուար

է իւրացնել : Ինչո՞ւ . ենթադրել որ նորենացին թարգմանած ըլլայ այդ կտորները եւ ոչ քաղած ժողովրդին բերնէն : Ամէն ժողովուրդ կ'երգէ , կը քերթէ՝ գիր ունենայ կամ ոչ . Ե. դարէն առաջ , հայ անգիր բանաստեղծութիւն մը կար անտարակոյս . ոչ մէկ պատճառ ունինք a priori հերքելու այդ կարելիութիւնը . ընդհակառակն , ստիպուած ենք ներհակ վարկածին հակիլ . անհնար է ենթադրել որ Մեսրոպեան շրջանէն առաջ յատուկ լեզու եւ բանաստեղծութիւն չունենար Հայը , այն Հայը որուն բանաստեղծական կարողութիւնները ծանօթ են , որ առաջաւոր Ասիոյ աշուղներուն գէթ կէսը ինքը կը մատակարարէ այսօր : նորենացեոյ յիշած Գողթնաներգերու կտորները ցոյց կուտան՝ ըստ իս՝ թէ հայերէնը մեր այեղներուն քնարին վրայ արդէն կազմուած , յղկուած էր , եւ Ե. դարու թարգմանիչները զայն « ի գիր աօին » , եւ ճոխացնելով այլ եւ այլ օտար տարրերով՝ դարձուցին զայն սակեղարեան հայերէնը , իսկ պահպանելու եւ հայերէնի առնչութիւնը ինձի համար կը բացատրուի այն իրողութեամբ որ Պարթեւները՝ որոնց լեզուն էր պահպանելու տիրանալով հայկական գահուն , իրենց լեզուն բերին հաստատեցին հայ բարձր գասուն մէջ , եւ անկից՝ տարածելին , բնականաբար , ժողովրդին մէջ . Գրիգոր Լուսաւորիչ , Մեծն Տրդատ , Մեծն Ներսէս Գարթեւ էին . Ե. դարուն մեծ շարժման զլուս կեցող անձնաւորութիւններէն երկուքը , Վառձապուհ թագաւորը եւ Սահակ կաթողիկոսը , Պարթեւ էին ցեղով . արքունիքին , ինչպէս եւ հայ ազնուական գասակարգին մէջ , անչուշտ կը խօսէին յաճախ՝ պահպանելու կամ պահպանախառն հայերէն մը , նման այն տաճկախառն հայերէնին զոր մեր պապերը կը խօսէին . արդ , որովհետեւ գասական գրաւոր հայերէնի այդ հիմնադիրները որ բոլորն ալ արքունական միջավայրի մարդիկ էին , կը խօսէին պահպանախառն հայերէն մը , գրի առած են այն լեզուն զոր կը խօսէին : Պահլաւ տարրին գոյութիւնը այսպէսով շատ հասկանալի է , — ինչպէս որ շատ հասկանալի է նաեւ որ ռճարանութեան , Փրազաչիութեան համար՝ յունական եւ ասորական մատենագրութեանց հմուտ ու հիացող այդ գրագէտները խորապէս հետեւած ըլլան այդ երկու մտտեղագրութեանց եւ անոնց ազդեցու-

թեամբ հայերէնը ճոխացուցած ու նրբացուցած : Բայց թէ ի՞նչ էր ինքնին՝ բուն հայերէնը՝ այս բոլոր արտաքին ազդեցութիւններէն զուրս, չեմ գիտեր : այդ հարցման պատասխանը խալտեան բեւեռագիրները եւ հասեան արձանագրութիւնները պիտի տան թերեւս : Ամէն պարագայի մէջ, հայերէնը պէտք է, ինչպէս ամէն լեզու, ունեցած ըլլայ իր բնիկ հիմքը, եւ՝ ինչպէս ամէն լեզու, օտար տարրեր ընդունելով իր մէջ՝ եւ զանոնք իր ուրոյն ոգոյն համաձայնեցնելով, կերպարանափոխելով եւ զարգացնելով, յանգած այն բաղմատարր, ներդաշնակ եւ ինքնաարիւ հոյակապ էակին՝ որ է մեր ոսկեղարեան հայերէնը, լեզու մը՝ այնքան օտարախառն ու բարդ որքան՝ օրինակի համար՝ ֆրանսերէնը կամ մանաւանդ անգլիերէնը, բայց եւ նոյնքան ինքնուրոյն, եւ « ազգային », եւ այնքան գեղեցիկ՝ իր երեւան բերած *résultante*ով՝ որքան ամենագեղեցիկ լեզուներն աշխարհիս :

Յարմանի Ասման, Փրանսերէն քարգնանուրիւն Յրեւերիք Մալիերի . — Տ. Ֆրետերիք Մաքլէր հրատարակեց Ֆրանսերէն թարգմանութիւնը Յարմանի Ասման քերթողական վէպին, որուն բնագիրը լոյս տեսաւ Անահիթի մէջ : Յարմանի Ասմանը, մեր նախնեացմէ մեզի մնացած սակաւաթիւ նմուշներէն մէկն է վիպական բանաստեղծութեան, ուր սէրը եւ քաջութիւնը կ'երգուին՝ հեթանոսական ներշնչումով մը : Պ. Մաքլէր, հետեւելով Հ. Պարոնեանի, էվարիսթ Փրիւտոմի եւ Մարթէն արբային կարծիքին, (որ պարզ ենթադրութեան մը վրայ կը յենու), կը պնդէ թէ այդ քերթուածը պէտք է թարգմանութիւն մ'ըլլայ պարսկերէնէ. յիշելով Անահիթի մէջ այդ մասին յայտնած իմ տարբեր կարծիքս, Պ. Մաքլէր կը գրէ . « . . . Մենք պարսիկ նախատիպարի մը դոյութեան կը հաւատանք՝ այն բաղմութիւ պարսկերէն բացատրութեանց պատճառաւ որ հայ բնագիրը կը կիտուածազարդեն եւ զոր թարգմանիչը չէ կրցած իր լեզուով արտայայտել : Իր թարգմանութեան մէջ պահպանած է օտար բառերը զոր չէ հասկըցած : »

Ուրիշ տեղ մը, ծանօթագրութեան մէջ, Պ. Մաքլէր կ'ըսէ . « Եւ շատիկ առնեն, շատիկ,

պահլաւ բառ, պարսկերէն շատի, ուրախութիւն : Այս պահլաւ բառին գոյութիւնը մեր հայ բնագիրին մէջ՝ ենթադրել կուտայ Յարմանի Ասմանի բաւական հին նախատիպ մը որ իբր օրինակ ծառայած է այս ի հայ վերածման : »

Այս փաստերը համոզիչ չլին, եւ իմ կարծիքս ես կը պահեմ անխափառ : Պարսկերէն բառերու գոյութիւնը Յարմանի Ասմանի մէջ, բնաւ իրաւունք չի տար վճռելու թէ այդ գրութիւնը պարսկերէնէ թարգմանութիւն է, ոչ ալ՝ մանաւանդ՝ թէ թարգմանիչը այդ բառերը նոյնութեամբ պահած է՝ զանոնք չհասկնալուն համար : Մեր հին աշուղական գրականութեան բոլոր գործերը, որոնց հայ հեղինակի ստեղծագործութիւն ըլլալը որոշ գիտենք, ողողուած են պարսկերէն — ինչպէս եւ արաբերէն եւ թրքերէն — բառերով . այդ բանաստեղծները կը գրէին ժողովրդական լեզուով, եւ ժողովրդական լեզուն արդէն իսկ լեցուն էր մահմետական արաբական տող ցեղերուն բառերովը : Իսկ պահլաւ բառի մը գոյութիւնը չի կրնար առաջնորդել Յարմանի Ասմանի շատ հին — պահլաւերէն — բնագրի մը վարկածին . չէ թէ մէկ, այլ հազարաւոր պահլաւ բառեր կան, ոչ միայն աշուղական այլ դասական հայերէնին մէջ :

Յարմանի Ասմանի նիւթը հայկական չէ բնաւ . ու չեմ ըսեր թէ պարսկական « նախատիպար »-ի մը վարկածը անընդունելի է . բայց քանի որ որոշ ապացոյց չունինք զեռ՝ առ այժմ աւելի հաւանական է որ հայ քերթող մը, — թերեւս կոստանդին Երզնկացին, ինչպէս Հ. Անգրիկեան ենթադրեց — ներշնչուելով պարսկական քերթուածէ մը, կամ պարսկական հեքեաթէ մը, կամ՝ տարածուած « արեւելեան » հէքեաթէ մը, ինքն իսկ՝ իր քմայքին համեմատ՝ չարագրած ըլլայ այս հայերէն քերթուածը : Հակառակ տիրապետող հեթանոս ոգիին, որ կը յայտնէ նիւթը կազմող հէքեաթին ակներեւ հնութիւնը, արտայայտութեան եղանակին մէջ՝ քրիստոնէական տարրեր կան մերթ, եւ ոճը՝ Հայու ոճ է : « մեր » աշուղական բանաստեղծներու ոճն է : Այդ քերթուածը, առ այժմ, պէտք է համարուի իբր էջ մը մեր աշուղական բանաստեղծութեան, որուն հեղինակը ներշնչուած է՝ աւելի կամ նուազ չափով օտար աղբիւրէ մը, ինչպէս Ռա-

սին մը ներչնչուած է Եւրոպիոցէսէն , կամ Շէքսպիր մը՝ իտալացի քրոնիկագիրներէն :

Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան. — Այս օրերս երեցաւ երկրորդ հատորը Հ. Ս. Էփրիկեանի Բնաշխարհիկ բառարանին: Այս գեղեցիկ ու բազմօգուտ աշխատութիւնը վերջացի վանքին պատիւ բերող գործերէն մէկն է: Հ. Էփրիկեան Հաճաքած է՝ յարդ ծանօթ ազգիւներէն՝ բազմաթիւ շահեկան ծանօթութիւններ մեր հայրենիքին բոլոր գաւառներուն , քաղաքներուն , գիւղերուն , գետերուն , լեռներուն վրայ եւ խմբած ու դասաւորած է զանոնք բառարանի ձեւով , եւ ճոխ պապիկներով լուսաւորած : Գործին առաջին հատորը մեծ յաջողութիւն գտաւ եւ շուտով երկրորդ տպագրութիւն ունեցաւ : Ոչինչ աւելի հասկանալի է քան այդ յաջողութիւնը. ամէն Հայու համար անհրաժեշտ պարտականութիւն է մանրամասնօրէն ծանչնալ իր հայրերուն երկիրը. այս բառարանը մեծապէս կը գիւրացնէ այդ ծանօթացումը : Չեմ տարակուսիր որ միեւնոյն յաջողութիւնը պիտի գտնէ նաեւ այս երկրորդ հատորը :

Ա. ԶՊՊԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒԿ ՆԱՄԱԿՆԵՐ

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ

Թուրքէն 18/30 մարտ 1887

Մեծ. Ստեփան էֆ. Պ. Փափագեան
Ի Կ. Պօլիս

Չորս օր յառաջ Փարիզէն Տրդ նամակս քեզ ուղղելէ յետոյ՝ այսօր իսկ հարկ կը տեսնեմ արտասովորոտ այս գրել , որպէս զի չ'մոռցած քեզ հաղորդեմ ի՞նչ որ պատշաճ է գիտնալդ ազգային խնդրոց նկատմամբ :

Ազգային խնդիր ըսելով պարզապէս Հայկական ինքիւրը կը հասկնամ : Այս խնդրոյն ծնունդ տրուեցաւ այն ժամանակ , ո՛ւր հարկ էր որ ծագէր , չ'էր կարելի չ'ծագել , եւ ասոր ապացոյցն այն է՝ որ նոյն իսկ Տէրութիւնը մաս-

նակցեցաւ ազգայնոց ջանից(1) . իսկ այժմ այնպիսի ժամանակի մը հասանք , որ պէտք է դադարին ամենայն ջանք եւ ձեռնարկութիւնք ԱՐՏՍ.ԲՍ , եւ ամենայն կարողութիւնք եւ զոհողութիւնք ներքին բարեկարգմանց յատկացուին. պատճա՛ռ՝ վասն զի այսօր Եւրոպա Թուրքիոյ նկատմամբ գաղափարն եւ ընթացքն բոլորովին փոխած է . ո՛չ միայն Գրիստոնեայ հասարակութիւնները մասնաւոր խնամարկութեան արժանի չ'դատեր եւ անոնց ազատագրութեան օգնելու տրամադիր չ'է , այլ եւ արդէն ազատագրեալ Յունական , Արաբական , Պուլկարական եւնի փոքրիկ ազգաց անհանդարտ բնաւորութիւնէն եւ աղմկայոյզ ձեռնարկութիւններէն զզուեալ , եւ գրեթէ ամենեքին աստ եւ անդ Մանիէտական հպատակ ժողովուրդներ ունենալով՝ Մանիէտականութեան նուիրական Գլուխ ճանչցուած Օսմ. Սուլթանին իշխանութիւնը փայփայելու քաղաքագիտական հարկին ներքեւ գտնուելով , անոր իշխանութիւնը զօրացունել եւ նիթարկելոց ազատական ձգտումները ջախջախել իրենց սկզբունք ըրած են(2) : Միւս կողմէն Սեյդն եւս կարծեմ հասկցաւ որ եթէ երբէք ազատագրութիւնը փութացուի , զանի իբր բարորութեան սերմունք ընդունելու եւ բեղմնաւորելու յարմար գետին չ'ունինք . սակաւաթիւ ենք , ցրուեալ ենք , աղքատ ենք , սպէտ ենք , եւ ամենք չեն այն յատկութիւններն որ ազգի մը յառաջդիմելուն անհրաժեշտ պայմաններն են : Սոյնպիսի պարագայից մէջ Ազգին համար Եւրոպիոյ շրջանքն եւ Տաճկաց զարդոյթն իբր վրայ չ'հրախրելու եւ ծաղրելի , միանգամայն ահուկի զիրքի չ'մասնուելու համար լաւագոյն եւ իմաստնագոյն ընթացքն է ԱՄՓՈՓՈՒԻԼ եւ բոլոր ձյ՛նն ներքին ուսումնական եւ արհեստական զարգացմանն սպասել , մինչեւ որ ժամանակներն փոխուին եւ հնար ըլլայ նոյն իսկ մեզ վիճակակից բայց տիրող տարեր համերաշխութեամբ(3) մեր կործանեալ առնք վերականգնել եւ կանգնել զայն իբր թու՛մբ հիւսիսային ահել զօրութեան դէմ՝ որ զամենայն եւ զամենեւին կլանել կ'սպառնայ հանապաղ(4) : Բայց ասոր հետ միատեղ ո՛չ անցնայ մոռնալ հարկ է , եւ անոր վերաբերեալ յիշմանք խաթարել , եւ ո՛չ ապադալէն յուսակտուր լինել :

Մեր ազգային յիշմանքը ներսիս անուան վրայ յերիւրեալ է , ձգելու է այնպէս , թէ եւ կատարեալ իրաւացի չ'ըլլայ(5) . թո՛ղ պատմութիւնն ա՛յնպէս արձանագրէ , սխալ ըլլայ . խընդիրը եղելութեան վրայ է եւ ո՛չ անձի . միթէ կիցօմ թէլ եւ Շառլըմաներ իրաւա՛մբ կը վայելեն Եւրոպայոցոց սքանչացումն իրենց գործոց համար . հակառակն է թերեւս ճշմարիտ , բայց հոգ չէ՛ , ամէն մեծ գործ անունի մը կարօտ է , անուն մը տրուել է , այն կը մնայ , եւ պէտք է մնայ թէ եւ սխալ ըլլայ , զի մարդ չ'կայ չ'գիտցող որ պատմութիւնն յաճախ ստութեանց , խաբէութեանց , մեքենայութեանց կերտուած մի է , եւ սխալանացն ու ղղիչն դարձեալ ինքն է :

Կը հասկնաս ի՞նչ ըսել կամք կընեմ եւ ի՞նչ պատճառաւ կը գրեմ զասոնք :

Ողջունիւ սիրոյ

Անձնուէրդ
Ս. Ա.

Թու. քէն 4/16 ապրիլ 1887

Մեծ. Ստեփան էֆ. Պ. Փափագեան

ի Կ. Պոլիս

Պատուական բարեկամս,

... Գալով նախքնից նամակներուդ միոյն մէջ գրածիդ որով կը մերժես իմ կարծիք թէ « ազատապրութեան անհրաժեշտ եղող տարրերէն զուրկ կը գտնուինք այժմիկ », իրաւամբ առարկելով թէ առ ի՞նչ ուրեմն թ տարի յառաջ ծագումն Հ. ինդրոյն, կը պատասխանեմ. այն հազուադէպ միջոցին ուր աշխարհ լարական պայքար մի գրգռմամբ հին տունէր կը կործանէր եւ նորեր կը վերականգնէր, եւ մեծագոր աղինք անգամ վեհանձնութիւն չ'ունեցան անշահախնդիր լինելու եւ իւրաքանչիւր պատառ մի կորզելու հետամուտ եղան եւ յափշտակեցին, մե՞նք միայն անտարրեր պէտք էր մնայինք եւ չ'աշխատէինք գէթ փշրանք մը կորզել միջազգային հացկերոյթէն. ո՛չ, չ'եմ կարծիր. հարկ էր, ընդհակառակն, աշխատիլ, եւ աշխատուեցաւ եւ յաջողեցաւ, բայց այն պարագայն իսկ որով թ — 10 տարուան ահագին ժամանակամիջոց մ'անգամ չ'բաւեց՝ մեզ բաժին հանուած բարեաց գէթ ըստմասնեայ վայելումն յաջողցունել, բաւական մեծ ապացոյց է որ արժանաւորութիւն չ'ունէինք, եւ ամաչելով կը խոստովանիմ որ զեռ ա'յսօր եւս չ'ունինք. Բայց յուսումով պէտք չէ. բնա՛ւ բան մի չ'կորուսինք յայնժամու աշխատութեամբք, ընդհակառակն Ազգին ծանօթացումը շահեցանք ՚ի հրոպարակի քաղաքակրթեալ աշխարհի՝ թերեւս առաւել քան Մեծին Տիրոջնայ փառաւ որ թագաւորութեան ժամանակ, եւ այսօր եթէ իմաստութեամբ վարուինք, չրջահայեցութեամբ ընթանանք, ՌՈՒՍԸ ՄԻՇՏ ԹՇՆԱՄԻ ԼԿԱՏԵՆՔ, ՉՕՄՄԱՆՃԻՆ ՄԻՇՏ ԲԱՐԵԿԱՄ ՄԵՁ ՊԱՀԵՆՔ(5), կարող ենք եւ պէտք է աշխատինք ներքնապէս զօրանալ ուսմամբք, կրթութեամբ եւ հարստութեամբ եւ յուսալ իրաւունք՝ որ օր մը 78ի սերմանեալը պիտի հնձինք եւ յագեանանք եւ ուրախանանք (գէթ մեր ոսկերոտիք ՚ի գերեզմանի) ազդովին: Բազաքականութեան մէջ յանկարծազէպի յուսալ ներելի է, բայց անկէ օգտելու համար նախատեսելոց մէջ յառաջդիմելու զանդաղելու չէ. որ չ'աշխատիր ապագայն շինելու, չ'է արժանի ապագայի:

Մնամ միշտ Քոյդ
Ս. Ա.

1) Չմայլելի է այս սողը՝ իբր վարժապետական միամտութիւն, — եւ շատ նշանակալից. — « Տէրութիւնը (Օսմանեան տէրութիւնը) մասնակցեցաւ(?) Հայոց ջանքերուն » . . . Մասնակցեցաւ, անշուշտ, այդ ջանքերն ի զե-

րեւ հանելու համար: Եւ կրնա՞ր՝ այլապէս՝ մասնակցել: Եւ ա՞նուի չէ՞ որ Ստեփան փաշա, այդ շրջանի « վարիչներէն » մին, անկարող եղած ըլլայ ասիկա հասկնալու:

2) Այդ « սկզբունքը » նոր չէր. Պիքընսֆիլտեան Անգլիային սկզբունքն էր, որ Պերլինի վեհաժողովին մէջ մասամբ յաղթեց Ռուսիոյ ներհակ եւ աւելի վեհանձն սկզբունքին, եւ վեհաժողովէն յետոյ Ռուսիան ալ ձանձրացած եւ ինչ ինչ ապերախտութիւններէ թուլցած ըլլալով՝ տարածուեցաւ եւ տիրական դարձաւ:

3) « Տիրող տարեր համերաշխութեամբ Հայոց կործանեալ տունը վերականգնել » . . . Այս յոյսը կրցեր են ունենալ մեր վարիչները. . . այս յոյսը թուրքին վրայ, որ այնքան նահանգներ կորսնցուց, որովհետեւ ոչինչ կ'ուզէր չնորհել ինքնաբերաբար՝ բայաներուն. . . Միշտ նոյն հիմնական զգացումն է. — ներքնապէս « ստորկական » . — « Թուրքը, ինչ ալ ըլլայ, աղկ կ'մարդ է. Ռուսին ձեռքը չի յինանք, ինչ կ'ուզէ թող ըլլայ, Թուրքէն բաժնուելու չէ. Թուրքը օր կուգայ որ մեզի ազատութիւն ալ կուտայ, համբերենք, ամիսփունք, զարգանանք, եւ Թուրքէն չբաժնուինք. . . » Թուրքը մեր առունը կը մանէ, մեր աղջիկները կ'առեւանդէ, մեր եկեղեցիները կը պղծէ, միւլ կ'արհամարհէ, կը քֆրէ, կ'անպատուէ, մեզ շան տեղ կը դնէ, մեզ կը շահագործէ, հող չէ, գազ ո՛ր է քիչ մը, բայց աղէկ մ'ըզ է. չբաժնուինք Թուրքէն. . .

4) Պարզ է, չէ՞. Հայը իր առունը պիտի վնասի վերականգնէ իբր թուամ օսմանեալ պետութեան՝ ընդդէմ Ռուսին. . . Եթէ Թուրք տարրը այդ բանը ինքնին հասկնալու կարող ըլլար եւ այդ իր շահերուն իրօք ձեռնառու պատմական փոփոխութիւնն իրագործէր՝ ոչինչ պիտի ունենայի բոկու. բայց չէ՞ որ ակնհայտ է թէ Թուրքը անկարող է այդպիսի հեռատես ու լայնոգի բան մ'ընելու. Թուրքը իր ձեռքով բտրուկ կեալորին ազատութիւն տայ. . . Ենեզ ըլլալու է՝ յուսալու համար զայդ. Իսկ, ծանօթ ըլլալով Թուրքին հոգեբանութեանը, ցանկալ որ Հայը բարբարոսագոյնի պատուարն ըլլալ ընդդէմ նուազ բարբարոսին, ջարդող ու տգէտ մահմետականին թուամն ըլլայ՝ ընդդէմ Տասթալէվաքիներ արտադրող եւ Արեւելքի քրիստոնէից ազատման հարցը առաջին անգամ յարուցանող Ռուսին, անխելութիւն, տիրացուութիւն, ստրկութիւն էր եւ ուրիշ ոչինչ:

5) Այս սողերը հետաքրքրական են. ի՞նչ ըսել կ'ուզէ Ստեփան փաշա ինչո՞ւ այս վերապահումը ներսէն Պատրիարքի նկատմամբ:

6) Անգամ մը եւս Ստեփան փաշա սրոշապէս կը պոռայ իր թրքասիրութիւնը եւ ռուսատեղութիւնը: Կը տեսնուի թէ ո՞րքան իրաւունք ունէի 1878ի մեր ազգային քաղաքականութեան վարիչներուն խորքապէս « հակառուս » զգացումներ վերագրելով: Ազիկա կը շեշտեմ որովհետեւ Պ. Չերազ հերքած էր այդ իրողութիւնը:

Ա. Չ.

Ծ Ր Ա Գ Ի Բ

Կազմակերպական կանոնադրութեան
Թրքական Հայաստանի հաւար(1)

Ա.

Թրքական Հայաստանը կը բովանդակէ ըստ ներքակ քարտէսին, էրզրումի եւ Վանի վիլայէթները, Տրապէզքի վիլայէթին հիւսիսային մասը, այսինքն Սարքերգի սանձաքին արեւելեան մասը (իբր սահմանագիծ ունենալով Արեւելքէն՝ Սփրաւը), Արկանայի սանձաքը եւ Սղերգի սանձաքին հիւսիսային մասը, որ Մեծ Հայաստանի Թրքական մասը կը կազմեն, ինչպէս եւ Բիզէի նաւահանգիստը՝ Պաթումի եւ Տրապէզքի միջեւ՝ վաճառականութիւնն ու արտածութիւնը պերագնելու համար:

Հայաստանի վարչութիւնը պիտի կատարուի հայ ընդհանուր կուսակալի մը ձեւով, զոր պիտի անուանուի Բ. Դուռը երաշխաւոր պետութեանց հաւանութեամբ: Իր պաշտօնատեղին պիտի ըլլայ էրզրում:

Ընդհանուր կուսակալը պիտի ստանայ գործադիր իշխանութեան բոլոր իրաւունքները, պիտի հոգատար ըլլայ հանրային պահովութեան ու կարգաւորութեան նահանգին բովանդակ ստրածութեան մէջ, տուրքերը պիտի գանձէ եւ իր պատասխանատուութեամբ պիտի անուանէ վարչական գործակալները: պիտի նշանակէ դատաւորները, պիտի գումարէ ընդհանուր խորհուրդը (conseil général) եւ պիտի նախագահէ անոր: պիտի հսկէ նահանգին բոլոր վարչական կազմաձիւղները վրայ:

Իր իշխանութիւնը հինգ տարուան համար ստացած, ընդհանուր կառավարիչը պիտի կարենայ Բ. Դուռէն հրաժարեցուցուիլ՝ միայն երաշխաւոր պետութեանց հետ համաձայնութեամբ:

Պիտի կազմուի կեդրոնական վարչական խորհուրդ մը իրեն նախագահ ունենալով ընդհանուր կառավարիչը, եւ որուն անդամ պիտի ըլլան. 1. — Ելեւմտից սնօրէնը. 2. — Հանրային շինութեանց սնօրէնը. 3. — Օրէնսդիր խորհրդական մը. 4. — Հանրային զօրքի սնօրէնը. 5. — Քրիստոնեայ դպրոցներու վերատեսուչը. 6. — Մահմետական դպրոցներու վերատեսուչը: Այս վերջինը պիտի անուանուի ընդհ. կառավարչէն՝ նահանգին Շէրիի պաշտօնէութեան պետին անջարկութեամբ:

Նահանգը պիտի բաժնուի սանձաքներու, եւ այս վերջինները պիտի ստորաբաժանուին քաղանքներու:

Սանձաքներու կառավարիչները եւ քաղանքներու կառավարիչները կ'անուանուին ընդհ. կառավարչէն:

Կառավարիչներն ու ենթակառավարիչները

(1) Բնագիրը հրատարակուած է Մարտի 1890 թիւի 15-ի թիւին մէջ:

ընդհ. կառավարչէն պաշտօն ստացած գրծակալներ են եւ ամէն կերպով գայն կը ներկայացնեն նահանգին ստորաբաժանմանց մէջ: Իրենց վարչութեան մէջ իրր օրնական ունին երկու խորհրդականներ զոր կը նշանակէ ընդհ. կառավարիչը:

Բ.

Հանրային պահովութեան եւ կարգաւորութեան պահպանումը նահանգին ընդհանուր կառավարութեան վրայ բեռնուած ըլլալով, նահանգին ընդհանուր եկամուտներուն 2) 0/0 ին համարժէք գումար մը ամէն տարի պիտի յանձնուի ելեւմտից կայսերական նախարարութեան: Եւ նահանգին եկամուտներուն մնացորդէն հանելով ինչ որ պէտք է քաղաքային ու դատարանական ծախքերուն եւ « Ժամատարրի »-ի ու « միլիո »-ի ծախքերուն համար, աւելցածը պիտի գործածուի հետեւեալ կերպով:

1,8) 0/0 պիտի յատկացուի հազորակցութեան միջոցներու եւ ուրիշ հանրայնութեանց հարկ եղած ծախքերուն:

2,20 0/0 պիտի յատկացուի դպրոցներու հաստատման ու պահպանման: Բարձրագոյն վարժարաններու յատկացուած գումարները զեղչելով, մնացորդը պիտի բաժնուի, իբր նպատակ մահմետական եւ քրիստոնեայ դպրոցներուն միջեւ՝ իւրաքանչիւր դաւանանքի պատկանող նստակեաց ազգաբնակչութեան թուի համեմատութեան նայելով:

Գ.

Պիտի ըլլայ մահմետական պաշտօնէութեան պետ մը, զոր պիտի անուանեն Ն. Վ. Սուլթանը, եւ որ նահանգին մէջ գտնուած Շէրիի բոլոր դատարաններուն վերահսկումի (inspection) պաշտօնը պիտի ունենայ:

Շէրիի դատարանները միմիայն մահմետականներու միջեւ ծագած խնդիրներով պիտի զբաղին:

Քրիստոնեաներու կամ մահմետականաց եւ քրիստոնէից միջեւ ծագած բոլոր քաղաքային, եղեռնական եւ առեւարական դատերը սովորական դատարաններուն առջեւ պիտի տեսնուին: Այս դատարաններէն իւրաքանչիւրը պիտի կազմուի երեք դատաւորէ, որոնց մին նախագահի պաշտօն պիտի վարէ: Ընդհ. կառավարիչը կ'անուանէ դատաւորները եւ կը նշանակէ նախագահները:

Հաշտարար դատաւորութիւնը (justice de paix) կը կատարուի քաղաքին ենթակառավարչին եւ իր խորհրդականներուն ձեռքով:

Մասնաւոր կանոնադրութիւններ պիտի որոշեն թիւը, ձեռնհասութիւնը եւ իրաւունքները Շէրիի դատարաններուն, սովորական դատարաններուն եւ հաշտարար դատաւորներուն: Քաղաքային օրինագիրք մը եւ եղեռնական օրինագիրք մը պիտի պատրաստուին՝ Սերուպայի արդարադատութեան նոր սկզբունքներուն համաձայն:

Դ.

Դուանանքի կատարելազատութիւն պիտի ըլլայ : Իւրաքանչիւր հասարակութիւն պիտի ինքն իսկ հոգայ իր կղերին եւ կրօնական հիմնարկութեանց ծախքերը :

Ե.

Նահանգին հանրային զօրքը կը բաղկանայ՝ 1) «ժանտարմըրի»է մը, եւ 2) « միլիա » է մը :

« Միլիա »ը պիտի կազմուի, մէկզի ձգուելով Գիւրտերը, Չէրքէզները եւ ուրիշ վաչկատուն ժողովուրդները, 1, Հայերէ, 2, Նահանգին մէջ հինգ տարիէ ի վեր բնակութիւն հաստատած ոչ-հայ տարրէն :

ժանտարմըրին սպահովութեան եւ կարգաւորութեան պահպանումովը կը զբաղի՝ նահանգին ամբողջ տարածութեան մէջ : Ան կը գտնուի հրամանատարութեան տակ ժանտարմուպետի մը, զոր կ'անուանէ ընդհ. կառավարիչը՝ հանրային զօրքի ընդհ. հրամանատարին առաջարկութեամբ, եւ պաշտօն ունի ի հարկին, ժանտարմըրին ամրացնելու :

Սովորական ժամանակ, միլիսին գործօն կազմը պիտի բաղկանայ զինուած 4000 մարդէ, առանց արգելք ըլլալու կանոնաւոր զօրքի պահակազուններուն զոր կայսերական կառավարութիւնը պիտի սեղանադրուի իր ծախքով՝ նահանգին բերդերուն եւ ամրոցներուն մէջ :

Զ.

Ընդհանուր խորհուրդի կազմութիւնը սեղի պիտի ունենայ հետեւեալ ձեւով .

Իւրաքանչիւր քաղա պիտի ուղարկէ երկու պատգամաւոր, մին մահմետական, միւսը՝ Հայ, ամէն մէկը՝ քաղաքին մահմետական ու քրիստոնեայ ազգաբնակչութիւնէն ընտրուած :

Այս պատգամաւորները սանձաքին զլիսաւոր քաղաքը հաւաքուելով՝ միասին պիտի ընտրին իւրաքանչիւր սանձաքի համար երկու խորհրդական, մին մահմետական, միւսը քրիստոնեայ :

Ընտրող եւ ընտրելի են՝ երկու աստիճանով,

1. Նահանգին բոլոր բնակիչները որ 25 տարեկանն անցած են, կալուած մը ունին եւ ո եւ է ուղղակի տուրք մը կը վճարեն .

2. Զանազան դաւանանքներու կղերը եւ պաշտօնեաները .

3. Ուսուցիչներն ու վարժապետները : ճանչցուած հասարակութեանց պետերը, իրենց պաշտօնին բերմամբ՝ անգամ պիտի ըլլան այս խորհրդին : Իւրաքանչիւր կրօնի համար՝ մէկ հոգի :

Ընդհանուր խորհուրդը տարին անգամ մը ի ժողով կը գումարուի նահանգին պիսաւոր քաղաքին մէջ՝ նահանգին պիւսաւոր եւ տուրքերու բաժանումը քննելու եւ վերստուգելու համար : Ընդհ. կառավարիչը պէտք է անոր ներկայացնէ ելեւեւտից տուրքերուն հաշուետուութիւն մը :

Տուրքերու գանձման եւ բաժանման սիս-

տեմը պիտի փոփոխուի՝ երկրին հարստութեանց զարգացումը դիւրացնելու նպատակով :

Ընդհ. կառավարիչը եւ ընդհ. խորհուրդը՝ համաձայնութեամբ՝ պիտի որոշեն՝ հինգ տարին անգամ մը՝ այն գումարները որ պէտք է Բ. Դրան յանձնուին՝ ըստ վերեւ յիշուած տրամադրութեանց :

Է.

Միջազգային յանձնաժողով մը պիտի անուանուի մէկ տարուան համար՝ կրաշխաւոր պետութիւններէն, հսկելու համար գործադրութեանը վրայ այս կանոնադրութեան, որ փութորովին ստորագրուած է երեք ամիս յետոյ ի գործ պիտի դրուի :

ՄԵԿ ՔԱՆԻ ՆՕՐԵՐ

Հայաստանի վարչութեան մեջ մտցուելիք բարենորոգմանց մասին

Եւրոպական պետութիւնները, փախաբելով որ Արեւելքի մէջ տեւականութեան հանգամանք ունեցող իրերու վիճակ մը հաստատուի, իրենց ուշադրութիւնը դարձուցին, ինչպէս Պոլքանեան նահանգներուն, նոյնպէս եւ Փոքր-Ասիոյ այն մասին վրայ որ որքանն է հայ ցեղին : Բ. Դուրը ինքն իսկ հարկը զգացած է այդ ճարտարագործ, աշխատասէր եւ ուշիմ ազգութիւնը չձգելու այն ողորմելի վիճակին մէջ ուր կը գտնուի, հետո Եւրոպայէն եւ անոր ներկայացուցիչներէն Անագուտ է խօսել հոս իրենց հայրենիքին մէջ մնացող Հայերուն վրայ. անագուտ մանաւանդ անոնց այդ կոտորածները բազմաթիւ իրենց կովկասի մէկ միլիոն ազգակիցներուն հետ : Բ. Դուրը, քանի որ Սան-Սթեֆանոյի դաշնագրին մէջ յանձն առած է բարեխառութիւններ մտցնել Հայոց վարչութեան մէջ, քանի որ այդ ժողովուրդը Գիւրտերուն դէմ պաշտպանելու ստիպողականութիւնը ընդունած է, հաստատած եւ խոստովանած է ուրիմն այն յոռի վարչութիւնը որուն տակ Հայերը կը հեծեն եւ այն լքեալ վիճակը ուր կը գտնուին քիւրա ցեղերուն հանդէպ :

Հայերը քաղաքական գոյութեան մը, քաղաքական անկախութեան մը աչք չունին. քաղաքային (civil) ազատութիւններ կ'ուզեն, հաստատութիւններ որոնք երաշխաւորեն իրենց ապահովութիւնը, իրենց ինչքերը, իրենց կիներուն ու աղջիկներուն պատիւը, իրենց կեանքի իրաւունքը՝ վերջապէս :

Եթէ այս քաղաքային ազատութիւնները, որոնք 1840էն ի վեր հանդիսաւորապէս խոստացուած են Կիւլհանէի Ռաթթը Եէրթիին մէջ, եւ յաջորդ էյաթթիւրով շեշտուած են, իրականապէս գործադրուած ըլլային, այդ աշխատասէր

հայ ցեղը, շատ տարիներէ ի վեր իր երկրին կերպարանքը փոխած կ'ըլլար: Երեսնիսուսուհայկական նահանգին մոզովուրդը երեսուն տարուան ընթացքին մէջ կրկնապատկուած է:

Հայ ազգը կը խոստովանի Ն. Վ. Սուլթանին եւ անոր մեծանուն նախորդներուն վեհանձն զիտաւորութիւնները: Եթէ այդ զիտաւորութիւնները ապարդիւն մնացած են, եթէ հրովարտակուած բարենորոգումները մեռած տառի ձեւը պահած են, պատճառը այն է որ անոնց գործածութիւնը յանձնուած է կարգ մը պաշտօնեաներու որոնք անոնց նշանակութիւնը չէին հասկնար, որոնք անոնց հարկաւորութիւնը չէին զգար, կամ որոնք անոնց հակառակ էին կրօնական համոզումներով կամ անձնական շահի նկատումներով:

Ինչ ընտելան ալ որ ունենան ուրեմն այն բարենորոգումները զոր պետութիւնները հարկաւոր պիտի նկատեն չնորհել այդ ուշիմ ցեղին որ Արեւելքի եւ Արեւմտքի միջեւ ընական միջնորդն է, առաջին նկատողութիւնը զոր պէտք չէ աչքէ հեռացնել եւ ստանց որուն ո եւ է բարենորոգում ընդունայն պիտի մնայ, ընտրութիւնն է այն անձերուն, այն պաշտօնեաներուն որոնք զայն իրագործելու պիտի կոչուին: Արդ, որովհետեւ պաշտօնեաները մինչեւ հիմայ ընտրուած են մասնաւոր ու առանձնաշնորհուած դասակարգի մը մէջէն, նոր հաստատութեանց համար յաջողութեան էական պայմանը այն է որ անուանուի Ընդհանուր Կառավարիչ մը, պաշտօնեաներու ուրիշ կարգէ մը ընտրուած, այսինքն քրիստոնեաներուն մէջէն, եւ քանի որ խնդիրը Հայաստանի վրայ է, Ընդհանուր Կառավարիչը Հայ մը ըլլայ:

Ինչ ալ ըլլայ այդ բարձր պաշտօնատարին ազգութիւնը կամ բարոյականը, աւելորդ է կարծել թէ անիկա պիտի կարենայ այդ գծուար գործին ձեռք գարնել, եթէ ամէն օր ինքզինքը ենթակայ զգայ յանկարծական պաշտօնանկութեան մը: Ն. Վ. Սուլթանը, իր գահակալութեան ճառին մէջ, իր կայսրութեան չարիքներուն աղբիւրներէն մէկը համարած էր այն դիւրութիւնը որով պաշտօնեաները կ'անուանուին կամ կը հրաժարեցուին: Ն. Կ. Վեհափառութիւնը, իր նպատակներուն բարւոյն համար, կրնար շնորհել իր հայկական նահանգներուն՝ կառավարիչ մը որ ապահով ըլլայ վեց կամ եօթը տարուան շրջանի մը համար իր պաշտօնին գլուխն ըլլալուն:

Ընդհանուր կառավարչի մը ընտրութիւնը ո եւ է բարենորոգման էական պայմանը ըլլալով, Պետութիւնները, հիմնուելով Սան-Սթէֆանոյի սկզբնական դաշնագրին վրայ (ժ.Ձ. յոգուած), հետեւաբար առանց դպչելու Ն. Կ. Վեհափառութեան գերագոյն հեղինակութեանը, կրնան իրենց հաւանութեամբ գործակցիլ այդ ընտրութեանը, ինչպէս կ'ըլլուի Լիբանանի կառավարչին ընտրութեանը համար, եւ այսպէսով այդ ընտրութիւնը պաշարել ամէն բաղձալի երաշխաւորութիւններով:

Ընդհանուր Կառավարիչը, այս պայմաններուն մէջ ընտրուած եւ Ն. Վ. Սուլթանէն պաշտօն ստացած՝ գործադրութեանն ու ընթացաւարութեանը հսկելու այն բարենորոգումներուն զոր Ն. Վեհափառութիւնը պիտի հրովարտակէ, պէտք է որ պաշտօնապէս սասնայ հարկաւոր հեղինակութիւնը՝ այդ գործը կատարելու համար իր պատասխանատուութեան տակ:

Բայց որոնք են այդ բարենորոգումներն ու բարեքրումները: Հայ ազգը կը կարծէ թէ կարելի պիտի ըլլայ դիւրաւ զանոնք սահմանել, երբ չարիքին աղբիւրները մէկիկ մէկիկ մասնաւոր ըլլուին:

Առաջինը, յայտնապէս, Բիւրտերուն արշաւանքներուն ու աւարառութեանց խնդիրն է: Պէտք է զսպել, սանձել անոնց ջոկերը: Մինչեւ ցարդ այդ բանը չեն ըրած եւ սակայն ոչինչ աւելի դիւրին էր զօրագունդերու հրամանատարներուն համար կամ միջոցները պակասած են եւ կամ թէ կամքը: Ժողովրդին ապահովութիւնը ամէն վտանգէ զերծ կացուցանելու համար, ստիպողական եւ իմաստնօշին հեռատես զործ մը չէ՞ իրեն յանձնել ինքզինքը պաշտպանելու հոգը: Իրիստոնեայ թէ մահմետական, իրենց առաջին պէտքը ապահովութիւնը չէ՞ միթէ:

Ընդհանուր Կառավարիչը իշխանութիւնը պիտի ունենար ուրեմն պահակագործի մարմին մը կազմակերպելու, որուն պաշտօնը պիտի ըլլար հսկողութիւն ընել եւ հանրային հանդարտութեան ամէն խանգարիչներուն դէմ երկիրը ապահովել: Այդ մարմինը պիտի բաղկանար՝ առանց խորութեան, մահմետականներէ եւ քրիստոնեաներէ, որոնք առաջուց դիւրաւ սահմանելի դրութեան մը համեմատ պիտի ընտրուէին: Այդ մարմնոյն պետերուն անուանումը ընդհանուր կառավարչին կախում պիտի ունենար, որովհետեւ ան է Ն. Վ. Սուլթանին առջեւ պատասխանատուն նահանգին բարեկարգութեանն ու անդորրութեանը: Մահմետական ու քրիստոնեայ տարբերուն միացումը կազմակերպեալ մարմնոյ մը մէջ՝ պաշտպանութեան ու ապահովութեան միեւնոյն շահուն համար ընտելութիւնը կ'ունենար երկու տարբեր իրարու մօտեցնելու: Մերձեցում որ Հայաստանի մէջ շատ դիւրին է, որովհետեւ գիւղական ժողովուրդը, թէ՛ համանման ծագմանը, թէ՛ հաւասարապէս կրուած թշուառութեան պատճառով, միեւնոյն պէտքերը ունի, հետեւաբար միեւնոյն բաղձանքները:

Ասկից զատ, կայսերական զօրագունդերու հրամանատարները, հանրային ապահովութեան վերաբերեալ ամէն տեսակ խնդիրներու համար, պէտք էր որ հնազանդէին Ընդհանուր Կառավարչին եւ ոստիկանական մարմնոյն օգնէին իր գործը ի գլուխ հանելու:

Նիւթական ապահովութիւնը այսպէս հաստատելէն յետոյ, հարկաւոր պիտի ըլլար զբաղիլ գործաւորութեանց ապահովութեամբ, պաշտօնեաներու եւ ժողովրդին միջեւ յարաբերութեանց ապահովութեամբ, այսինքն արգարութեան կազմակերպութեամբը: Արդարեւ, առանց

գատաստանական կազմակերպութեան, գործառնութեանց համար ապահովութիւն չկայ՝ պաշտօնեաներու սովորութեանց եւ գործելու կրօնութեան կողմէն չկայ բարենորոգմանց եւ բարեփոխմանց տեսականութեան եւ լրջութեան համար: Դատերը կը տեսնուին այժմ՝ վարչական Մէճիսներուն կողմէ՝ որոնց անդամները, հարկահաւաքներ կամ ատոր նման մարդեր են, վարչութեան գործերուն ուղղակի կամ անուղղակի կերպով խառնուած, եւ ասկից զատ Դատավարութեան Օրինագրքին եւ օրէնքներուն նախնական տարրերն անգամ հասկանալու անկարող այս կերպով այդ օրինագիրքը իրենց ձեռքը գործիք մը կը դառնայ օրինական կամայականութեան, որ կը կիրարկուի ժողովրդի մը վրայ որ անոնցմէ աւելի անկարող է զայն հասկնալու:

Շատ փափուկ գործ մը պիտի ըլլար որոշել անաջող թէ ի՞նչ բնութիւն պէտք է ունենայ զատարանական կազմակերպութիւնը զոր պատշաճ է հաստատել ժողովրդին քաղաքային եւ անտարական յարաբերութիւնները կանոնաւորելու համար: Այդ կազմակերպութիւնը որչափ ապահովութեամբ պաշարուի՝ քիչ է, վասն զի ան է բովանդակ վարչութեան կանոնաւորիչը: Բայց ի՞նչ որ անաջող կարելի է հաստատել, այն է է որ հիմնուելիք գատարանները պէտք չէ որ հիմակուան մէճիսներուն պէս վարչութեան գործերուն մէջ ու եւ է կերպով մասնակցութիւն ունենան: Ընդհանուր կառավարիչը պէտք է ուսումնասիրէ ինչպիսիք եւ զայն ուսումնասիրութեանը յանձնէ՝ ձեռնհաս անձերու յանձնաժողովի մը եւ այդ ուսումնասիրութեանց արդիւնքը ներկայացնէ անոր գործադրութիւնը հրամանագրելու պաշտօն ունեցող իշխանութեանց: Այս կերպով, կարելի է վստահ ըլլալ թէ արդարութեան կազմակերպութիւնը պիտի համապատասխանէ, որչափ որ հնարաւոր է, երկրին մտաւորական ու ընկերական վիճակին: Որովհետեւ Արդարութիւնը պիտի ծառայէ իբր վարչութեան անմիջ ու վերաստուգիչ: Ուսումնասիրութեանց Յանձնաժողովը պիտի որոշէ գատարանական իշխանութեան ձեռնհասութեան սահմանները եւ սա կէտը մանաւանդ թէ գատարանները ո՞ր աստիճան կարողութիւն պիտի ունենան գատարան պաշտօնեաները՝ իրենց պաշտօնավարութեանց մէջ գործած զեղծումներուն համար:

Ընդհանուր կառավարիչը պէտք է որ արտօնութիւն ունենայ օտարազգի տարրը իրեն օգնութեան կանչելու Արդարութեան կազմակերպութեան այդ ա՛յնքան էական գործին մէջ. ինքը պիտի որոշէ թէ ի՞նչ չափով պիտի ընէ այդ բանը: Հայերը կը մտածեն որ եթէ այդ տարրը՝ որ է նկարագրի անկախութիւն եւ գիտութիւն, մտնէ, ու եւ է չափով, Բարձրագոյն Ատենի մը կազմաւորութեան մէջ, երկրին ընկերական վիճակը չի հակառակի որ գատարաններուն ձեռնհասութիւնը տարածուի պաշտօնեաներուն վրայ՝ ասոնց գործած զեղծումը

ներուն համար, եւ թէ ընդհակառակն ատով այդ ընկերական վիճակը պիտի զարգանայ այս վերաստուգմամբ:

Ասկից զատ կը մտածեն թէ բարենորոգմանց լուրջ իրագործումը այդ ընդարձակուած Արդարութեան մէջ պիտի դանձ իր ճշմարիտ հիմն ու նեցուկը:

Անգամ մը որ ժողովրդին ապահովութիւնը երաշխաւորուի Պահակազօրքի (gendarmerie) եւ Արդարութեան կազմակերպութեամբ, ուշադրութիւնը կը դառնայ ուրիշ չարիքի մը վրայ զոր Արեւելքը ճանչցող ամէն մարդ մասնանիշ ըրած է արդէն, այն է կալուածական տուրքին ձեւը, տասանորդը, եւ տասանորդ հաւաքելու եղանակը. անհրաժեշտ է որ այդ տասանորդը փոխուի հողին տարածութեան եւ որակութեան համեմատութեամբ վերցուած տուրքի մը: 26 տարուան մէջ, Պոնպէի նահանգին երկրագործական հարստութիւնը կրկինէն աւելի աճեցաւ, տասանորդին շննքաբախի (հողատուրք) փոխուելուն պատճառով: Իրաւ է որ Հայաստանը կալուածատուրք (cadastre) չուի. բայց կարելի է կալուածատուրք պակասը ու եւ է կերպով լրացնել, ինչպէս որ ըրին Հնդկաստանի եւ ուրիշ երկիրներու մէջ ուր այդ այլափոխումը տեղի ունեցած է:

Այս երեք բարենորոգումները, եթէ լրջօրէն ձեռնարկուին եւ գործադրուին, կը բաւեն երկիրը զարգայնելու, զայն կերպարանափոխելու, բայց անոնց գործադրութիւնն ու կանոնաւոր ընթացքը ապահովելու համար, Ընդհանուր կառավարիչը պէտք եղած նիւթական միջոցները ունենալու է:

Հայերը, ինչպէս արդէն ըսուեցաւ, աչք չունին ոչ քաղաքական անկախութեան մը, ոչ օսմանեան պետութեանէն ու եւ է բաժանման. իրենց նպատակը բոլորովին հակառակն է: Յաւակնութիւն չունին որ իրենց երկրին հասոյթները իրենց ուղածին պէս եւ միմիայն իրենց պէտքերուն համար գործածուին: Իրենց համար ուրիշ բան չեն խնդրեր եթէ ոչ իրաւունք ունենալ իրենք իրենցմէ տուրք ժողովելու՝ ընդհանուր տուրքերը կայսերական դանձուն յատկացնելէ յետոյ, որպէս զի այդ կերպով մասնաւոր հասոյթներ ստեղծեն Նահանգին մասնաւոր ծախքերուն համար, ինչպէս են Պահակազօրքի, Արդարութեան, ամէն ազգի դպրոցներու եւ կրօնական հաստատութեանց, Հանրօրուտ շինութեանց, եւն:

Մէկ կողմէ Հայերը կը կարծեն թէ իրենց մասնաւոր եւ տեղական պէտքերուն համար իրենք իրենցմէ տուրք հաւաքելու այս իրաւունքը պիտի օգնէ հրամանագրուած բարենորոգմանց ու բարեփոխմանց իրագործման, որովհետեւ պիտի ապահովէ ծախքը վարչութեան զանազան պաշտօնէութեանց որոնք պիտի կոչուին այդ բարենորոգումները գործադրելու եւ անոնց կիրարկմանց վրայ հսկելու. այդպէսով այդ պաշտօնէութեանց վճարումները պիտի կախում չուն

նենան ու եւ է իշխանութիւնէ որ կրնայ տեղական պէտքերուն եւ բարեկարգման իրագործման համար անոնց չափ հոգածութիւն եւ շահագրգռութիւն չունենայ : Միւս կողմէ, Կայսերական կառավարութեան շահը Ն. Կ. Վեհափառութեան հպատակներուն շահերուն ամբողջութեանը հետ համանման ըլլալով, Կայսերական կառավարութիւնը իմաստուն վարչութեան մը սկզբունքներուն համաձայն պիտի գտնէ որ երկրէն հաւաքէ միայն այն տուրքերը որոնք հարկաւոր են պետութեան ընդհանուր ծախքերուն համար, եւ տեղական վարչութեանը թողու մասնաւոր ու տեղական պէտքերուն համար բաւականաչափ հասոյթներ :

Իր սեպհական վարչութեանը ծախքերուն յատկացնել այդ հասոյթները գանձելու համար նահանգին կողմէ ձեռք առնուելիք եղանակը հետեւեալ կերպով կրնար կարգադրուիլ . Ընդհանուր կառավարիչը, եւ՝ անոր հրամաններուն համեմատ՝ այլեւայլ գաւառակներու կառավարիչները, իրաւունք կ'ունենան, իւրաքանչիւր գաւառակի գլխաւոր քաղաքին մէջ՝ տեղին երեւելիներէն բաղկացեալ ժողով մը գումարել : Այդ գանազան ժողովներուն կազմաւորման ձեռք այժմէն պէտք չէ որ որոշուի . սկիզբները, Ընդհանուր կառավարիչը եւ գաւառակներու կառավարիչները իրենք խկ պիտի ընտրեն անգամները՝ այդ երեւելիներուն ու ամենէն աւելի վրատահութիւն ներշնչող անձերուն մէջէն . ընդհանուր ժողովը որ պիտի գումարուէր նահանգային գլխաւոր քաղաքին մէջ, պիտի բաղկանար պատգամաւորներէ զոր պիտի անուանէին գաւառակներու ժողովները :

Այդ ժողովները կամ մանաւանդ այդ ընդհանուր ժողովը միակ իշխանութիւն մը պիտի ունենար, այն է այլ եւ այլ պաշտօնէութեանց ծախքերուն համար պէտք եղած տուրքերը սահմանել : Այդ ժողովները կամ խորհուրդները ոչ մէկ վերագով պիտի չմիջամտեն ոչ Արդարութեան վարչութեան, ոչ նոյն ինքն Վարչութեան մէջ : Ապագային, փորձառութիւնը եւ երկրին ընկերական վիճակին զարգացումը պիտի նշանակեն վերջնական եղանակ մը այդ խորհուրդներու անդամներուն ընտրութեանց եւ անոնց շնորհուելիք իշխանութեանց ընդարձակմանը համար . Բայց մեզ այնպէս կը թուի թէ սկիզբները, որպէս զի չփոթութիւն յառաջ չգայ, ինչ որ անխուսափելի է, ժողովրդի մը մէջ որ իր սեպհական շահերը վարելու գործին բոլորովին օտար մնացած է, անոնց իշխանութեանց սահմանաւորումը խոհեմ եւ իմաստուն բան մըն է :

Հայաստանի նահանգին կազմակերպութիւնը, այսպէս իր ընդհանուր գծերով պատկերացուած, կարող է բարորութիւնը ապահովել նահանգին բոլոր ընկերներուն, մանաւանդակաւ թէ քրիստոնեայ, ամէնքն ալ հպատակ Ն. Կ. Վեհափառութեան, ամէնքն ալ վարչութեան մը մէջ հաւասարապէս շահ ունեցող : Այս կազմակերպութեան նպատակն է ամենուն բարորու-

թիւնը ապահովել . հետեւաբար, մանաւանդակաւ եւ քրիստոնեայ հասարակութիւններուն թուոյ փոխադարձ համեմատութիւնը երկրորդական կարեւորութիւն մը կը ստանայ : Ոչինչ պիտի փոխուի քաղաքական կացութեան մէջ . միայն վարչութեան մէջ նոր պաշտօնեաներ պիտի դրուին, որոնք մէկ քանի հաստատութեանց ու մանաւանդ Արդարութեան կազմակերպութեան շնորհիւ պահպանուած, պաշտօն պիտի ունենան զորձադրել այն բարեկարգումները զոր Ն. Վեհափառութիւնը հրամանագրել պիտի բարեհաճի, եւ չթողու որ անոնք մտեալ տառի ձեւին մէջ մնան, ինչպէս մինչեւ ցարդ խոստացուած բոլոր բարեկարգումները :

ՆՈՒՊԱՐ ՓԱՇՏԱ

Փարիզ , 1868



Ա չ Ի Ե ր ր Ը

Կապոյս կամ սեւ , սիրուա՛ծ , աղւո՛ր ,
Անքիւ աչքեր այգը սեսան .
Հիմայ հողուն քակ կը քնսնան ,
Եւ դեռ արեւը կը ծագի :


Յայգերն , անուր քան ցորեկներն ,
Անքիւ աչքեր հրբունեցուցին .
Ասդերը դեռ կը շողոտան ,
Եւ աչքերը լի են մութով :

Թե նայուածքե ա՛լ զուրկ ըլլան ,
Օ՛հ , կարելի չե՛ ասիկա .
Դարձած են սեղ մը դեպ՛ ինչ որ
Մենք կ'անուանենք Անբերեոյթ :

'Ի ինչպէս ասդե՛րը խոնարհով՝
Միտ երկրնին մէջ կը մընան ,
Բիբերն ալ մայր մըքնել ունին ,
Բայց իրաւ չի որ կը մեռնին :

Կապոյս կամ սեւ , սիրուա՛ծ , աղւո՛ր ,
Դեպ արեւոյս մ'անհուն բացուած ,
Գերեզմանին մեկալ կողմեն՝
Փակ աչքեր նորէն կ'ստենեն :

Թարգմ. Ա. Չ. ՍԻՒԼԼԻ-ՓՐԻԻՏՈՄ



ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՅՈՒՇԱՍՏԵՏԻՐԸ

Անահիժի նախորդ թիւին մէջ հրատարակեցի վերջին մասը Փափագեանի յուշատետրին: Պատասխանատուութիւնները տիրոջս յօդուածիս երեւումէն քիչ յետոյ, Փափագեանի մօտիկ մէկ ազգականը ինձ զրկեց այդ յուշատետրը, դիտել տալով թէ ան կը պարունակէ կարգ մը փաստեր յիշեալ յօդուածիս տեսութիւններէն մէկ քանին հաստատող:

« Պատգամաւորի մը յուշատետրէն » վերնագիրը, զոր դրած էր տոքիւմանն ինձ ուղարկողը եւ զոր պահպանեցի, բոլորովին ճիշդ չէ: Բայն պատգամաւորները, այսինքն Հայոց դատը եւ յայտնական պետութեանց ներկայացնելու պաշտօն ունեցողները, Խրիմեան եւ Նարպէյ էին. Փափագեան իսկական պատգամաւոր մը չէր, բայց իրեն յանձնուած դերը աւելի կարեւոր էր քան պատգամաւորներունը. իր պաշտօնն էր Պոլսոյ Պատրիարքարանի գիւանագիտական խմբակին իբր լիազօր ներկայացուցիչ՝ վերնսկողութիւն մը ի գործ դնել պատգամաւորներուն վերայ, զանոնք Ներսէսեան ուղեգծին հետեւելու ստիպել՝ երբ տարբեր ուղղութեամբ նախաձեռնութեանց ձգտում ունենային:

Պէտք է նաեւ դիտել տամ թէ յուշատետրը, որ հրատարակուեցաւ Անահիժի մէջ, ամբողջութիւնը չէ. զայն ինձ զրկող անձը յապաւած է անկից կարգ մը կտորներ ուր յուշագիրը պատգամաւորներուն — մանաւանդ Նարպէյի — անձնական կեանքի մանրամասնութեանց վրայ չափազանց ծանրացած է:

Այս յուշատետրը կարեւոր է, իբր տօքիւման մը 1878ի մեր ազգային գործունէութեան ինչ ինչ կէտերը լուսաւորող. որքան ալ գրուած՝ կարճառօտ, կցկտուր ու միամիտ ոճով մը, այդ յուշատետրը ակնյայտնի անկեղծութեան կնիք մը կը կրէ. Փափագեան կ'երեւայ հոն՝ քաղաքական ըմբռնողութենէ, մտաւոր լայն զարգացումէ զուրկ, բայց ջերմ ազգասէր, եւ առանց չպարուսի կամ դիտումնաւոր շտկրտուքի՝ կ'արձանագրէ որ առ օր դէպքերը որոնց ականատես կամ գործակից է եղած:

Այդ անկեղծութիւնը ճշգրտագտութեամբ ընկերայած չէ միշտ. Փափագեան իրաւունք ունի

երբ Նարպէյի կը մեղադրէ իր շոյլ ու ցոփ կեանքը, իր « անձնական » շահերուն համար ըրած կողմնակի ջանքերը որոնց շատ աւելի ժամանակ կը զոհէ քան իրեն յանձնուած պաշտօնին ուղիղ կատարման. բայց Փափագեան իրաւունք չունի երբ Խրիմեանի մէջ յամառութիւն եւ ինքնահաստատութիւն կ'ուզէ տեսնել. Խրիմեանի տիպարը, հակառակ որ Յուշատետրին շատ մը էջերը աննպաստ գոյնով մը կը ներկայացնեն զայն, ուշադիր եւ վերլուծող աչքի մը համար՝ կ'երեւայ շատ տրամաբանական, եւ համակրելի. Հայրիկը համոզուած է որ Նուպար փաշան աւելի կարող է՝ քան ամբողջ պատգամաւորութիւնը եւ քան Ներսէսն ու Օտեանը, ճարպկօրէն եւ հեղինակաւորապէս ներկայացնել ու պաշտպանել Հայոց դատը, եւ կը պնդէ անընդհատ որ զայն հրաւիրեն Պերլին եւ անոր յանձնին գործը. Փափագեան այդ պնդումին մէջ ամիրայասիրութիւն կարծած է տեսնել, եւ սըխալած է խորապէս: Սխալած է նաեւ՝ « վերարկուի » քումիք պատմութեան մէջ՝ Հայրիկը իբր « գործ աւրող » ցոյց տալով. Նարպէյ, — ինչպէս Չերազ ինծի պատմած է, — երեկոյթներուն գացած ստեղծ կարմիր, դեղին, կապոյտ շողշողուն վերարկուներ կը հագնէր՝ տաս-տասնըհինգ նշաններ կուրծքը կախած, վերջապէս՝ պարահանդէսի մը գացող երիտասարդ իշխանի մը պէս ծայրայեղօրէն զարդարուած. Հայրիկը, պարզասէր, կ'երթար իր սեւ վերարկուն միայն հագած. իրիկուն մըն ալ՝ ջիլերուն կը հպչի՝ տեսնելով այդ անտանելի տարբերութիւնն իր ընկերոջ եւ իր միջեւ. այդ սրանհղուցութիւնը հասկանալի կը գտնեմ. Հայրիկն է որ իրաւունք ունի. գերի ու ցաւասանջ ժողովրդի մը ներկայացուցիչ, պաշտօնեայ՝ « աղքատ » եւ բուկոտն Բրիտոսոսին եւ Հայաստանեայց պարզասէր եկեղեցւոյն, Պերլինի երեկոյթներու մասնակցող հայ կղերական-պատգամաւոր մը պէտք էր Խրիմեանի պարզութիւնը նախընտրէր Նարպէյի լատինական պճնամոլութենէն: Դարձեալ, Հայրիկն է որ իրաւունք ունի երբ իր Հայաստանցի գեղղուկի սուր բնազգովը՝ կ'ըմբռնէ՝ Վեհափօղովին վերջանալուն մօտ՝ որ թափուած բոլոր ջանքերը ապարդիւն եղան, թէ « Պերլինը տեսած ըլլալէն » ուրիշ օգուտ չունեցան (հեզմական բառ մը զոր Փափագեան տառապէս հաս-

կրցած է) եւ թէ « մարդ յոյսը միմիայն իր վրայ
դնելու է » : Այս տեսակ նկատողութիւններ շատ
կարելի է ընել դեռ : Բայց , ինչ որ կարեւոր ,
չահեկան է Փափազեանի յուշատետրին մէջ , իր
դատումները չեն , այլ կարգ մը իրողութիւնները
զոր արձանագրած է եւ որ առանց այդ յուշա-
տետրին թերեւս ընդ միշտ անծանօթ մնային :

Տպաւորութիւնը զոր մարդ կը կրէ այդ
յուշատետրը կարգալով , հեռու է զուարթ ու
կազդուրիչ ըլլալէ : Մեր ազգային նկարագրի
բացասական կողմերը մեծ մասամբ այնտեղ կը
ցոյանան՝ ինչպէս պարզ ու պայծառ հայելիի մը
մէջ : Միտքս հոս այդ յուշատետրին վերլուծումն
ընել չէ , թէպէտ շահեկան աշխատութիւն մը
պիտի ըլլար այդ , զոր թերեւս օր մը կատարեմ.
Աչքի կը ցատքէ ամէն բանէ աւելի՝ պատուի-
րակութեան աննորդաշնակ կազմը եւ հայ պատ-
գամաւորներու գործունէութեան ուստոստուն ,
յարափոփոխ ու անհեռատես հանգամանքը :
Նարպէյ կը հետեւի ուրոյն ծրագրի մը , այն է՝
համաձայնիլ Ռուսիոյ հետ , մեծ Հայաստանի
մէջ ռուսական տիրապետութեան հաստատման
նպատակ՝ Լորիս Մէլիքօֆը այնտեղ ընդհանուր
կառավարիչ նշանակել տալ ջանալով , իսկ Կի-
լիկիոյ մէջ՝ բարոյական ու զինուորական օգ-
նութեամբ Ռուսիոյ՝ աշխատիլ հայկական ինք-
նուրոյն կազմակերպութիւն մը ստեղծելու : Այս
ծրագիրը՝ ինքնին՝ լուրջ էր , թէպէտ շատ դժ-
ուար՝ արուած ըլլալով հզոր ընդդիմութիւնը զոր
Պիքոնսֆիլտեան Անգլիան պիտի հանէր անոր
դէմ . դժուար , սակայն ոչ անկարելի , որովհե-
տեւ՝ ազատական Անգլիան՝ Ռուսիոյ հետ ջեր-
մօրէն պիտի աջակցէր , եթէ Հայերը ուժեղ ճի-
գով մը հարցը այդպէս վարէին . ծրագիրը լուրջ
էր ուրեմն , բայց ինք՝ Նարպէյն էր որ լուրջ
չէր , որովհետեւ իր միտքն էր իր եղբայր Գուր-
տանը թաղուոր ընտրել տալ (ինքն ալ հարկա-
կաթողիկոս . . .) Կիլիկիոյ վերականգնած գա-
հուն . . . , եւ այդ ծիծաղաշարժ նպատակին
համար՝ մութի մէջ՝ հազար զիմում ըրած , ջան-
քեր թափած է , որոնք պատգամաւորութեան
ընդհանուր գործունէութեան կը հակասէին եւ
կրնային վնասել . յետոյ , այդ ծրագիրը այն ա-
տեն միայն իր բուն արժէքը կը ստանար՝ երբ
Պերլինի մէջ այդ ուղղութեամբ կատարուած
գիւտնագիտական գործունէութեան մը ընկերա-

նար երկրին մէջ ապստամբութիւն մը . արդ ,
ապստամբութեան ստուերն անգամ չկար : Խրիմ-
եան ունի ծրագիր մը բոլորովին տարբեր , այն
է Նուպար փաշային յանձնել Հայոց դատին
պաշտպանութիւնը , ստանալ Հայաստանի հա-
մար ինքնավար ընտրութիւն մը՝ Նուպար փաշան ըլ-
լալով ընդհանուր կուսակալ . այս ծրագիրն ալ
գործնական էր եւ ինք իր մէջ տրամաբանական,
եւ աւելի անմիջականապէս իրականալի . սա-
րակոյս չկայ որ — ինչպէս գրած եմ Պատաւ-
խանասուռօթիւնները յօդուածիս մէջ — Նու-
պար փաշան , իր ճարտիկ դիւանապետի առաջ-
նակարգ կարողութիւնովը , իր անձին վայելա՛
եւրոպական մեծ հեղինակութեամբը եւ դիւա-
նագիտական աշխարհին մէջ իր ունեցած ան-
հատական կարեւոր բարեկամութիւններովը՝
կրնար շատ աւելի արգիւնք ստանալ հայկական
դատին համար՝ քան Նարպէյը , Հայրիկն ու Չե-
րազը . Նուպար , եթէ պաշտօնական ներկայա-
ցուցիչը կարգուէր Հայոց դատին , թերեւս հա-
մոզէր թէ՛ Անգլիան եւ թէ՛ Ռուսիան որ Հայ
վալի մը զնէին հայկական նահանգներուն վրայ
եւ յաջողէր ինքն իսկ ըլլալ այդ վալին . ասի
« իրական » արգիւնք մը պիտի ըլլար : Հայրիկ
ուրեմն իրաւունք ունէր պնդելու որ Նուպարը
հրաւիրեն , — եւ իրեն չափ պնդած էր նաեւ
— ըստ Փափազեանի յուշատետրին , Մելքոն
Խանը . բայց Պոլսէն չէին ուզեր Նուպարը :
Միայն թէ՛ Հայրիկ ինքն իսկ , որուն բնազդը
ճիշդ կը տեսնէր , բայց որ դիւանապետ չէ բնաւ,
ունեցած է արարքներ որ խոհեմութեան ապա-
ցոյց չեն . Հայրիկ որ այժմ ըմբռնած է որ Հայ
ժողովուրդը Ռուսը պէտք է նախընտրէ թուր-
քէն , այն ատեն՝ թուրքը կը նախընտրէր Ռու-
սէն , եւ չի քաշուիր իր զգացումները անվայել
հրապարակելու .

« 15/27 Յունիս . — Չերազ պատմեց ինձ
որ երէկ իրիկուան երեկոյթին մէջ Ֆէրիտուն կը
հարցնէ Խրիմեանի . « Դո՛ւք էիք որ Փէթերս-
պուրկ գացեր էիք թէ նա (Նարպէյը ակնարկե-
լով որ հեռուն է եղեր) . » Խրիմեան կը պա-
տասխանէ այնպիսի ձեւով մը որ ըսել ուզեր
է թէ ինք անանկ ճեղեր չ'երթար , նա՛ կ'երթայ ,
եւ թէ ինք հակառուս է : »

Յայտնի է որ Նուպար ինքն իսկ , եթէ հրա-
ւիրուած ըլլար եւ աշխատէր իր ծրագիրը ընդու-

նել տալու, զայն յաջողցնելու համար՝ պէտք ունէր այնքան ուսական հաւանութեան որքան անգլիականին, եւ նուպար զայդ ըմբռնած էր, քանի որ — ներքնապէս Ռուսը շատ չսիրելով հանդերձ — իր « ծրագրին » մէջ, որ ճարպկութեան ու գործնականութեան գլուխ գործոց մըն է, չէ մտացած՝ զեղահասար մեղրոտել թէ՛ թուրք կառավարութեան, թէ՛ Անգլիային եւ թէ՛ Ռուսիային հանդէպ, որուն համար հետեւեալ փազաքչական եւ թելադրական Ֆրազը գրած է . « . . . Եթէ այս քաղաքային ազատութիւնները որոնք 1840էն ի վեր հանդիսաւորապէս խոստացուած են Կիւլինանէի Հաթթը Շէրիֆին մէջ, եւ յաջորդ Հաթթերով չեղտուած են, իրականապէս գործադրուած ըլլային, այդ աշխատասէր Հայ ցեղը, շատ տարիներէ ի վեր իր երկրին կերպարանքը փոխած կ'ըլլար. Երեւանի ուսուհայկական նահանգին ժողովուրդը երեսուն տարուան մեջ կրկնապատկուած է : »

Փառով Պ. Չերազին, կարելի չէ ըսել թէ ան ալ անձնական ուրոյն ծրագիր մը ունեցած ըլլայ. եռանդուն եւ անձնուէր հետեւողն ու գործադրիչն եղած է Ներսէս-Օտեան ծրագրին . Պ. Չերազ կը ներկայանայ՝ Փափագեանի յուշատետրին մէջ՝ շատ համակրելի գոյնով . հազիւ քսան տարեկան, խանդոտ, ազգասէր, ուշիմ եւ անձնուէր պատանի մը, պաշտուծով լեցուն զէպ ի Ներսէսն ու Օտեանը եւ զէպ ի ազգային դատը, ամէն նեղութիւն յանձն կ'առնէ կատարելու համար իրեն յանձնուած ծանր պաշտօնը, կը խմբագրէ թղթերը, կը կատարէ զմտումները, վերջապէս ժիր եւ ուշիմ քարտուղարի եւ թարգմանի դերը կը կատարէ սքանչելապէս . բայց, այս ամենը գնահատելով հանդերձ, Չերազ ուրիշ բան չէ հոգ բայց եթէ կրակոտ գերակատարը այն գերին զոր Պոլսոյ հեղինակները պրծած են :

Փափագեանի համար ալ կարելի չէ ըսել թէ որոշ ծրագիր մը ունի . Իր մտայնութիւնը զուտ վարժապետական է . ազերսպար տալ, զիմեղ, խնդրել, — կարելի է կը գթան Եւրոպացիք եւ իրենց շահերը ապահովելէ յետոյ՝ մաս մըն ալ կը հանեն Հայոց . . .

« — 28 Յունիս . — Քօնկրէին արդիւնքին վրայ բշկն ի վեր շատ յուզեալ ենք, ախուր եւ մտահոյ . գիտէինք թէ մեր ուզածը չպիտի ըլ-

լար, զի Եւրոպացուց մեծ շահերը մեզի տեղ չթողուցին, եւ երես չունեցան մեզի հաւար ալ բաժին հանել . . . բայց անհնար կ'ըլլայ միութարուիլ կարծելով թէ կարեւոր եւ պատեհ առիթ մը կորուսինք, եւ եթէ քիչ մը խիղճ ու գութ ունենային Եւրոպացիք, քիչ մը քիչ իրենցը հոգալով զմեզ ալ կրնային հոգալ : » -

Ոչինչ աւելի զաւելչտական է — սրտաշարժօրէն զաւելչտական — քան այն տողերը ուր յուշագիրը կ'ըսէ . « 27 Յունիս . — Ես ու Չերազ երկու երեք անգամներ մտախոհ եւ յուզուած՝ սկսանք պտրտիլ Քօնկրէին տանը առաջ, խնդրեցինք Աստուծմէ որ ողորմի բերաւոր անմեղ զոհերու արիւնին ու միլիոնաւոր Հայերու աղաղակին եւ ապա աչքերնիս արցունքով լի տուն զարձանք : »

Յստած ու զեպիմ մը չունի, իր մեակ ուղեգիծն է Պոլսէն եկած հրահանգներուն հլու հետեւողն ըլլայ . բայց այդ թելն ալ մերթ կը փախցնէ ձեռքէն, երբ հրահանգները քիչ մը կ'ուշանան եւ երբ Մելքոն Խանի պէս հզօր անձնաւորութիւն մը յանկարծ խորհուրդ մը կուտայ, Սկիզբները կը գրէ . « Մենք ամէն հնարաւորութիւն ի գործ դնելու ենք, այս ուս եւ անգլիական ազգերուն մէջ չէզոքանալու . ոչ միոյն ատելութիւնը եւ ոչ միւսին նախանձը գրգռելու ենք . ձեռքի տակէ աշխատելու ենք երկուքն ալ առանձինն իրենց շահուց մասին համոզել եւ մին միւսէն նախամեծար բռնելու երբեք միտում չունենայ : »

Ուրիշ տեղ մը՝ գրեթէ ուսաստէր կը դառնայ պահ մը .

« Չերազ ստուգեր է թէ ոուս դեսպանատան քարթերը (ունկնդրութիւն խնդրելու համար զրկուած) տեղը չեն պացած . ուրեմն, ըսի, վաղը անպատճառ անձամբ երթալ պէտք է, զի Պոլիս երբէք Ռուսիոյ դէմ փոքրիկ զժգոհութիւն մը չունի, ընդհակառակն զոհ եւ շնորհակալ է : »

Բայց երբ Մելքոն Խան խորհուրդ կուտայ որ « Պիքոնսֆիլտին նամակ մը պրուի որուն մէջ ոչ-սլաւ տարր մը ըլլալնիս, ցարդ Ռուսիոյ նըկըրտմանց ընդդիմանալնիս յիշատակուի եւ ի վերջոյ սպառնալիքի ձեւ բան մ'ընել », Փափագեան ամենայն հանգարտութեամբ կ'ընդգրկէ այդ գաղափարը (զոր վտանգաւոր ու սխալ կը

նկատում՝ հակառակ Մելքուն կոմսին համար ունեցած բոլոր յարգանքին» եւ կ'աւելցնէ՝ « Հաւանեցայ , եւ սկսանք պատրաստել » :

Գալով Պոլսոյ խումբին , շատ դժուար է՝ գէթ ինձի համար՝ որոշ գիտնալ թէ ի՛նչ էր աւսոր հաւաքական ուղեգրի՞նք , եւ ի՛նչ՝ զայն կազմող անձերէն իւրաքանչիւրին անձնական մտածման երանդը : Ծրագրիւր զոր կազմած եւ պատգամաւորութեան միջոցաւ ներկայացուցած են Եւրոպային որոշպէս՝ « ինքնավար բեփիմի » մը ուրուպիծն է (այս թիւին մէջ կը հրատարակեմ թարգմանութիւնն այդ ծրագրին՝ Նուպարի ծրագրին հետ . բազմաթիւնը շահեկան է) :

Խմբագրութեան մէջ՝ « պոլսական » ծրագրիւր չունի Նուպարի ծրագրին ճարտարութիւնը , Նուպարի հանդէպ այդ խումբին բռնած ժխտական դիրքը կը բացատրեմ այն յոյսով զոր Ներսէս , Օտեան եւ ընկերներն ունէին Նուպարին ծրագրէն շատ աւելին ստանալու , եւ մասամբ՝ Օտեան-Նուպար մրցակցական հոգեբանութեամբ մը . Փափազեան իր յուշատետրին մէջ կը յիշէ տեղ մը թէ Պոլիս խնդրիւր եղած է՝ ո՛վ ըլլայ Հայաստանի վալի , Օտեան , Ստեփան փաշա՞ թէ Նուպար :

« 22 Յունիս . — . . . Խրիմեան հարցուց ինձ թէ ի Պոլիս ո՛վ վալի ընելու խորհուրդ կար , — Այդպիսի խորհուրդ մը չկար եւ չէր ալ կրնար ըլլալ , ըսի , զի անձի համար չէր գործուիր . անգամ մը միայն Նուրեան ըսաւ թէ Օսեսուր վալի ընենք , ուրիշ ոչ ոք բան ըսած է : — Օտեան երկրորդին եւ երրորդին կրնայ ըլլալ , ըսաւ (Խրիմեան) . նախ կտրուկ եւ վարչական մէկը պէտք է . Օտեան բանաստեղծ , դանդաղ եւ պթասիրա է . առաջին անգամին չյարմարիր Ստեփան Ասլանեանը աւելի կտրուկ եւ վարչական անձ է . Քիւրտերուն եւ Թրքերուն գէմ գնելու կարող մարդ պէտք է . — Ես չեմ գիտեր այդ մասը եւ խորհուած ալ չէ , բայց այս գործին գլուխ կեցող անձինք ամենքն . ալ յարմարութիւն ունին , Սերվիչէն , Օտեան , Ստեփան Ասլանեան , Եւն . , պատասխանեցի . — Այո , Սերվիչէն ալ իշխանական մարդ է , ըսաւ . — Նուպարի համար ալ խօսք կար : — Այդ գերազանց բան կ'ըլլայ , ըսաւ՝ իմաստուն եւ գործունեայ մարդ , մէկ հատիկ է Հայաստանի

համար . Եգիպտոսի բարեկարգիչը եղած է . եթէ այդ ըլլայ , շատ յաւ . կ'ըլլայ Հայաստանի , ըսաւ , եւ խօսքը գոցեցի : »

Իր ծրագրիւր յաջողցնելու համար , Պոլսոյ խումբը իբր գործունէութեան միջոց որոշած էր , հետոս ո եւ է ապտամբական ճիգէ — այդ միջոցին Չէյթուէն իմացուցած են Պոլիս թէ պատրաստ են ոտքի ելլել , բայց Պոլիս հրամայած է որ հանդարտ կենան — միմիայն դիմում վեց պետութեանց , դիմում աղերսական՝ յանուն մարդկութեան . դիմում մը , նոյն իսկ առանց ապտամբութեան , կրնայ՝ մերթ՝ երբ շատ հեղինակաւոր անձի մը ձեռքով է կատարուած եւ ճարտարէն՝ սալ չափաւոր բայց իրական արդիւնք մը . բայց Պոլսոյ խումբը չէ հասկըցած որ անձնամուլ եւ էնթրիկան Նարպէյը , եւրոպական լիզու չգիտցող եւ դիւանագիտական կարողութենէ զուրկ Հայրիկը եւ խանգավառ պատանի Չերազը չէին կայող այդ դիմումը կատարել լուսագոյն պայմաններուն մէջ : Չատ զատ նկատելով Պոլսոյ խումբը կազմող անձերը , շատ դժուար է դարձեալ որոշ գաղափար մը կազմել անոնց անձնական ձգտումներուն ու քաղաքական վարդապետութեանց մասին . Ներսէս , գեղեցիկ հոյի եւ բարձր միտք , բայց վարանոտ նախ՝ գլխաւորապէս Ռուսիոյ վրայ կրթնելու պէտքն զգացած եւ Սան-Սթէֆանո դիմելով այդ պէտքին գոհացում տուած եւ լուրջ արդիւնք մը ձեռք ձգած է . յետոյ՝ փխտած է թաքթիքը , եւ կարծած է թէ զլխաւորապէս Անգլիոյ վրայ կրթնելու համար Օտեան , փափուկ զգայութիւն մը զրագէտի , բայց թոյլ ու յեղյեղուկ նկարագիր , հմուտ ու կիրթ մարդ , բայց ո՛չ մեծ դիւանագէտ , հակառուս եւ անգլիամուլ՝ իր մտքին ու հոգւոյն բոլոր ձգտումներուն ճնշմամբ , կարծած է Հայոց ինքնավարութիւնը ձեռք ձգել՝ հակառակ Ռուսիոյ՝ Անգլիոյ հովանաւորութեամբ , եւ առանց Թուրքին հետ բոլորովին խզուելու :

Նուրեան , թիթեւ ու անձնամուլ , թրքասէր , փառասէր , շահասէր , ոչ մէկ օգտակար ազդեցութիւն կրնար ունենալ խումբին ուղեգրի՞նք կազմելու մէջ :

Ստեփան փաշա (որուն երկու նամակները կը հրատարակեմ այս թիւին մէջ) թրքասէր ,

ուսաստեաց, փայլուն բայց տարտամ միտք՝
անհեռատես, ճարտասան ու մնամէջ ։

Աերիքէն՝ Օտեանի եւ Ստեփան փաշայի
համոխոն մը ըլլալու էջ ։

Ատոնց մէջ ոչ մէկն ունէր նուպարին յըս-
տակ, հեռատես, սուր միտքը, գործնական
ողին, մաթեմատիքական հաշուազիտութիւնը,
ծրագիր մը ի գործ դնելու համար ունեցած
ճարտարութեան, անձնական հրապոյրի ու արդէն
խակ ։ երրօրական մեծահոգակ տնուն՝ վայելող
ազգեցիկ անձնաւորութեան » առաւելութիւն-
ները ։

Ա. 209ԱՆԵԱՆ

(Շարունակելի)



Ք Ր Ո Ն Ի Կ

Քուչակի մասին յօդուածս (որ կ'երեւայ
այս թիւին սկիզբը) գրելէ ետքն է որ գացի Վե-
նետիկ՝ ֆրանսերէն նոր հատորի մը պատրաս-
թեան համար հին ձեռագիրներու մէջ նիւթեր
ի նտուելու ։ Իմ այդ որոշ ծրագրիս պատկանող
կտորներ հաւաքելով հանդերձ, քննելի նաեւ
ինչ որ կը վերաբերի աշուղական բանաստեղ-
ծութեան ընդհանրապէս եւ Քուչակին մասնա-
ւորապէս ։ Քուչակի մասին այդ նոր քննութիւն-
ներս ինծի թելադրեցին կարգ մը նոր խորհրդա-
ծութիւններ, զոր ուրիշ առթիւ ի դիր կ'առ-
նեմ ։ Հոս կ'ուզեմ միայն մէկ երկու կէտ նշա-
նակել՝ այս թիւին մէջ հրատարակած յօդու-
ածիս մէկ քանի մասերուն հետ անմիջական կապ
ունեցող ։

Թիւ 171 ձեռագրին մէջ գտայ Վանցի Քու-
չակին Առ Ս. Աստուածածին տաղը, հետեւեալ
վերնագրով. « Սուրբ Աստուածածնին գովու-
թիւն ի Քուչակէ ի Հառկուանցոյ » ։ Այդ վեր-
նագիրը շատ կարեւոր է. Հառկուանցի Քու-
չակր եւ Վանցի Քուչակը նոյն անձն են ուրեմն,
որ հեղինակն է Առ Ս. Աստուածածին տաղին,
եւ կը հանգչի Խարակոնիս (Հառկուան) ։ Այլշան
« Հառկուանցի » մականունը՝ զոր կը յիշէ Յու-
շիկին մէջ՝ քողած է ուրեմն այս ձեռագրէն ։
Եւ այդ Հառկուանցի Քուչակը ոչ մէկ կապ
չունի ուրեմն մեզի ծանօթ սիրերգներու հեղի-
նակին հետ՝ որ ոչ Հառկուանցի է, ոչ Վանցի,
այլ Ակնցի ։

Ուրիշ նկատողութիւն մը. Քուչակեան
տաղաչափութեան վրայ խօսելով, բաժն էի թէ
այդ տողերը 5—5—5 ալ կրնան բաժնուիլ ։
սեմնելէ յետոյ Քուչակի անտիպ կտորները ու-
րոնք բազմաթիւ են եւ որոնցմէ մաս մը պիտի
հրատարակեմ Անաեիքի յառաջիկայ թիւին մէջ),
այդ կարծիքս ստիպուած եմ մէկդի դնել ։ ճիշդ
է որ թէ՛ տպուած եւ թէ՛ անտիպ տաղերու ա-
մենաստուար մեծամասնութիւնը 5—5—5 չա-
փին կը համաձայնի, բայց կը մնայ բաւական
թիւ մը ուղերու ո՛ր այդ չափով չեն կրնար
կարգացուիլ, եւ սողեր՝ անթերի, ամենամա-
քուր, ամենագեղեցիկ, այնպէս որ ընդօրինակչի
ազաւաղում կարելի չէ ննթաղել ։ Կը խորհիմ
ուրեմն որ 5—5—5ով այդ տաղաչափութիւնը
բացատրելու վարկածէն պէտք է հրաժարիլ, ու
յարած մնալ 7—8 չափին ։

Ռազմիկի մայիս 15, 23 եւ 26 թիւերուն
մէջ հրատարակուած Ռուսճուղիեան Գէորգ վար-
դապետին գրութիւնը եկաւ լուսաւորել Ստե-
փան փաշայի նամակներէն մէկուն վերապա-
հումը Ներսէս Պատրիարքի մասին ։ Այս գրու-
թիւնն ունի անշուշտ ճշմարտութեան բաժին
մը, բայց լեցուն է ակնյայտնի չափազանցութիւն-
ներով եւ անճշտութիւններով՝ զոր Պ. Տ. Տօղ-
բամաճեան շատ փաստացի կերպով ի վեր հա-
նեց Լրուարներին մէջ ։ Անհերքելի կը թուի որ
Սան-Սթեֆանօ Ներսէս Պատրիարքի պատմա-
կան դիմումէն առաջ, Ֆիլիպէի մէջ Ռուսճուղ-
իեան վարդապետը եւ յետոյ՝ Ստեփան Ասլան-
եան ու Նուրեան գիմեր են սուսական զօրու-
թեան, — եւ այդ ի կնաթիէֆի զրգմամբն իսկ
Այդ չի նշանակելի թէ ամէն բան Ֆիլիպէի մէջ
սկսած ու վերջացած է ։ Ներսէս պատրիարք
գիացիք է ի կատար հանել ինչ որ Ֆիլիպէի մէջ
ուրուսագծուած էր ։ Սան-Սթեֆանօի դաշնագրին
16րդ յօդուածին ստացման մէջ եթէ միակ զե-
րակատարը չէ Ներսէս Պատրիարք, ամենէն
կարեւոր դերակատարն է նորէն ։ առանց այն
յանդգնութեան զոր ունեցու ինք Հայոց պատ-
րիարք՝ սնձամբ Սան-Սթեֆանօ կրթալու եւ
ուսական միջամտութիւնը խնդրելու ի նպաստ
Թրքահայաստանի, 16րդ յօդուածը չէր կրնար
մտնել Սան-Սթեֆանօի դաշնագրին մէջ ։ Հոտ՝
իր արժանիքը մեծ է. պէտք չէ ուրանալ զայն ։

Պ. Թաւշանձեանի սպանման ցաւալի դէպ-
քին նուիրած իր յօդուածներէն մէկուն մէջ Պ.
Արփիարեան կը յիշէ ինչ որ գրած էի Ժամհոր-
եանի սպանութեան առթիւ, եւ կը հրաւիրէ
զիս որ խստիւ ու երկարօրէն, մանրամասնօրէն,
դատապարտեմ այս սպանութիւնը ։ Պ. Արփիար-
եանի հրաւերին պէտք չունիմ անգամ մը եւս

դատապարտելու համար արարք մը զոր միշտ հարուածած եմ՝ Պ. Թաւաշանճեան նոր զո՞ն մըն է սպանուալիքով եւ սպանութեամբ հայ յեղափոխական գործին համար զրամ գանձելու սխտեմին, զոր ի գործ դրած են շատ անգամներ Դրօշակեան եւ հին Հնչակեան կուսակցութիւնները, եւ զոր՝ առաջին անգամ յղացաւ ու գործադրեց Պոլսոյ Հնչակեան քովթէն՝ երբ Պ. Արփիարեան այդ քովթէն մեծ « մարտապոլթ » ն էր : Տիպրան Գարակօզեան, զոր Արփիարեան եւ իր ընկերները սպաննել տալին, առաջին մատաղն էր՝ նուիրուած հայ յեղափոխութեան սեղանին որուն նորագոյն ողջակէզն եղաւ Պ. Թաւաշանճեան : Այդ սխտեմը անհանդուրժելի, անընդունելի, անտանելի է : միշտ ըսած եմ եւ կը կրկնեմ, եւ այս հարցին մէջ կարծիքս այնքան որոշ է եւ անփոփոխ, որ երկայն Ֆրագներու հարկ չկայ ընտել :

Այդ զէպքը շատ ցաւալի է : Բայց միակ ցաւալի բանը սպանութիւնը չէ այդ զէպքին մէջ . շատ բարդ է հարցը . եւ որ կողմէն քրննենք զայն, տիրելու պատճառներ պիտի գտնենք հոն :

Այդ սպանուած խեղճ մարդուն զիակին շուրջ երեսան եկած բարոյական սոցիոլոթիոնները նոյնքան ցաւալի են որքան նոյն ինքն սպանութիւնը : Հայրենիք, օրկան կուսակցութեան մը որ մինչեւ հիմայ քսան հարուստ սպանուած է ճիշդ նոյն սխտեմով, բողոքի աղաղակներ կը բարձրացնէ, « մեծ ոճիր » կ'անուանէ ինչ որ «չարք»ի մը — քստմնելի շարք — մէկ նոր թիւն է պարզապէս : Պ. Պարթեւեան, որ մարքէն շանցուց բողոքել Արիկ Ունճեանի սպանութեան զէմ, որ այդ բարի, աղապէր, բարձագուտ մարդուն խողխողելը շատ ընկան ու գովելի գտաւ . եւ անոր զիակն իսկ պղծեց զգուելի ֆրւազներով, այսօր ոճրագործ կ'անուանէ անոնք որոնց — եթէ ոճիր է, առ — ոճրակից եղաւ երկկ . . . Եւ ի՞նչ ըսել « Երիտասարդ Հայաստանին », որ կը համարձակի յայտարարել թէ երբեք Հնչակեան կուսակցութիւնը հարուստ չէ սպանուած, ինչ որ պարզ ստուծիւն է, ու « եղբայրասպանութիւն » բառը կը յանդգնի արատասանել, մոռնալով որ Հայոց մէջ եղբայրասպանութեան ամենէն իրականը եւ ամենէն գազանակարը այդ « Երիտասարդ Հայաստան » ի պարունկը եւ իրենց պետ Սալուսիս գործեցին՝ վատարար սպաննել տալով Հայ ազգին ամենէն սքանչելի գաւակներէն երկուքը, Միսոն եւ Զիթճեանը . . .

Այդ բոլոր պարունները կ'երեւայ թէ մարդասպանութիւնը շատ ընդունելի եւ գովելի կը գտնեն՝ երբ իրենք են զայն կատարողը, ու շատ դատապարտելի՝ երբ դրացին է զայն ի գործ դնողը :

Եւ ի՞նչ լրբութիւն՝ վերագրել այս նոր ըսպանութիւնը « գրամաշորթ խմբակ » ի մը . . . Ի՞նչ անշնորհք եւ հակազգային զրպարտութիւն : Դրամաշորթ խմբակ չկայ Հայոց մէջ : Այդ հեքեաթը Պ. Արփիարեան ստեղծեց՝ ինքզինքը

պաշտպանելու համար կարգ մը Հնչակեաններու զէմ (զոր առաջ ինքն իսկ անօրինակ հերոսներ կը հռչակէր) երբ անոնք, զինքը նկատելով անկարող վարիչ, եւ մասնիչ, արտաքսեցին կուսակցութենէն :

Արփիարեան, որ ատենով կը դատափետէր Դրօշակեաններու « սեւադրէքեան » մեթոտը, ինքն իսկ առաջնակարգ սեւադրէքեան մը յայտնեց ինքզինքը : Որովհետեւ Դրօշակեանները զինքը իբր գաւաճան կ'ամբաստանէին եւ այդ հիման վրայ տեոօրի ալ ենթարկեցին զինքը, Արփիարեան Դրօշակեան վարիչները « Թուս կառավարութենէն վարձուած գաւաճաններ » եւ Հայաստանը Հայերէ պարպելու միակ նպատակն ունեցող չարագործներ » հռչակեց : Միեւնոյն բանն է որ ըրաւ յետոյ Վերակազմեալ Հնչակեան վարիչներուն զէմ անոնց իրենց զէմ ուղղած ամբաստանութիւնները ջրելու համար, զանոնք հռչակեց « ատլանտորճի », « գրամաշորթ » : Փա՞ստ : Ո՛չ մէկ հատ Զմոռնանք որ Արփիարեան ինքն իսկ, ուրիշները գրամաշորթ անուանելէ առաջ, ինքը իբր գրամաշորթ ամբաստանուած է . ամբաստանողներն էին « Հրանդ », Մինաս Չերագ . այս վերջինը փաստել մէջ բերած էր ընդարձակ յօդուածի մը մէջ, որուն Արփիարեան ցարդ չէ պատասխանած : Առանց պատասխանելու զինքը գրամաշորթ հռչակողներուն, ինքը կը շարունակէր ուրիշները գրամաշորթ յայտարարել, միշտ առանց փաստի :

« Յայտնութիւններ ունիմ » կ'աղաղակէր Արփիարեան տարիներ առաջ, ո՞ր ե՞ն այդ յայտնութիւնները : Ի՞նչպէս կարելի է ամբաստանել առանց ապացուցանելու : Դրամաշորթը այն անձն է որ անհասի մը կամ հանրութեան պատկանող գումար մը խաբեքայօրէն կ'երայացնէ իր անձնական պէտքերուն ու հաճոյքին գործածելու սրտչ կանխամտածութեամբ . ո՞րն է այն Վեր. Հնչակեանը որ այդպիսի ցած նկարագիր մը ցոյց տուած ըլլայ : Արդեօք Վեր. Հնչակեաններուն կը մեղադրուի որ ցարդ իրենց հաւաքած գումարը հայրենիք զէնք զրկելու . կամ արչաւախուժներ հոն մտցնելու կամ նմանօրինակ արարքներու չե՞ն գործածած . ո՞ր յեղափոխական կուսակցութիւնն է որ իր հաւաքած գումարներուն ամբողջութիւնը հայրենիքի մէջ եւ այդ ձեւով գործածած ըլլայ : Արփիարեանի հրամանով Գարակէօզեանի սպանումը 7-8000 սակի լեցուց Հնչակեաններու գանձանակին մէջ . այդ գումարէն մէկ սանթիմ մը Հայաստան գնաց . ո՛չ . ուրեմն Արփիարեան այդ գումարը չորթելու համար հաւաքել տուած էր չ Վեր. Հնչ. վարիչներուն հաւաքած գումարները շատ փոքր էին բաղգատամբ հսկայ գործին որ կայ կատարուելու . եթէ այդպիսի գումարներու վրայ հիմնուելով երկրին մէջ զէնք մտցնել, դուրսեր, արչաւանքներ ընել փորձէին, աղէաք միայն յառաջ պիտի բերէին եւ ապագայ կարելիութիւնները արմատապէս ջնջելու միայն նպատած պիտի ըլլային : Սպասած են, երազած են, յուսացած են մեծ ուժ մը կազմել նախ, եւ յի-

տոյ լրջօրէն գործի ձեռնարկել : Նոյն ատեն , կուսակցութիւնը — ինչպէս ամէն կուսակցութիւն — ինքզինքը պահպանելու համար ստիպուած էր անշուշտ ծախքեր ընել . հաւաքուած գումարները կ'երթային ուրիմն կազմակերպութեան պահպանումին , եւ ապագայ գործունէութեան ծրագրի հասունացման : Թէ այդ հաւաքուած գումարները Վեր. Հնչ. վարիչներու կողմէ գործածուած են միշտ խելացի ու նպատակաշարժար կերպով , թէ անոնցմէ մաս մը ի զօր վատնուած չէ՞ արդեօք , թէ կարելի չէ՞ր այդքան դրամով ընել նոյն իսկ իբր նախապատրաստական գործունէութիւն՝ շատ աւելի բան քան ինչ որ ըրած են , ասոնք հարցեր են որ կրնան դրուիլ : Վեր. Հնչակեան կուսակցութեան չը պատկանելով , անտեղեկ ըլլալով այդ կուսակցութեան ներքին գործունէութեան , եւ կարող չեմ լիովին պատասխանել այս հարցերուն . կ'ընդունիմ միայն՝ դատելով իեծի ծանօթ իրողութիւններէն՝ թէ Վեր. Հնչ. կուսակցութիւնը չէ ըրած ամէն ինչ որ կրնար եւ պարտէր ընել իր ունեցած միջոցներով (օրինակի համար՝ Եւրոպայի ու Ամերիկայի հայկական փրօփակատի գործին մէջ շատ աւելի դեր կարող էր կատարել քան ինչ որ կատարեց , թէպէտ եւ անհունապէս աւելի բան ըրած է այդ ուղղութեամբ քան Ար. ի իրարեանի օրով) . կ'ընդունիմ նաեւ վարչական սխալներու , թույլութիւններու , անկարգութիւններու գոյութիւնը , եւ աւելորդ մտրուումներ . ենթացիկով որ « Աղլ » ին ի յայտ բերած մտորամասնութիւններուն մէկ քառորդը ճիշդ ըլլայ , անհար է չընդունիլ ծանր թիրուծիւնները զոր ունեցած է Վեր. Հնչ. վարչութիւնը՝ այս վերջին տարիներուն մէջ , կուս եւ յատակ ղեկավարութեան մը պակասը , կազմակերպական անկարգութիւններ , հիւանդ ընկեր մը մահուանէ փրկելու համար գրամական ծայրայեղ շտաղում , եւն : Կ'ըմբռնեմ որ ասոնք քննադատուին , բայց ասոնցմէ չի հետեւիր որ այդ կուսակցութիւնը գրամաշորթական ընկերութիւն մը եղած ըլլայ կամ թէ նոյն իսկ այդ կուսակցութեան մէջ գտնուի խմբակ մը յեղափոխական գրամով ապրիլն իրեն միակ նպատակ ունեցող : Վեր. Հնչ. կուսակցութեան մասին ցարդ բոյոր գրածներու մէջ՝ մէկ տող մը չունիմ ուր բաց ըլլամ թէ այդ կուսակցութիւնը անթերի կամ մեծադոր է եւ իր վարչութիւնը անստպիւտ . ան որ ատիկա կ'ըսէր՝ եւ ի՞նչ անտանելի անվերապահ մեծաշօնիկ ինքնապարծութեամբ — ճիշդ այդ Պարթեւեանն է , որ այսօր սեփ-սեւ գոյներով կը ներկայացնէ այդ կուսակցութեան տարիներէ ի վեր ունեցած ներքին կացութիւնը , մինչպէս տակաւին մինչեւ 8-9 ամիս առաջ՝ Չայն Հայրենեացին մէջ այդ կուսակցութիւնը կը նկատէր իբր Հայութեան ամենէն վիթխաւի , ուժեղ եւ կատարել կազմակերպութիւնը : Վեր. Հնչ. կուսակցութեան համակիր եմ եղած , որովհետեւ ես ազգայնական եմ եւ այդ կուսակցութիւնը զուտ ազգայնական ձգտումներու վրայ հիմնուած է եւ կ'ուզէ

իրագործել այն ծրագիրը զոր ես ինքս գործնականագոյնը համարած եմ Հայոց քաղաքական ապագային ապահովման համար : Ահա ինչ որ իմ դիրքս կը բացատրէ , եւ ոչինչ աւելի դիւրեմբունելի է եւ բնական : Ըսած եմ նաեւ թէ այդ կուսակցութիւնը լաւագոյն ճամբու մէջ մտած , աւելի ուժեղ ու գործոն դարձած է Ար. փիարեանի արտաքուստն ի վեր . եւ ատիկա ակնյայտի ճշմարտութիւն մըն է : Ըսած եմ թէ այդ կուսակցութեան մէջ կան անկեղծօրէն ազգասէր ե յեղափոխական կորով եւ անձնւիրութիւն ունեցող գործիչներ . իրողութիւն մըն է աս զոր չեն կրնար հերքել ո՛չ արտաքին յարձակումները , ոչ կուսակցութեան ներքին գծաղղ պառակտումները :

Եթէ ան ունի թիրուծիւններ — եւ մեր ո՞ր կուսակցութիւնն է որ տեսլական կատարելութեամբ կը փայլի — ջանանք որ ուղղուն այդ թիրուծիւնները . բայց անուանարկել ամբողջ կուսակցութիւնը , մրտել անոր ամենէն կորովի եւ անձուէր գործիչները , հակազգային արարք մըն է :

Պարթեւեան , որ այսօր կը կրկնէ Ար. փիարեանի ստեղծած « գրամաշորթ խմբակ » ի հեքեաթը , պէտք է ըմբռնէ որ՝ եթէ ատ իրաւ ըլլայ՝ ամենէն քատապարտելի անձը ինք պէտք է համարուի , քանի որ այդ պարագային իր գրիչը տարիներէ ի վեր գիտակցարար աւազակարմար մը ի սպաս զբաւ պէտք է նկատուի : Արգուեանի շնորհիւ Վեր. Հնչ. կուսակցութեան օրկանին իբր խմբակի հրաւիրուած օրէն սկսեալ՝ տարիներով Պարթեւեան ըսած ու զբաւ է թէ Արգուեան Հայոց ամենամեծ յեղափոխականն է , « արծիւ » մը պարզապէս : Հիմա , բայց նամակի մը մէջ զոր կ'ուղղէ Արգուեանին , կը յայտարարէ թէ Արգուեան իր ամբողջ գոյութեանը մէջ հարարակ չարագործ մը եղած է միայն , ոչ մէկ օգտակար գործ չէ տեսած , ոչ մէկ գրական յակութիւն չէ ունեցած , եւ թէ ինքը՝ Պարթեւեան՝ հմայուած միմիայն սնոր « գրեթեւութէն » իր գրչովն է որ կատուցեր է անոր ամբողջ համբաւն ու դիրքը : Պարթեւեան կը մոռնայ որ իր գրիչը ղեռ գոյութիւն իսկ չունէր երբ Արգուեան եւ իրեն հետ գրամաշորթ նկատուած քանի մը գործիչները՝ Հնչակեան գործունէութեան ամենէն տաք օրերուն՝ 94 , 95 , 96ին՝ Պոլսոյ մէջ անձնագոհութեան , յանգրգնութեան , յեղափոխական ամենամեծ եւ ամենամաքուր կորովի անմոռանալի ապացոյցներ տուած էին : Ու Պարթեւեան չ'անդրադառնար մանաւանդ որ իր այդ բայց նամակով ամենէն առաջ եւ անգամ մը եւս ինքզինքն է որ կը դատապարտէ . միայն « վարձկան » մը կարող է հերոսի սուտ համբաւ մը յօրինել մարդու մը՝ որմէ ոչինչ երբեք տեսած է լաւ . բայց ի « գրեթեւութէն » էն : Իայց ես վարձկան ալ չեմ բսեր Պարթեւեանին , ինչպէս ըսին՝ ատենով իր « մտաւորական եղբայրները » . Չգագար մըն է , բարոյական հաւասարակշռութիւնէ զուրկ , այսօրուան աստուածը վաղը հրէջ տեսնելու դա-

տապարտուած: Չղագար մը որ կարող է՝ ողբալի անգիտակցութեամբ մը՝ ամօնէն ցած արարքները կատարել:

Կարելի՞ է աւելի հիւանդապին ընթացք երեւակայել քան իբր Արզուեանի կողմէ գործուած դրամաշորթութիւն համարիլ խոշոր գումարի մը անոր բուժման համար իր ընկերներուն իսկ կողմէ անոր յատկացուած ըլլալը: Եթէ իրօք երեք տարուան մէջ 10,000 տուար ծախսուած է Արզուեանի դարմանման համար, անչուշտ ատիկա շոյլութիւն է. ոչ մէկ կուսակցութիւն իրաւունք չունի շոյլաբար գործածել իր հաւաքած գումարները: Եթէ Արզուեան գիտէր որ իրեն համար տրամադրուած այդ գումարները յեղափոխական անուկէն կ'ելլէին, պէտք չէր թոյլ տար այդպիսի մտնում մը: Բայց չէ՞ որ բուն յանցաւորները անոնք են որ իրենց ազատ կամքով այդ խոշոր զոհողութիւնն ընել որոշեցին: Արզուեան մահամերձ էր՝ ինչպէս Պարթեւեան ինք ալ կը գրէ՝ երբ Ամերիկա հասաւ երեք տարի առաջ. փարիզեան ամենանշանաւոր բժիշկներ «քանի մը ամիսէն կը մեռնի» վճռած էին. այդ վիճակին մէջ գտնուող քայքայուած մարդ մը ամբողջ կուսակցութիւն մը սարսափեցնելով գումարներ կորցած չի կրնար ըլլալ. եթէ վեր, Հնչ. կուսակցութիւնը — Պարթեւեանն ալ մէկտեղ — այդքան դրամ յատկացուցած են Արզուեանը վերակենդանացնելու համար, այդ իսկ արդէն ցոյց կուտայ թէ անոր համար ունէին բուն սէր եւ սքանչացում ու անոր կեանքին պահպանումը անհրաժեշտ կը նկատէին յեղափոխական դործին:

Ի՞նչ կըրարկացուցութիւնն այս բոլորին մէջ՝ պարզ է ուրեմն, վեր, Հնչակեան կուսակցութիւնը ունի թերութիւններ, որ այս պահուս հասունցած են զայն քառասոյն կայսրութեան մը. այդ թերութիւնները պէտք է քննադատուին, բայց ազնուութեամբ, լրջութեամբ, անաչառ ու անկողմնակալ ոգով: Սակայն, դրամաշորթ խմբակ անուանել խումբ մը գործիչներ որ տարիներէ ի վեր կը գալարուին ազգային բարձր իտեալի մը իրականացման նպատակու համար եւ որոնք իրենց անձնութեան եւ ազգասիրութեան անհերքելի ապացոյցներ տուած են, ես այդ վատութիւնը չեմ կարող ունենալ:

Անոնք որ, ինքզինքնին յեղափոխական կուչելով հանդերձ, այս դրամաշորթ խմբակի հեթաթը կը յեղեղէն հայ հասարակութեան մէջ, անձերու վնասելէ աւելի յեղափոխական գործին է որ կը վնասեն: Իսկ այդ հեթաթը օտար մտաւորին մէջ տարածողները ամբողջ Հայ ազգին վնասելին, Հայոց յեղափոխական կուսակցութիւնները Բամորայի նման աւազակախումբերու համանման կազմակերպութիւններ ըլլալու անարդար համոզումը թելադրելով օտարներուն:

Ասկից զատ, անոնք որ դրամաշորթ խմբակի հեթաթին վրայ հիմնուելով կը դատապարտեն Նիւ-Եորքի սպանութիւնը, ուրիշ վնաս մըն ալ կը հասցընեն. այն է որ կը չեղեցնեն հանրային ուշադրութիւնը բուն խնդրէն, որ

է՛ Յեղափոխութեան դրամ տուած չըլլալուն համար հարուստ մը պէ՞տք է սպաննել թէ ոչ, Արփիարեան ատենով «այո՛» ըսած է այդ հարցման, եւ գործնապէս: Պ. Պարթեւեան զեռ մինչեւ երէկ «այո՛» կ'ըսէր: Ես ըսած եմ եւ կ'ըսեմ միշտ «Ո՛չ»: Ու եթէ «յեղափոխական տրամաբանութիւնը» ասոր զէմ ինձ ըռէ. «բայց յեղափոխութիւնը դրամով կ'ըլլայ, եւ մեր հարուստները՝ եթէ հազար տարի ալ աղաչենք, պաղատինք, բացատրենք, սանթիմ մը չեն տար», կը պատասխանեմ. «եթէ հայ ժողովուրդը կ'ուզէ սարուկ մնալ, արժանի է ըստրուկ մնալու. սպանութիւնները այդ ստորկախոր չեն բուժեր»:

Նիւ Եորքի սպանութիւնը, բաց ի ընդհանուր սկզբունքով դատապարտելի ըլլալէն՝ եթէ ունի մասնաւորապէս քննադատելի կողմ մը, զոր նախկին համանման սպանութիւնները չունէին, այն է որ յեղափոխական թաքթիքի սխալ մըն է միանգամայն, անհեռատես եւ խելագարական արարք մը, որուն արդիւնքները միմիայն վնասակար կրնային ըլլալ, եւ որուն արդիւնքներուն վնասարեւր ըլլալիքը առաջուց զուշակել ամենէն դիւրին բանն էր: Նմանօրինակ սպանութիւններ ցարդ կատարուած էին նովկասի եւ Տաճկաստանի մէջ. եւ այդ ժանտ մեթոտը ձերբակալութեանց, չփոթութեանց ու շատ մը ողբալի դէպքերու ծնունդ տուած էր, բայց եւ յաճախ յեղափոխական գանձանակին օգտարեւր կրցած էր ըլլալ — ինչ որ արգարացում մը չեմ նկատեր, բայց կը նշանակեմ միայն իբր իրողութիւն: Եւրոպական կամ Ամերիկեան քաղքի մը մէջ կատարուած սպանութիւն մը յայտնապէս դատապարտուած էր լոկ ժխտական հետեւանքներ ունենալու. հարուստները պիտի ապաստանէին հզոր եւ աշխուրջ ոտակախումբեան, ոչ մէկ սանթիմ չպիտի տային յեղափոխութեան, եւ սպանութիւնը անազին սքանտալ յառաջ բերելէն ուրիշ արդիւնք պիտի չունենար:

Նիւ Եորքի սպանութիւնը քննադատելի է նաեւ, քանի որ տեղի կ'ունենար այնպիսի պահու մը երբ վ. Հ. կուսակցութիւնը կը գտնուի մոլեգին պառակտումի մը մէջ. այդ պառակտումին ստեղծած պայմանները անխուսափելիօրէն պիտի ծանրացնէին այնպիսի արարքի մը արդէն իսկ այլանդակ հետեւանքները. բոլոր վատութիւնները որ տեղի ունեցան, պէտք էր, եւ կարելի էր, գուշակել:

Այդ արարքը, ուրեմն, ազգասիրական մեծ ծրագրի մը իրականացման համար հարկ եղած նիւթական միջոցները չգտնուելէն խնթիցած մտքերու յուսահատ մէկ դործն է, — եւ եթէ յանդուրեմութիւնը կը սիրեմ, խելագարական գործունէութիւնը չեմ կրնար բնորոշիլ: Իբր այդ թող քննադատեն. համաձայն եմ: Բայց պարզ չարագործութիւն, աւազակային սպանութիւն մը նկատել այդ արարքը, եւ այդ՝ առանց փաստի, անխղճութիւն է:

Այդ արարքը ոչ միայն օգուտ չբերաւ հայ յեղափոխութեան, այլ եւ անոր հետեւանքով Վեր. Հնչ. կուսակցութիւնը ողբալի վիճակի մը հասած է:

Տեսարանը զոր այդ կուսակցութիւնը կը ներկայացնէ այս պահուս՝ անուշի է: Եթէ «Ազգ»-ին հաւատանք, Պ. Պարթեւեան եւ իր ընկերներէն ոմանք մահու սպառնալիք ստացած են: Վեր. Հնչ. կուսակցութեան վարիչները իրօք այնքան յիմարացած են որ այդպիսի անիմաստ որոշումներ տալու ելլեն: Ինչո՞ւ սպաննել Պ. Պարթեւեանը: Որովհետեւ անկարագիր է: Բայց զինքը կուսակցութեան մէջ անուղիները առջի օրէն գիտէին Պարթեւեանի ինչքան աննկարագիր ըլլալը. ճիշդ այն պահուն ան կը լողար տիզմի մը մէջ որուն գերագոյն խտացումը եղաւ իրմէ իսկ այժմ «տիրահոյակ» կոչուած Խարազանը. եթէ կը կարծէին թէ — ինչպէս ես ալ պահ մը տանքիջօթաբար ենթադրեցի — ան պիտի կարենար սրբագրուիլ իր թերութիւններէն եւ իր գրական ճիւղերն օգտակար պիտի ըլլային յեղափոխութեան, ինչո՞ւ չգիրացան սանձել ու վարել զինքը, ինչո՞ւ թոյլ տուին որ ան ապուշ, լորձուքոտ, արեւնարբու պայքար մը մղէր ամենուն, անիմաստօրէն, անհարկիօրէն, գոեհիօրէն ամենուն գէմ ինչ որ Վեր. Հնչ. կուսակցութեան դէմ բարձրացուց ատելութիւններու ամենէն բարձր չըջապարիսպը զոր ո եւ է կուսակցութիւն երբեք ճանչցած ըլլայ եւ որ անա այսօր՝ ճգնաժամի պահու մը մէջ՝ ամէն կողմէ կը կանգնի՝ այդ կուսակցութեան կործանումը ցանկալով): Պարթեւեանին այսօրուան ընթացքը բնական հետեւանքն է այդ վարչական երկարատեւ սխալին, եւ անհանգուրժելի կը գտնեմ որ մահու սպառնալիք ուղղուի անձի մը դէմ որ անպատասխանատու է ըստ իս, որովհետեւ ուրիշ կերպ չի կրնար ընել, այդպէս զգալու եւ գործելու դատաւարաբար է ընտ թիւնէն: Ասիկա այնքան անձուռնի կը թուի ինձի, որ չեմ կրնար հաւատալ թէ իրօք այդպիսի որոշում մը տրուած ըլլայ: Բայց «Ազգ»ը ոչ միայն կը հաւատայ ստոր, այլ եւ ինքն ալ փոխադարձ սպանութեանց սպառնալիք մը կը շողացնէ յականէ յանուանէ յիշուած երեք Հնչակեաններու գլխուն: Սուրբան Համբարումն աչքը լոյս:

«Սուրբան Համբարումն» ըսի. գէշ չէր ըլլար որ այդ բոլոր իրարու դէմ մոլեգնած «Հայ»երը, բոլորն ալ, այս անունը երկվայրկեան մը չկորսնցնէի՝ իրենց մտքէն: Հայ Հայու դէմ պայքարը թերեւս այդքան բուռն ու վայրագ պիտի չգոռնար եթէ ամէն Հայ ամէն վայրկեան խորհէր թէ իր բոլոր ատելութիւնը եւ իր բոլոր ուժերը պարտաւոր է կեդրոնացնել Համբարումն ու իր մարմնաւորած ընթացքին դէմ:

Սպանութիւնները Հայերու միջեւ՝ անտանելի, պարզելի երևույթ մըն են: Իրօքականները, Եոյն իսկ եթէ համոզուած էին՝ ատենով թէ Արիիարեան մատնիչի գեր կատարած է, պէտք չէր այնքան թեթեւ փութկոտութեամբ

սպաննել փորձէին մարդ մը որ հակառակ իր բոլոր թերութիւններուն՝ իր անուրանալի ճիւղերով օգտակար ալ եղած է հայ ժողովրդին ու գրականութեան, եւ որ չի կրնար՝ ըստ իս՝ իր ծայրայեղ թեթեւութեամբ կարող է մարթ կատարել գործեր որ մասնութեան համարժէք են: Վեր. Հնչակեաններն ալ աւելի խելացի եւ աւելի ազնիւ բան մ'ըրած պիտի ըլլային՝ եթէ ա՛յս տրամաբանութեամբ վարուելով՝ երկրորդել ուզած չըլլային Իրօքականաց սխալը: Պէտք իսկ չունիմ ըսելու թէ հին Հնչակեանները պէտք չէր սպաննել տային Միսոն ու Չիթեանը. այդ արդէն զուտ ոճիր էր, համբաւական արարք մը: Պիտի ըսեմ սակայն թէ Վեր. Հնչակեան վրիժառուները լաւագոյն պիտի ընէին մասունքին թողով մարդասպաններուն խորանու մը: Եոյն պէս եւ Իրօքականները, փոխանակ վարձօն սպաննել փորձելու, լաւագոյն էր որ բարոյական պատժով դո՛ւնանային: Եարքը դեռ կարելի է երկարել: «Յեղափոխական կարգապահութիւն», «մաքրագործում», «դաւաճանութեան պատուհասում» եւ այլ այսպիսի բառեր պիտի նետեն երեսիս՝ գիտեմ. ես պիտի կրկնեմ իմ յանկերգս. «Հայ Հայու մէջ սպանութիւնը անտանելի, գարշելի է», ինչ ալ ըլլայ զորպէս պատճառը. — իսկ արտասանմանի մէջ՝ ան կրկնապէս դատաւարտելի է եւ վնասաբեր: Անել է այդ ճամբան, եւ մեր ներքին պառակտումները սաստկացնելու եւ օտարներուն մօտ մեզ զղուելի դարձնելու միտքն կը ծառայէ: Հարիւրաւոր հայ մայրեր ու աղջիկներ կան որոնց բռնաբարուած պատուոյն վրէժը չէ լուծուած: Կոխտուած ազգ մը կայ որուն կեանքի ու մահուան հարցը կը մնայ վտանգուած: հայ կորովը ատո՛ր, միայն ատո՛ր պէտք է նուիրէ ինքզինքը: Հայ Հայու մէջ պայքարին հատար խօսքը, գրիչը բաւական են. անգամ, բարոյագուրկ, ազգային գործին արգելք եղող Հայերուն դէմ լաւագոյն ինքնապաշտպանումը՝ անոնց արտաքուստն է գործօն կազմակերպութեանց չըջանալէն եւ բարոյական խարսխումը: Վերջեւ, երբ Հնչակեան Մեները խոզխոզուց ու Իրօքականէ մը, Մուրաա եւ իր ընկերները այդ իմաստուն մեթոտին հետեւեցան՝ զբաւակնով իրենց շարքերուն մէջ փոփոցող վրէժիւնդրական ձգտումները եւ ոճիրին չուզեցին ոճիրով պատասխանել:

Պաղարիւնութիւն, հեռատեսութիւն, ազգային բնոգնանութիւն գերազանցել կուսակցական շահէն, միշտ ի նկատի ունենալ հասարակաց թշնամին եւ ներքին թշնամութիւնները սաստկացնող ոչինչ ընել, — անա՛ ճամբան: Արտասանմանի Հայութիւնը տակնուվրայ ընել, փոխադարձ սպանութեանց պոգալի չըջան մը բանալ, հայ յեղափոխութիւնը միջազգային ոստիկանութեան օրակարգին գլխաւոր հարցերէն մին դարձնել, աս չէ անշուշտ Հնչակեաններուն նպատակը, եւ ինչքան ալ ազգասիրական ըլլան ՚հերքին ձգտումները որ այս ճգնա-

ժամը երեւան բերին , արդիւնքը միայն ու միայն արեւմաբեր է՝ նոյն իսկ ազգային տեսակետով : Տարիներով Armenia հրատարակել ամերիկեան հասարակութեան համակրանքը հայկական դատին վաստակելու համար, եւ առիթ տալ մէկօրուան մէջ ամերիկեան ժողովուրդը կատարել թշնամի դարձնելու Հայոց , յիմարութիւն է :

Կ'ենթադրեմ որ Վեր. Հնչ. կուսակցութեան Վարիչները պիտի դիտնան ապացուցանել իրենց պաղարիւն խոհականութիւնը :

Անհրաժեշտ է այդ վերահաստատելու համար Վեր. Հնչ. կուսակցութեան հաւասարակշռութիւնը : Եւ այդ հաւասարակշռութեան վերահաստատումը պէտք է բաղձայ ամէն Հայ որ ազգասէր է , որովհետեւ այդ կուսակցութիւնը, ինչ թերութիւններ ալ որ ունեցած ըլլայ , իբր « ազգային » կուսակցութիւն՝ արամաքանորէն պէտք է համակրութիւն ու պաշտպանութիւն գտնէ ամէն ազգասէր Հայու մօտ :

Վերջին յօդուածի մը մէջ , կարեւոր դատած էի որ Վեր. Հնչակեան հեղինակաւոր դէմքերէն մին , օրինակ՝ Պ. Սվազեան , դար եւրպա պոռոյտ մը ընէր՝ եւ Լա Հէյի վեհաժողովին առթիւ խորհրդակցական հանդիպում մը տեղի ունենար Մուրատի . Անդրանիկի եւ իր միջեւ : Դրօշակեանները ո եւ է քայլ չառին այդպիսի հանդիպում մը դիւրացնելու համար , եւ իրենց ընդի. ժողովին մէջ Մուրատի ի նպատակ Միութեան հրաւերին ալ ժխտական պատասխան տուին . իսկ Պ. Սվազեան տեղէն չերկրաց : Բայց եւ նորէն չեմ յուսահատած : Լա Հէյի վեհաժողովը պատրուակ մըն էր՝ ինծի համար : Այդ վեհաժողովին առիթն անցաւ , բայց հայկական դատը միշտ կը մնայ բաց , աւելի քան երբեք սղբալի վիճակի մէջ : Առաջարկութիւնս կը կրկնեմ , եւ այս անգամ՝ հետեւեալ ձեւով : Պ. Սվազեան — կամ ո եւ է հեղինակաւոր Վեր. Հնչակեան մը , գոր Հնչակեաններուն կ'իջնայ նշանակել — կուսայ եւրոպա եւ յանուն իր ընկերներուն ինքն իսկ տեսակցութեան մը կը հրաւիրէ Մուրատը եւ Դրօշակեան հեղինակաւոր գործիչ մը , (Անդրանիկը կամ ո եւ է կարեւոր Դրօշակեան մը) : Միութեան խնդիրը չէ այլ եւս որ պիտի յարուցուի այդպիսի տեսակցութեան մը մէջ . յայտնի է որ Դրօշակեանը չեն ուզեր Միութիւն , անօգուտ է պնդել . ատկից դատ , քանի որ Դրօշակեանը ինչպէս եւ հին Հնչակեանը այժմ ընկերվարականութեան մէջ նետդնեմէ աւելի խոր կը մտնին , բացարձակ միութիւնը անկարելի է ազգայնական կուսակցութեան մը եւ ընկերվարական կուսակցութեանց միջեւ : Բայց քանի որ թէ՛ Դրօշակեանը եւ թէ՛ հին Հնչակեանը ընկերվարականութեան մէջ մտնելով հանգրծ՝ բարեբաղդ հակասութեամբ մը՝ հայկական դատը չեն ուզեր լքանել , ուրեմն կարելի է համերայն գործակցութեան համաձայնութիւն մը հայկական դատի մասին : Վեր. Հնչ. կուսակցութիւնը ունի գործունէութեան յատակագիծ մը՝ զոր իր վարիչները տարիներէ ի վեր ուսումնասիրած եւ հա-

սունցուցած են , եւ ունի անձուէրներու բարոյական թանկագին ուժ մը . իր տրամադրած զբաւական ուժը անբաւական է ի գործ դնելու համար այդ ծրագիրը . հայ բոլոր ազգասէրները, հարուստ , աղքատ , կրօնական , աշխարհական, բոլորն ալ այդ կուսակցութեան օգնելու էին . չըրին . — ու յանցաւոր են չըրած ըլլալուն(1) — : Յուսահատ ձեռքով գալարուիլ դարձեալ՝ այդ բոլոր անտարբերութիւնները հալեցնելու համար , աւելորդ է , ժամանակի եւ ուժերու կորուստ է : Դրօշակեան կուսակցութիւնը ունի զբաւական մեծ կարողութիւն եւ բազմաթիւ բարոյական ուժեր . հին Հնչակեանը ունին բարոյական կարեւոր ուժեր եւ որոշ չափով նիւթական միջոցներ : Վեր. Հնչակեան ներկայացուցիչներուն կը պարզէ Վերակազմեալ Հնչակեանց գործունէութեան յատակագիծը , եւ կ'առաջարկէ անոնց որ՝ եթէ համաձայն են աջակցին : Կը կարծեմ թէ՛ տեսակցութեան հրաւերի մը ոչ մէկ հին Հնչակեան , ոչ մէկ Դրօշակեան չի կրնար մերժողական պատասխան տալ : Ու տեսակցութեան մէջ , հարցը, զրուած՝ այս որոշ մասնաւոր, գործնական ձեւով, չի կրնար նպատուստոր լուծում չտանալ : Վեր. Հնչակեանը չեմ կարծիր որ ըսեն թէ իրենց կուսակցական արժանապատուութիւնը թող չի կրնար տալ որ տկարութիւն մը խոտտովանելու , հակառակորդ կուսակցութիւններէ օգնութիւն խնդրելու ձեւ անոնին : Ազատական Թուրքերը, գիտնալով հանգրծ որ հայ յեղափոխական կուսակցութիւնները հակառակորդներ են իրենց , զանոնք հրաւիրեցին Համաժողովի մը եւ անոնց աջակցութիւնը խնդրեցին իրենց ծրագրին . համաձայնութիւն չկրցաւ գոյանալ , այդ ուրիշ հարց է . Թուրքերուն եւ Հայերուն միջեւ բաժանող պատճառներ չատ կան . խնդիրն այն է որ ազատական Թուրքերը այդպէս վարուելով խելացի ընթացք մը ունեցան : Հայ կուսակցութեանց միջեւ անհամաձայնութիւն մը չի կրնար ըլլալ այսպիսի հարցի մը վրայ : Ու կուսակցական ինքնասիրութիւնը պէտք է խոնարհի ազգային գերազոյն շահին առջեւ :

Վեր. Հնչ. կուսակցութիւնը այդպիսի քայլ մ'ընելով՝ վեհանձն ազգասիրութեան ապացոյց մը տուած պիտի ըլլայ , եւ միանգամայն՝ ատոր մէջ պիտի գտնէ լաւագոյն միջոցը՝ զինքը զբուր պարտողներուն գէժ ինքնապաշտպանութեան . « Ահա՛ , պիտի ըսէ Վեր. Հնչ. ներկայացուցիչը իր Դրօշակեան եւ հին Հնչակեան պաշտօնակիցներուն , ահա՛ թէ մենք ինչ ենք , ինչ ընել կ'ուզենք , եւ թէ ինչ ըրած ենք ցարդ՝ Գործը պատրաստելու համար . կ'ուզէ՞ք գործակցիլ : »

Այս է իմ առաջարկութիւնս : Կը ներկայացնեմ զայն՝ համոզուած ըլլալով որ անոր իրա-

(1) Թէ ինչո՞ւ , եւ ի՞նչքան , յանցաւոր են , մանաւանդ մեր հարուստները , պիտի բացատրեմ յաջորդ յօդուածով մը : Մեր հարուստները պէտք չէ որ սպաննուին , բայց իրենք ալ պէտք չէ սպաննեն հայկական դատը :

կանացու մը օգուտ միայն կրնայ բերել ո՛չ միայն Վեր. Հնչ. կուսակցութեան, այլ եւ, ու մանաւանդ, հայկական դատին :

Ա. Չ.



ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԸ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Ի նպաստ Վանայ սովեալներուն, ժընէվի հայ ուսանողութիւնը հայ երաժշտութեան նըլազահանդէս մը տուաւ յունիս Կին՝ քաղաքին Գոնսերվաթուարին մեծ սրահին մէջ, հովանաւորութեամբ ծանօթ հայասէր Պ. Լէոփոյտ Փաւրի : Ուսանողութիւնը հրաւիրած էր Կոմիտաս վարդապետը՝ որպէս զի կազմակերպէ կրգեցիկ խումբը եւ ղեկավարէ նուագահանդէսը : հրաւիրած էր նաեւ Պ. Չօպանեանը՝ հայ երաժշտութեան եւ բանաստեղծութեան վրայ բանասիրութիւն մը արտասանելու, եւ Պ. Շահ-Մուրատեանը՝ իր հօր ձայնին աջակցութեամբ հանդէսին փայլն աւելցնելու : Նուագահանդէսին մասնակցեցան նաեւ Պ. Շէրիտեան, նորբաճաչակ համակրի զարթոն մը, տիկին Շէրիտեան՝ շքեղ տաղանդով դաշնակահարուհի : Խումբը կազմուեցաւ հայ ուսանողներէ եւ ուսանողուհիներէ, որոնց կ'աջակցէին նաեւ քանի մը գեղարուեստասէր Հայուհիներ ու սուս ուսանողներ : Նուագահանդէսը մեծ յաջողութիւն ունեցաւ : « Ժուրնալ տը ժընէվ », « Թրիպլեն աը ժընէվ » եւ « Լա Սիւիս » թերթերը ջերմ համակրութեամբ լի յօդուածներ նուիրեցին անոր : Հասոյթը եղաւ մօտ 2000 ֆր. : Պ. Փաւր, խանգավառուած իր գեղարուեստասէրի եւ մարդասէրի ամենաազնիւ զգացմանց մէջ՝ որոշեց նուագահանդէսին բոլոր ծախքերն իր զրպանէն վճարել, որով ամբողջական հասոյթը ուղարկուեցաւ Վան :

Հօգանի հայ ուսանողներուն Արմենիա նուրահաստատ ընկերութիւնը հրաւիրեց Պ. Չօպանեանը Հօգանի մէջ արտասանել բանասիրութիւն մը Հայոց բանաստեղծութեան մասին : Կոմիտաս վարդապետը հաճեցաւ իր աջակցութիւնը շնորհել այդ բանասիրութեան՝ երգելով մէկ քանի հայ եկեղեցական եւ ժողովրդական երգեր : Համալսարանին վերատեսուչը, Պ. տը Լօէս, ձրիաբար տուաւ Համալսարանին մեծ սրահը, եւ յանձն առաւ ինքն իսկ նախագահել երեկոյթին եւ քանի մը բառով հասարակութեան ներկայացնել գործն ու գործիչները : Մօտ հազար հոգի ներկայ էին, եւ հայ բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը յաղթական տպաւորութիւն մը գործեցին Հօգանցի ունկնդիրներուն վրայ : « Կազէթ տը Հօգան » խանդավառ յօդուածով մը ներբողեց հայ ցեղին գեղարուեստական բարձր կարողութիւնները :

ժընէվի եւ Հօգանի հայ ուսանողները որ ամենամեծ համերաշխութեամբ, ազգասիրական եռանդով ու անձնուիրութեամբ աշխատեցան այդ երկու երեկոյթները կազմակերպելու, ջերմ շնորհաւորութեան եւ գովեստներու արժանի են : — Թուրինի « Մոմէնթօ » լրագիրը Փաւրէթի ստորագրութեամբ ընդարձակ յօդուած մը հրատարակած է les Trouvères Arméniens գրքին վրայ : Խտայացի քննադատը սքանչացմամբ կը խօսի մեր աշուղներու բանաստեղծութեան մասին :

— Հոռոմի Արքայական Մատենապարանի մատենադարանապետ եւ ծանօթ գրագէտ Տօմնիքօ Չամբուլի « Լա Վիթա Լիթթերարիա » թերթին մէջ հրատարակած է իտալերէն թարգմանութիւն մը Պ. Չօպանեանի Հիւանդանոցը քերթուածին :

Բագնալիպը իր Յուլիս-Օգոստոս թիւին մէջ հրատարակած ըլլալով ամբողջական թարգմանութիւնը գուրգերական եւ իտալական թերթերու վերոյիշեալ յօդուածներուն, աւելորդ կը նկատենք կրկնել այստեղ միեւնոյն աշխատութիւնը :

Պ. ՄՈՒՂՈՒՆԵԱՆԻ ՄԱՀԸ

Անակնկալ եւ անզուժ հիւանդութիւն մը մը մէկ ամսուան միջոցի մէջ զգեսանց Պ. Մուղունեանը եւ տարաւ զայն : Մուղունեանի անունը ծանօթ է Անահիթի ընթերցողներուն : Իր թենորի քնքուշ ու փափուկ ձայնը, իր զգայուն երգեցողութիւնը իրեն կը խոստանային փայլուն ապագայ մը : Նուագահանդէսներու մէջ, ինչպէս եւ փարիզեան բարձր դասակարգի սալօններու մէջ, յաճախ երգած էր հայկական երգեր եւ համակրութիւն ու սքանչացում հրաւիրած էր զէպ ի իր ցեղը : Խորին տիրութեամբ է որ կ'արձանագրենք այս կորուստը :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ս. ՉՕՊԱՆԵԱՆ

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Գին 5 ֆրանկ

Le Gérant : FRÉDÉRIC MACLER
Imp. D. DOGHAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.

ԻԱ. ՏԱՐԻ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

Ք Ե Ր Ք Ը

մտնելով իր գոյութեան Ձերդ տարեշրջանը կը մնայ հաւատարիմ իւր նպատակին որ է հայ գրա-
գէտ զասակարգին նպաստամատոյց ըլլալ զարգացման ճամբուն վրայ, ներկայացնելով անոր
ազգային եւ օտարազգի գիտնականաց մտաց գեղեցկագոյն եւ՝ պէս պէս ծաղիկները :
Տարեկան բաժնեգինն է 15 ֆրանք, 6 բուբլի :

ՄԵՐ ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

« Հանդէս Ամսօրեայի » գնոյն փոքր ինչ բարձրանալը կը յուսանք թէ առիթ չ'ըլլար մեր
ձաժանորդաց թուոյն նուազելուն : Հայ գիտնականաց նուիրուած ուսումնասիրութիւնը յայտնի է
մէկալ ամէն թերթերէն Ա.Ի.Ե.Լ.Ի ԲԱ.ՁԱԼԵՐՈՒԹԵԱՆ պէտք ունի, ըստ որում ՄԻԱՅՆ գիտնական
հասարակութեան մատչելի է որ զժբաղդաբար տակաւին փոքրաթիւ քանակ մը կը կազմէ : Սե-
քովսանն պիտի ջանանք « Հանդէսը » միշտ նոյն բարձրութեան մէջ ՊԱ.Հ.Ե.Լ. եւ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ,
եթէ ձաժանորդաց արդէն իսկ անձուկ սահմանը առաւել եւս չանձկանայ :
Այս առթիւ կը խնդրենք մեր այն յարգոյ ձաժանորդներէն, որ տակաւին իրենց անցեալ
տարուան բաժնեգինը վճարած չեն, նոյնին առաքումը փութացընել :

ԽՄԲ. « ՀԱՆԴԷՍԻ », ,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ « ԱՆԱՀԻՏ »Ի

- Թիւ 1. — Նահապետ Քուչակի Դիւանը, սիրոյ երգեր, խրատական եւ այլարանական երգեր, պան-
դուխտի երգեր. Բնական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Ա. Չօպանեան. 3. ֆր
- Թիւ 2. — Մկրտիչ Պեշիկպաշչեանի Բերբուածներն ու ճառերը, ծանօթագրութիւններով հրա-
տարակեց Ա. Չօպանեան. 4. ֆր. 50

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԴՐԿԻՐ

LES MASSACRES D'ARMENIE, témoignage des victimes; recueil de lettres, traduites en
français par A. TCHOBANIAN: préface de GEORGES CLEMENCEAU, Librairie du Mercure
de France. 3 ֆր. 50

L'ARMENIE, SON HISTOIRE, SA LITTERATURE, SON RÔLE EN ORIENT par A.
TCHOBANIAN, avec une introduction d'ANATOLE FRANCE. Librairie du Mercure de France,
1 ֆր.

ZEITOUN, DEPUIS LES ORIGINES JUSQU'A LA GRANDE INSURRECTION DE 1895
par AGHASSI: Traduction française d'A. TCHOBANIAN: préface de VICTOR BERARD
Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

POEMES ARMÉNIENS ANCIENS et MODERNES, traduits en français par A. TCHOBA-
NIAN, et précédés d'une étude de GABRIEL MOUREY sur la Poésie et l'Art arméniens.
2 ֆր.

CHANTS POPULAIRES ARMÉNIENS, traduction française avec une introduction par A.
TCHOBANIAN; préface de PAUL ADAM. Librairie Paul Ollendorff.
Ouvrage couronné par l'Académie Française 3 ֆր 50

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

ԱՆԱՀԻՏԸ կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար (Ամերիկա), 2 ռուպլի (Ռուսիա) :

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 ռուպլի (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագին ղրկել հետեւեալ հասցէին,

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիճիխ	Պարոն Լեւոն Մելիք-Աղամեանց
Բագու	Օրբելեան փողոց, թիւ 24
Ռուսնուզ	» Ստեփան Ալչրճեան
Գանիբէ	» Գառնիկ Մաղմանեան
Ֆիլիպէ	» Միհրան Արզարեան
Գաւրիգ	» Թադւոր Հինդլեան
Ռօֆեկրն	» Վ. Բժշկեան
Իսր Գեմպրիճ	» Տ. Մսաճեան
Իսր Ռօքրքաուն	» Գաբրիէլ Մուշէղեան
Սէնքրլ Ֆօլս	» Կ. Մալխասեան
Չիւակօ	» Նշան Մինասեան
Նեուէ	» Ս. Մուրատեան
Ռսրըր	» Յ. Արողեան
Ֆրէզնօ	» Մինաս Գաբրիէլեան
Նիւ Պրիքէյն	» Գ. Նալպանտեան
Փրովիսէնս	» Ս. Սաչաքլեան
Նիւ, Նորֆ	» Աւագ Կարապետեան
	» Եղիա Գուգուճեան